


ԲԱԳԻՆ Ժ. ՏԱՐԻ 1971 ԱՊՐԻԼ ԹԻՒ 4

digitised by A.R.A.R.@

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Ա. ԱՐՓԻՆԷ . . . . . . . . . . . . . Երբ այլեւս պէտք չունին

Բ. ԿՌԱՆԵԱՆ . . . . . . . . . . . . Երբ Պոլէր կը կարգայինք

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ . . . . . . . . . . . . Սէրը ցանկապատերու տակ

Մ. ԹԱՒՐԻԶԵԱՆ . . . . . . . . . . Խօսք՝ Շիրազին եւ երկրին՝ Նայիրի

Է. Ս. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ . . . . . . . .
Հ. ՅՈՎՍԷՓԵԱՆ . . . . . . . . . . . Ոճրագործին հոգեվարքը

Գ. ՎԱՀԱՆ . . . . . . . . . . . . . Հսկան երբ արթննայ

Ս. ՍԱՐԳԻՍԵԱՆ . . . . . . . . . . Կենսագրական կ'ուզէք

* * * Վերստին յաւելուած

Ա. ՏՕՆՈՅԵԱՆ . . . . . . . . . . . . Պերթրանտ Ռասըլ

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ . . . . . . . . . . . . Յ. Կարապենցի «Անծանօթ հոգիներ»

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ . . . . . . . . . . . . Պ. Սնապեանի «Կորստական թոյներ»

* * * Նշմարներ


digitised by A.R.A.R.@

# ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Ժ. ՏԱՐԻ, ԹԻՒ 4 | ԱՊՐԻԼ 1971 | ՊԷՅՐՈՒԹ

Ա. ԱՐՓԻՆԷ

# ԵՐԲ ԱՅԼԵՒՍ ՊԷՏՔ ՉՈՒՆԻՆ...

*Երբ դուրս ելայ գետնուղիի կայարանէն՝ կծու ու կճան հով մը խայթեց դէմքս ու փախաւ։*

*Օդին մէջ սպիտակ թիթեռներու նման ձիւնի փաթիլներ կը թռչտէին. մայթերուն վրայ իջնելէ առաջ սակայն՝ խանութներուն լուսաւոր պատուհաններէն ինկած ցոլքերուն տակ խելոյն կը հալէին։*

*Իրենց ճոխութեամբ, այլազանութեամբ, երբեմն հետ մրցող ցուցափեղկերը եւ կամ անցորդներու արանոց, նուէրի մը ընտրութեան համար անձկութիւն կամ գոհունակութիւն արտայայտող նայուածքները չէին հետաքրքրեր զիս երբեք։ Նոյնիսկ քիչ մը կ'արգահատէի, թերեւս աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ կը կարեկցէի, երբ կը տեսնէի այր մը՝ կանանց վերարկեկալ պարգեղէններու կամ բրբրու դէզին առջեւ կորած, շուարած...*

*Ինչ որ կը հետաքրքրէր զիս այդ օրերուն՝ մանուկներն էին։ Աշխարհի չարիքներուն անտեղեակ անոնց հոգին կը թեւածէր հեքիաթայինին, անիրականին շուրջ։ Այս եղանակին զիրենք յիշող եւ իրենց այցելող «բարի ծերունիին» խորհրդաւոր մուտքը իրենց շրջապատէն ներս մօտ էր, շատ մօտ ու աղոց աչքերը կը փայլէին հրճուանքով, անհամբերութեամբ ու ակնկալութեամբ։*

digitised by A.R.A.R.@

Փողոց մը վար, մայթի երկայնքին, շարուած էին Ծնունդի ծառերը ու անոնց արձակած բուրմունքը՝ զիս բնութեան ծոցը կը փոխադրէր։

Կիներ, մայրեր իրենց երեխաներով պահ մը կանգ կ՚առնէին անոնց առջեւ, կը վերցնէին հատ մը, կը հարցնէին գինը, կը վերցնէին ուրիշ մը, մանուկներուն շողացող աչքերը անձկութեամբ ու աղերսով կը հետեւէին այդ շարժումներուն ու երբ գնուած էր ծառը՝ իրենց հրճուանքէն գինով՝ ցատկռտելով կը վազէին զայն տանող պատանիին ետեւէն։

Տան մէջ ամէնէն աղուոր անկիւնը կ՚ընտրէին անոր համար։ Կը պճնէին, կը զարդարէին, կը լուսավառէին ու ծառը՝ իր այդ արուեստական գունագեղ աչուկներով կը դիտէր իր շուրջ տիրող խնդութիւնը, մանուկներուն բերկրանքը ու իրեն ցոյց տրուած գուրգուրանքը մոռցնել կու տար անտառէն պոկուած ըլլալու դառնութիւնը...

Բայց տօնական օրերը կ՚անցնէին արագ. ո՛չ մէկ ակնկալութիւն այլեւս իրմէ... Հմայք ու թարմութիւն կորսնցուցած աւելորդ իր մը կը դառնար տան մէջ։ Կը քաշէին վրայէն զարդերը, կը մերկացնէին զինք կոպտօրէն ու կը նետէին փողոց...

Ու ծառերը կ՚իյնային մայթերուն եզերքը, ձիւնին ու ցեխին մէջ։ Երբեմն ալ, տղաք կը բռնկցնէին ու կը վառէին զանոնք ու բարձրացող բոցերուն մէջէն՝ սիրտ ու ականջ ունեցող մը կը լսէր ողբն ու հեծեծանքը անոնց...

Այսպէս խորհրդածելով կը քալէի այդ երեկոյ, երբ զարմանքով նշմարեցի մեր շէնքին մէջ բնակող Տիկին Վարսենը մայրիներու շարքին առջեւ։

Թոռներու տէր տիպար հայ մայրիկ մըն էր ան, որ անհամբերութեամբ իր զաւակներուն այցերուն կը սպասէր։

Օրեր առաջ կը լծուէր աշխատանքի։ Կը պատրաստէր կերակուրներուն ու խմորեղէններուն ամենահամեղները անոնց համար, ու աշխարհը իրը կ՚ըլլար, արեւը իր հոգիին մէջ կ՚իյնար, երբ տեսնէր թոռներն ու զաւակները իր սեղանին շուրջ բոլորուած։ Եւ անոնք, կարծես շաբաթներէ ի վեր զիրար տեսած չըլլային՝ իրարու հետ անվերջ խօսակցելով ու մեծ ախորժակով կուլ կու տային համբերութիւն ու օրերու տքնութիւն պահանջող այդ ախորժահամ ուտելիքները։ Ատեն-ատեն չմոռնալով անշուշտ «Մայրի՛կ, շա՜տ համով է» մը նետել Տիկին Վարսենին, որուն այդ պահուն ունեցած անխառն երջանկութիւնը, եթէ կը պղտորէր, կ՚ամպոտէր՝ պատճառը հայ օճախին, հայ բոյնին մէջ օտար լեզուի տիրապետութիւնն էր...

Պնակները կը դատարկուէին, կ՚ուտէին, կ՚ըմբոշխնէին հայ մայրիկին հոգիէն բխած, սրտին ջերմութիւնովը, սիրոյն անշէջ կրակովը եփած ու մատներուն շնորհներովը համեղցած խորտիկներն ու խմորեղէնները ու կը մեկնէին՝ խոշոր պարապ մը, ամայութիւն մը թողլով անոր շուրջ։

«Կու գան, կ՚ուտեն, կը խմեն ու կ՚երթան», գանգատեր էր անգամ մը իր բարեկամուհիներէն մին ու ինք չէր պատասխաներ։

Նկատեցի, որ Տիկին Վարսենին կորացած ուսերը աւելի էին կքեր ու նայուածքը թէեւ տօնածառերուն յառած՝ բայց անոնց մէջէն հեռացած, կորսուած կը թուէր։

Խորհեցայ, թէ ընտրութեանը մէջ շուարած էր։

— Ծա՞ռ կ՚ուզես գնել, Տիկին Վարսեն, — ըսի մօտենալով. — օգնե՞մ քեզի...

Կարծես ցնցուեցաւ. սթափեցաւ։

digitised by A.R.A.R.@

— Չէ՛, աղջիկս, չէ՛, — պատասխանեց իսկոյն։

— Քրիսմըսին տղոցդ քով պիտի ըլլաս անշուշտ, — աւելցուցի, տեսնելով իր տրտում աչքերը, — թոռնիկներդ կ'ուրախացնեն քեզ. գիտեմ, շատ կը կարօտնաս անոնց։

Պատասխանելու փարատում մը նկատեցի. կարծես ամչցաւ, բայց չկըրցաւ ստել.

— Չէ՛, աղջիկս, — ըսաւ, — դպրոցներուն աս արձակուրդէն կ'ուզեն կոր օգտուիլ. Հարսս Պոսթոն կ'ուզէ երթալ, Քրիսմըսը, Նոր Տարին իրեններուն հետ անցընել. աղջիկս ալ առջի օր հեռախօս բացաւ. «Մա՛մ, — ըսաւ, — Ճէքը կ'ուզէ Ֆլօրիտա երթալ երկու շաբթուան համար, յարմար ատեն է. երբ որ ետ գանք՝ կու գաս շաբաթ մը մեզի կը մնաս»։ Ճահիլ են, թող երթան պտտին, տեղ տեսնան, — աչքերուս մէջ նայեցաւ՝ զաւակներուն հանդէպ մեղադրանք տեսնելու վախով ու աւելցուց, — Քրիսմըսը աս երկիրին տօնն է, մերինը Ծնունդ է, Կաղանդ է... Ալ ես ո՞ւր փնտռեմ հին օրերուն համն ու հոտը... Ամէն օր մէկ է ինծի համար։ Զաւակներս աղէկ ըլլան, առողջ ըլլան, իրենց լաւ լուրերով ես ալ ուրախանամ։

Ու քալեցինք միասին։

Ատեն-ատեն կծու հովը կը ծեծէր դէմքս։ Կը զարմանայի, թէ Տիկին Վարսեն այս ժամուն ու այս օդին դուրս էր ելեր։ Երեւի կ'ուզէր հաղորդուիլ տիրող ոգիէն, խրախճանքի հոսանքէն, շուրջի եռուզեռէն։ Հաւանաբար այդ բոլորին մէջ հին յիշատակներ կը փնտռէր, հին ու քաղցր յուշեր կ'ուզէր կեանքի կոչել ու անոնցմով իր ամայացող հոգին ջերմացնել։

Երկար մազերով երիտասարդ զոյգ մը կ'անցնէր մեր մօտէն.

— Սրունց նայէ, սրունց նայէ, — յարեց գլուխը շարժելով, — վրանին գլուխնին, հագուստ կապուստնին նայէ. աղջի՞կ են, տղա՞յ են, կրնաս նէ ջոկէ։ Թոռներս սկսեր են մեծնալ. ատեղ զաւակ մեծցնելն ալ դժուար է, բէ՛ք դժուար. իրենց հետ մեծերուն հոգերն ալ կ'աւելնան. ամէն օր գէշութիւններուն տեսակները կ'իմանանք, նամուս չմնաց աշխարհքին էրէսը։ Դըպրոցներուն մէջը ուզածնին պիտի ընեն էղեր. չլսուած, չիմացուած բաներ կը պատմեն կոր, մերիններուն վրայ ալ պիչիմսիս բաներ կը տեսնամ կոր...

— Հոգ մի՛ ըներ, Տիկին Վարսեն, — կը ջանամ մտահոգութիւնը մեղմել, — անոնք իրենց ծնողքին հնազանդ հայու զաւակներ, հայու թոռներ են, հայու արիւն կը կրեն ու այդ արիւնը շատ մը չարիքներէ ետ կը պահէ զիրենք...

Կը նայի աչքերուս տարակոյսով։ Բնազդօրէն կը զգայ, կը տեսնէ հըզօր ազդեցութիւնը շրջապատին, միջավայրին, որ մեր առհաւական, ժառանգական դարաւոր առաքինութիւններուն իսկ կը սպառնայ։

— Ամա՛ն, ինչ գիտնամ, — կը հառաչէ, — կը խօսիմ, կը խրատեմ. աչքերուս մէջը կը նային, կը ժպտան։ Կը հասկնա՞ն, չէ՞ն հասկնար, չիտեմ։ Զաւակներս ալ հարկաւ կը խօսին, ամա օգուտ պիտի ընէ՞... Իրենք պիլէ փոխուեր են, ո՛ւր մնաց աս նորերը... Աշխարհքը փոխուեր է եավրում, աշխարհքը փոխուեր է... Սիրախ նեղութենէն՝ զուն քեզի մտածէ, կ'ըսեմ պապի, նայէ քի ձեռքէ ոտքէ չիյնաս, ուրիշներուն պէս ծերանոցի մը անկիւնը չմնաս... «Աստուա՛ծս, կ'աղօթեմ ամէն գիշեր, մարդու վրայ բեռ չըլլամ, օրս հասնի նէ՝ գիշերը պառկիմ, առտուն չարթննամ. շատ բան քաշեցի, ախտարը շատ մի տեսնար ինծի»։

digitised by A.R.A.R.@

Կը քալէր ծանր։ Երկար տարիներու յօդացաւը կը կաշկանդէր ոտքերը․ մարմինը կարծես լերան մը չափ կը ծանրանար սրունքներուն վրայ։

Հեւալով ու յաճախ կանգ առնելով բարձրացաւ սանդուխները։

— Տիկին Վարսեն, — ըսի իր դրան առջեւ, — քանի որ ծերինները հոս պիտի չըլլան՝ մեզի եկէք Քրիսմըսին, ուրախ կ'ըլլանք, ինչո՞ւ առանձին մնաք։

Ժպտեցաւ տրտմօրէն․

— Շատ շնորհակալ եմ, աղջիկս, — մրմնջեց աչքերը ինծմէ պահելով ու ձայնը դողաց, երբ աւելցուց, — չէ՛, չէ՛, մինակ պիտի չըլլամ, մինակ չեմ մնար, ինծի շա՜տ սիրելի, շա՜տ մօտիկ մէկը հրաւիրած եմ…

***

Քրիսմըսէն օր մը առաջ, տօնական օրերու համար պատրաստուած խմորեղէններէն պնակ մը լեցուցինք ու տարի Տիկին Վարսենին։

Յոգնած կ'երեւէր, երբ դուռը բացաւ, բայց ժպիտը կենդանութիւն տուաւ դէմքին։

— Ա՛խ, աղջիկս, ի՞նչ պէտք կար, — ըսաւ, զիս ներս առնելով ու խնդրեց, որ քիչ մը նստիմ։

Իր ճաշակով կահաւորուած, հնութիւն բուրող առարկաներով խճողուած, պզտիկ յարկաբաժին մըն էր իրը։ Ինչ որ զարմանք ու հրճուանք պատճառեց ինծի՝ անկիւնը, սեղանին վրայ դրուած արուեստական տօնածառն էր․ պճնուած ու զարդարուած։

— Աղուոր չկրցեր էի շտկել, — ջանաց ինքզինք արդարացնել յանցաւորի ժպիտով, — է՜հ, մեզի համար աս չափն ալ կը բաւէ…

Թէ ո՞վ էր իր ակնկալած հիւրը՝ չհարցուցի անշուշտ, բայց փութացի զինքը վստահեցնել, թէ շատ սիրուն ծառ մըն էր։

— Գիտնա՜ս, եավրուս, քանի տարուան ծառ է… Ի՜նչ աղուոր ու ի՜նչ անուշ յիշատակներով լեցուն է… Լուսահոգին մեզմէ առաջ եկած էր, Թուղթերը առնելէն ետքը մեզի ալ բերել տուաւ։ Մեր դուշմանին աչքը քոռնայ, օճախը մարի, մենք ի՞նչ գործ ունէինք Ամերիքաները… Մանչս տասներկու տարու էր, աղջիկս ութ։ Քրիսմըսին ինչ ըլլալը չիտէինք․ քանի մը ամիս ետք ամէն կողմ լոյսերու մէջ կը լողար։ Գիշեր մըն ալ լուսահոգին աս պզտիկ ծառը ու նուէրներ առած՝ եկաւ տուն։ «Քրիսմըս է», ըսաւ, հէչ չեմ մոռնար, «աս երկրին էն մեծ տօնն է, հէ՛մ Ծնունդ է, հէ՛մ Կաղանդ է, իրար յիշելու, իրար սիրելու, իրար մօտ, իրար հետ ըլլալու, իրարու բարի կամենալու տօն է», ըսաւ։ Ա՜խ, ինտո՞ր միտքէս անցնէր քի քառասուն օր ետքը զինքը հողը պիտի դնէինք…։ Աշխարհքը փլաւ գլխուս… Լեզու չիտեմ, տեղ չիտեմ… «Վարսեն, լեզուն պէտք է սորվենաս, գիշերները դպրոց պէտք է երթաս», ըսած էր լուսահոգին, մտիկ չէի ըրած։ Պատրաստ դրամը շուտ կը հալի, եավրուս։ Սիրտիս քար կապած՝ գացի դպրոց։ Կնիկ մը կար հոն, «Թէ որ աշխատիլ կ'ուզես՝ մենք գործարան ունինք, քեզի գործ կու տանք», ըսաւ։ Աստուած դուռ մը կը բանայ կ'ըսեն, շիտակ է։ Սկսայ գործել, ծախսերնիս քիչ շատ հանել։ Քրիսմըսը երբոր նորէն մօտեցաւ՝ տղոցս վրայ կը նայէի, սիրտէս արուն կ'երթար։ Քանի՜-քանի՜ հեղ, խանութներուն առաջքը կայնած պատուհանները դիտելնին տեսայ։ Ի՞նչ կրնայի ընել, շահածս հացի դրամ մըն էր…

digitised by A.R.A.R.@

«Ինծի հետ աշխատող քաղցր աղջիկ մը կար. էրէսս կը նայէր, տէրտս կը հասկնար, միտքս կը կարդար. տակաւ մինչեւ օրս կ'օրհնեմ, չեմ մոռնար։

«Քրիսմըսէն օր մը առաջ, գործաւորներուն խոշոր տուփ մը շաքար տուին, չարաթ մըն ալ արձակուրդ։ Մէյ մըն ալ նայիմ աս քաղցր աղջիկը — անունը Ճէնի էր — մեծ ծրար մը ձեռքս տուաւ։ «Վարսեն, — ըսաւ, — ասոնց հէչ մէկուն էս պէտք չունիմ ալ, առ'ր տղոցդ տուր»։ Ծրարը տուն էկայ, ծրարը բացի՝ աչքէս արցունքը աղբիւրի պէս վազել սկսաւ։ Լուսահոգիին աս գնած ծառը վար առի տոլապէն, չոկեցի ասօրուան պէս, տակը շարեցի Ճէնիին տուած գոյնզգոյն թուղթերով կապուած նուէրները, անոնց քով շաքարին խոշոր աղուար տուփը։ Կ'ուզէի լուսահոգիին պատկերը գնել ծառին տակ, չկրցայ, տղոցս մեղքցայ...

«Աղջիկս գրացիին տունէն էկաւ, տղաս ալ խանութպանի մը օգնել էր սկսեր դպրոցէն ետքը, ան ալ ուտելիքներու խոշոր տոպրակ մը բերաւ։ Աս-Քափ տարի է անցեր եավրուս, տղոցս աս օրուան ուրախութիւնը հէչ չեմ մոռնար։ Գիտեմ, լուսահոգին ալ հոն էր, մեզի հետ էր, ուժ կու տար, աչքերս չոր կը պահէր։

«Տղաքս տուփերը բացին. կապոյտ աչքերով, դեղձան մազերով, խոշոր աղուոր տըլի մը աղջկանս համար, գոյնզգոյն պատկերներով գիրքեր մանչուս, տեսակ-տեսակ մատիտներ, ներկեր, ո՞ր մէկը ըսեմ...

«Տարիները անցան, հին օրերը մոռցուեցան. «Մա՛մ, — կ'ըսէր աղջիկս պզտի, — աս ծառը չե՞ս նետեր, ինչո՞ւ կը պահես աս խենթ բանը»։ «Աս խենթ բանը» ինծի համար ծառերուն էն աղուորն էր, ի՛նչ յիշատակներով լեցուն էր, իմ հոգիիս...»

Տիկին Վարսենին ձայնը դողաց, աչքերը լեցուեցան, չկրցաւ շարունակել. քիչ ետք՝

— Պզտի կը մտածեմ... Աս անցած գացած օրերուն կարօտութիւն կար, գիշեր ցերեկ ծանր կը գործէի, սիրտս ցաւով, սուգով լեցուն էր, ամա, զաւակներս ուժ մը կու տային ինծի, յոյս մը կու տային ինծի, տաքուկ, անուշ բան մը կար շուրջս...

Եւ ես մտովի լրացուցի՝ «որ հիմա չկայ...»

***

Քրիսմըսին յաջորդող օրերուն, Տիկին Վարսենը չտեսայ։ Օր մըն ալ, երբ վար կ'իջնէի՝ իր յարկաբաժնին դուռը երեսի վրայ բաց գտայ։ Հետաքրքրուած՝ կանգ առի։ Խօսակցութեան ձայներ կային, քանի մը կիներ ներս դուրս կ'ելլէին կը մտնէին։ Անոնց մէջ նշմարեցի իր ազգականուհին, որ երբեմն կ'այցելէր իրեն։ Զգացի, թէ բան մը պատահած էր. անսովոր բան մը կար ու ներս մտայ սառուցելու համար։

— Ո՞ւր է Տիկին Վարսենը, — հարցուցի վախով համակուած, չարագուշակ կասկածէ մը հալածուած, երբ չտեսայ զինք։

— Օղուլ, չէ՞ք իմացեր... Վարսենը ձեզի օրեր... էրկու օր առաջ հողը դրինք... Քրիսմըսին գիշերը հոս, աս աթոռին վրայ նստած՝ մեռեր է... Հեռախօս կը բանամ, հեռախօս կը բանամ, պատասխան չի կայ, էլայ էկայ, դուռը բանալ տուի... Աղջիկը հոս չէ, տղան հոս չէ, երկուքին ալ լուր ճամբեցինք՝ էկան, թաղեցին ու գացին։ «Տունը ի՛նչ կ'ուզէք, ըրէք», ըսին։ Հին բաներ են... Նայինք որու կու տանք, ինչ կ'ընենք։ Սուրբ կնիկ

digitised by A.R.A.R.@

է էղեր, լուռ իջնէ հողուն. Աստուած աղօթքը լսեց... «Գիշերը քնանայի՛ առտուն չարթննայի», կ'ըսէր ամէն առտու...

Ցնցուած ու չչմած պահ մը շուրջս դիտեցի։ Անկիւնը, սեղանին վրայ էր տակաւին տարիներէն գունատած արուեստական տօնածառը. Ճիւղերը կքած, ոլքած, վրայի զարդերը կարծես արցունքի խոշոր կաթիլներ կամ ծիածանի երանգներով պսպղուն պղպջակներ, որոնք անտարբեր մատներու հպումով պիտի չքանային քիչ ետք։ Ծառին տակ՝ շրջանակուած լուսանկարը իր սիրելի «լուսահոգիին»։ Ձէ՛, աղջիկս, մինակ պիտի չըլլամ, մինակ չեմ մնար, չա՛տ մօտիկ, չա՛տ սիրելի մէկը հրաւիրած եմ... «Ու հոն, անոր առջեւ այն թիկնաթոռը, որուն մէջէն հոգին գացեր միացեր էր ամուսինին...

Ուշագրութիւնս գրաւեց յանկարծ հին ու նոր լուսանկարներու լցուած տրցակը սեղանին վրայ... Ո՛չ, առանձին չէր մնացեր... վերապրեր էր իր ամբողջ կեանքը, ամբողջ անցեալը, զաւակներուն ու թոռներուն մանկութենէն սկսեալ։ Հոն էր նաեւ ինք՝ առոյգ ամուսնոյն կողքին՝ թարմ ու երջանիկ։ Հաւանաբար ժամեր էր անցուցեր այդ լուսանկարներուն հետ, ու հին յիշատակներու քաղցրութիւնը սրտին՝ հրաժեշտ էր առեր իր սիրելիներէն, որոնք այլեւս պէտք չունէին իրեն...

Պահ մը ականջ տուի կիներու խօսակցութեան. անոնց մէջ ամէնէն տարեցը ազգականուհին էր, միւսները բաղդատաբար երիտասարդ՝ կ'ափսոսային, որ տարիքը լեցուած մօր մը անակնկալ մահուամբ՝ զաւակներուն արձակուրդը այդպէս խանգարուեր ու անհամութեանց էր բախեր...

***

Երբ դուրս կ'ելլէի յարկաբաժնէն՝ տխուր մեր դրացի փոքրիկ Ճիմին. կիցեր տալով սանդուխներէն վար կը գլորէր ան այն աղուոր եղեւնին, որ իրենց տօնական օրերը լեցուցեր էր հրճուանքով ու բարիքներով...

Ա. ԱՐՓԻՆԷ

ԲԻՒԶԱՆԴ ԿՌԱՆԵԱՆ

# ԵՐԲ ՊՕՏԼԷՐ ԿԸ ԿԱՐԴԱՅԻՆՔ...

Գիշեր. մեղքի պահը: Սենեակի մը գաղտնիքը: Դուռը կղպուած՝ աշխարհին դէմ: Երկու էակ: Գինիով, սիրով, կիրքերով գինովցած: Կիսամութին, ծիրանի լուսամփոփին տակ, իրարու կողքին երկարած, մերկ… Պօտլէր կը կարդայինք:

Պահը կախարդանք ունէր: Չարին եւ մեղքին ծաղիկները կը փըթթէին: Խորութեան, տեւականութեան զգացում, յաղթողի լիութիւն մը: Այդ էր, կատարը գոյութեան: Անկէ անդին, — չկայ ոչինչ: Այդ էր: Անկէ ետք, տարբերութիւն պիտի չընէր: Կրնար վախճանն ըլլալ, ոչինչ պիտի փոխուէր: Այդ էր յաղթութեան կատարը, այլեւս անկում չկար, գահավիժում չկար: Ետ դարձ չկար: Յաղթանակն էր մարդուն՝ ժամանակին եւ մահուան դէմ: Անջնջելի, անդառնալի, անփոփոխելի: Այլեւս եթէ հազար կեանք ունենայի, — այդ էր: Գերագոյն երջանկութիւնը, որ տիեզերքը կրնար ընծայել: Ուրիշ ոչինչ:

Անմահութի՞ւն.— ինչ ունայն բառ…

Ձիւն, յաւերժական էութիւն:
Երգս կը նուիրեմ քեզի, որովհետեւ դուն ես վերջին յաղթանակը: Հրաբուխները պիտի մարին, կիրքերը սառին, տենդերը հետըզհետէ նուաղին, դուն պիտի տեւես: Պիտի ծածկես երկրագունտը ամբողջովին: Յաւերժօրէն: Տեղ մը, խորը, — անհուններս: Յաւերժօրէն պիտի պառկիմ այնտեղ: Ի՞նչ հեգնանք: Քերթուածս այս, որ կ'արձանագրէ պատմութիւնս, պիտի սառած ըլլայ ծածկոյթիդ տակ:

Մխիթարանք մ'ունիմ, սակայն: Անմահութիւնը, որուն այնքան կը տենչանք, կարեւոր է այնքան ատեն, որ կ'ապրինք: Մեռնելէս ետք, անհուններս, քերթուածս, տրոփումը սրտիս, ժամանակին մէջ պիտի տեւեն, — թանձր ու ցուրտ ծածկոյթիդ տակ, — թէեւ լսող պիտի գոյութիւն չունենայ: Էականն այն է, որ ես գիտեմ ու կը զգամ, որ ինծմէ բան մը պիտի մնայ միջոցին մէջ ու ժամանակին, եւ գինով եմ կեանքով…

*Լոս Անճելըս*

digitised by A.R.A.R.@

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

# ՍԷՐԸ
# ՑԱՆԿԱՊԱՏՆԵՐԻ ՏԱԿ

Այդ օրը, նա դպրոց պիտի չգնար։ Բայց գնաց եւ գիշերային անքնութիւնից ստիպուած, դասարանում, բոլոր դասերի ժամանակ, ննջեց։ Նա ճըգնում էր չանել այդ, բայց չէր յաջողւում իրեն։ Վերջապէս սկսուեց գերմաներէնի ժամը եւ Ելիզաւետա Մարկովնան ներս մտաւ։ Արամը թէեւ շփոթուեց, բայց անմիջապէս հաւաքեց իրեն։ Նա դեռ երբեք իր սիրուհուն այդքան գեղեցիկ չէր տեսել։ Դպրոց նա չէր կարող չգնալ։

Ելիզաւետա Մարկովնան աշխատում էր նրա կողմը չնայել, իսկ նա էլ աշխատում էր չքնել, մինչեւ որ նրանց միջեւ սկսուեց մի խօսակցութիւն, որն արտաքնապէս պարզ ու անմեղ էր դասարանի համար, բայց որից նրանք մեծ ու խոր բաւականութիւն զգացին, վերապրելով իրենց սիրային գիշերը։

— Արամ, դուք ննջում էք, — ասաց Ելիզաւետա Մարկովնան ձեռքն նրա ուսին դնելով, որովհետեւ կարօտ ունէր այդ անելու։

Նա սթափուեց, աչքերը բացեց եւ վեր թռաւ տեղից.

— Այո, Ելիզաւետա Մարկովնա։

— Ինչո՞ւ, հենց այնպէ՞ս, — անմեղօրէն ժպտաց գեղեցկուհին։

— Ամբողջ գիշերը չեմ քնել, Ելիզաւետա Մարկովնա։

— Ի՞նչ էիք անում, որ չէք քնել, երիտասարդ։

— Կարդում էի...,

— Ի՞նչ էիք կարդում...։

— Մի վէպ, Ելիզաւետա Մարկովնա։

— Ի՞նչ լեզուով...։

— Գերմաներէն...։

— Հետաքրքրակա՞ն էր...։

— Անսահման, Ելիզաւետա Մարկովնա... Մի վէպ, որը կարդալու համար արժէ ծնուել...։

— Վերջացրի՞ք։

— Դեռ նոր եմ սկսել, Ելիզաւետա Մարկովնա...։

digitised by A.R.A.R.@

— Լաւ, միւս անգամ քիչ կարդացէք, որպէսզի դասարանում չքնէք:

— Անհնար է, Եղիզաւետա Մարկովնա....

— Լաւ մի վէպը, աւելի կարեւոր չէ, քան պաշտօնական դասերը, Արա՛մ, — հրճուանքով քարոզ կարդաց գեղեցկուհին:

— Ինձ համար այդ վէպը վեր է ամէն բանից, Եղիզաւետա Մարկովնա....

Գեղեցկուհին բարձր ծիծաղեց եւ դարձաւ դասարանին.

— Տեսնո՞ւմ էք, այս է ձեր դասընկերը: Երբեմն խելացի, երբեմն յիմար եւ ամբողջովին վիպապաշտ:

Նոյն երեկոյեան, երբ նա իր սիրուհու հետ պառկել էր նրա անկողնում, նրանք յիշեցին իրենց այդ երկիմաստ խօսակցութիւնը եւ ծիծաղեցին:

— Ես սկսեցի այդ խօսակցութիւնը եւ յետոյ վախեցայ, որ պիտի մատնենք մեզ: Բայց շնորհիւ քո երեւակայական մտքի, ամէն ինչ յաջող վերջացաւ, — ասաց նրա սիրուհին՝ կրծելով նրա մերկ ու նիհար ուսերը:

— Երբ մենք ամուսնանանք, այլեւս կարիք չենք զգայ ծածկելու մեր սէրը, — ասաց նա խանդավառ, իր հերթին գգուելով սիրուհուն:

Եղիզաւետա Մարկովնան ծիծաղեց այնպէս, ինչպէս ներողամտաբար ծիծաղում են մէկի միամիտ արտայայտութեան վրայ:

— Մշտատեւ սէ՛ր եւ ամուսնութի՛ւն, — ծաղրեց նա:

— Ի՞նչ է: Վա՞տ է, — հարցրեց Արամ տարակուսանքով:

— Հին մտայնութիւն: Ծիծաղելի եւ ձանձրալի:

— Ո՞վ է այդպէս կարծում, — զարմացած հարցրեց նա:

— Ես, Արամ:

— Դու չե՞ս ընդունում ամուսնութիւնը որպէս սիրային մնայուն համաձայնութիւն:

— Ժամանակավրիպութիւն է այդ, Արա՛մ:

— Ո՞ւր:

— Եւրոպայում:

— Հայաստանում՝ ո՛չ:

— Ես եւրոպացի եմ, Արամ:

— Իսկ ես հա՛յ եմ, Եղիզաւետա Մարկովնա:

— Լիզա, — ուղղեց գեղեցկուհին:

— Ուրե՞մն, — պաղ ու տարտամ հարցրեց նա, եւ սիրուհուն բաց թողեց իր գրկից:

Երիտասարդ օտարուհին լրջօրէն վախեցաւ իր սիրեկանի վրայ իջած այդ պաղութիւնից: Այդ հայ տղան նրա համար անհունօրէն գրաւիչ էր, հետեւապէս եւ ցանկալի: Նա երջանիկ էր նրա հետ եւ չէր ցանկանում կորցնել այդ երջանկութիւնը: Եւ նա փորձեց գործադրել իր ամբողջ հրապուրանքը.

— Ե՞րբ ես ուզում դու ամուսնանալ ինձ հետ, դու, anachronist, — սիրեկանին հպուեց նա:

— Դպրոցն աւարտելուց անմիջապէս յետոյ:

Իր կապոյտ աչքերում սիրային մշուշ, իր չքնաղ դէմքին սիրային վայելքի խանդակաթ խռովում, կինը նրան նայեց սիրակէզ հայեացքով.

— Մինչեւ քո դպրոց աւարտելը դեռ շատ ամիսներ կան: Իսկ հիմա մենք պէտք է աշխատենք վայելել մեր սէրը, որն ամէն մէկին չէ տրուած.... Արի՛....

Արամի սիրտը նորից եռացող հրաբուխի վերածուեց:

digitised by A.R.A.R.@

— Բայց… բայց…։

— Ա՛հ, արի՛…, — Նրան ձգուեց կինը։ Գրկեց նրա գլուխը եւ սկսեց համբուրել նրա քունքը, վիզը, ծնօտի անկիւնը, նրա ուսերը։

Նա անմիջապէս մոռացաւ քիչ առաջ տեղի ունեցած իրենց սկզբունքային վէճը։

Թ.

Ելիզաւետա Մարկովնան կամ Լիզան, ինչպէս որ Արամը փաղաքշօրէն կանչում էր նրան, առատօրէն իր գեղեցկութեան եւ սիրային բարեմասնութիւններն էր շնորհում հազիւ երիտասարդութեան շեմքին ոտք դրած գրաւիչ դէմքով իր սիրեկանին, եւ երջանիկ էր։

Անհունօրէն երջանիկ էր նաեւ Արամը։ Թէեւ անկողինային սիրոյ մէջ, նա, առաջին անգամ որս ճարած, երիտասարդ վագրի էր փոխւում, բայց երբեք չէր կորցնում իր այն հոգեզգացութիւնը, որ անկեղծօրէն ու անդարձօրէն սիրում էր այդ տարիքով իրենից մեծ ու գեղեցիկ օտարուհուն։ Այդ սէրը միշտ կար նրա հետ։ Իր սիրոյ կայունութիւնը նա առանձնապէս բացորոշ զգում էր, երբ ամէն լուսաբացին նա թողնում էր վարդագոյն մորթով եւ հրաշակերտ մարմնամասերով իր սիրուհուն ու փողոց դուրս գալիս։ Նման դէպքերում առաւօտեան պաղը, ինչպէս, գինովից գինովութիւնը, նրանից զատում էր տարփանքն ու անկողինային վայելքի զգացումները, եւ նրան կանգնեցնում կեանքի կոշտ ու անհեթեթ իմաստի առջեւ։ Բայց անհեթեթութեան այդ հասկացողութեան մէջ, նա նորից զգում էր այդ օտարուհու նըկատմամբ ունեցած իր սէրը եւ նրա կայունութիւնը։

Արամի սիրոյ մեծութեան եւ կայունութեան մէջ, մեծ դեր էր խաղում նաեւ ինքը՝ Ելիզաւետա Մարկովնան, ո՛չ միայն իր արտաքին գեղեցկութեամբ, այլեւ որպէս անձ, որպէս հոգի։ Նա էլ մեծ չափով կանացի ճըշմարիտ հոգու կարիք էր զգում։ Ճիշդ է, հետագայում Ելիզաւետա Մարկովնան նրան խոստովանեց, որ ինքը ջանք է թափել նրան սիրահարեցնելու իր վրայ, բայց այդ չէր պակսեցնում նրա կանացիական արժէքը, քանի որ այդ կնոջ բնոյթն է ներկայացնում։

Այդ օտարուհին կրթուած ու դաստիարակուած լինելուց բացի, իմացական էր, խոհուն եւ իրերն ու երեւոյթները ոչ թէ արտաքինից դատելու, այլ նրանց խորքը թափանցելու ընդունակութեամբ օժտուած։

Յետոյ նա սիրում էր հայ ժողովրդին, որը մեծ նշանակութիւն ունէր Արամի համար։

Միւս կողմից էլ նա օժտուած էր իրական կնոջ հոգեկան զգայուն յատկութիւններով, որոնք այդքան ազդում են տղամարդու վրայ։

Լինելով Արամի սիրուհին, նա միաժամանակ նրան հայ մեծ քրոջ խընամք էր տանում եւ ուշադրութիւն ու հոգացողութիւն յատկացնում։

— Արամ, հանի՛ր վերնաշապիկդ, ես ուզում եմ լուանալ օձիքը, — ամէն անգամ առաջարկում էր նա։

— Ո՛հ, Լիզա, ես միայն այսօր եմ հագել այն, — տրտնջում էր նա, եւ յուզւում։

Սակայն, նա տեղի չէր տալիս։ Մօտենում էր նրան, շոյում նրա մազերը, ինչպէս մի երեխայի, իր մետաքսեայ դէմքը կպցնում էր նրա դէմքին եւ զգուշութեամբ արձակում էր նրա վերնաշապիկի կոճակները։

digitised by A.R.A.R.@

— Միայն օձիքն, Արամ, — համոզում էր նա։

Յորդացած զգացումներից թացացած աչքերով, նա հետեւում էր իր սիրուհուն, որն իր շարժուձեւերով ու կեցուածքով, թւում էր, թէ պալատում էր մեծացել։ Նա տեսնում էր, թէ ինչպէս նա իր նուրբ մատներով խնամքով լուանում էր իր շապիկի օձիքը, մատներով հարթում էր այն, ապա հարթում իր այտի վրայ եւ յետոյ քարիւղավառի վրայ տաքացրած արդուկով լրացնում իր աշխատանքը։

— Հանի՛ր կօշիկներդ, Արամ, — մեղանչական ժպիտով դիմում էր գեղեցկուհին նրան։

Նա արդէն փորձից գիտէր, որ նա ուզում է առնել իր գուլպաները, մաշուած տեղերը լցնելու համար։

— Ո՛հ, ոչ Լիզա։ Խնդրում եմ, որ ոչ, — զանգատւում էր նա ու յամառում։

— Լա՛ւ։ Այն ժամանակ ես, ինքս, — ասում էր երիտասարդ կինը եւ ուզում էր ծնկի գալ յատակին, նրա առջեւ, արձակելու համար կօշիկների կապերը։

— Օ՛, ո՛չ... Օ՛, ո՛չ, — սարսափում էր նա եւ թեքուելով՝ արագ-արագ հանում էր կօշիկները եւ գուլպաները։

Ելիզաւետա Մարկովնան ծիծաղում էր եւ խառնում նրա խիտ ու անհանդիստ մազերը, խանդաղատանքով․

— Եղակի աղայ։

— Ինչո՞ւ։ Որովհետեւ թոյլ եմ տալիս, որ դու լցնես իմ գուլպանե՞րը, — մի օր հարցրեց նա։

— Ո՛չ, — ծիծաղեց նրա սիրուհին, — որ դու սարսափում ես, թէ ես կարող եմ հանել քո կօշիկները։

— Այդ երբեք չի լինի, — ասաց նա։

Սակայն, նրա սիրուհին նրա համար մի այլ բան էր անում, որի հետ նա երբեք չկարողացաւ հաշտուել։

Գիշերները, երբ նա սիրախաղերից յոգնած մի քիչ քնում էր, Ելիզաւետա Մարկովնան կամացուկ իջնում էր անկողնուց, նրա կօշիկները տանում առաջին սենեակը, մաքրում ու փայլեցնում եւ իրենց տեղը դնում։

Նման դէպքերում նա զանգատւում էր իր ամբողջ անկեղծութեամբ։ Բողոքում էր, սպառնում էր իր սիրային կապերը կտրել նրա հետ, բայց ոչինչ չէր օգնում։

Մի օր էլ, երբ նա հագնուել էր եւ պատրաստւում էր հեռանալու, փոխանակ գոռալ-կանչելու, նստեց անկողնու եզրին, գրկեց սիրուհուն եւ հարցրեց խեղճ-խեղճ․

— Ինչո՞ւ ես անում այդ, Լիզա՛։

— Ի՞նչը, Արա՛մ, — աչքերը խուփ ու քնատ հարցրեց գեղեցկուհին։

— Կօշիկներս, Լիզա։

Կինը գրկեց նրա վիզը եւ նրա գլուխը քաշեց դէպի իրեն․

— Ականջդ մօտ բեր, Արամ։

— Հա՛, — սիրուհու ցանկութիւնը կատարեց նա։

— Սիրում եմ մի բան անել քեզ համար, Արամ։ Մեծ բաւականութիւն եմ զգում դրանից, — նրա ականջին այրելով շշնջաց երիտասարդ կինը։

— Խնդրում եմ այս մէկը չանես, Լիզա։

digitised by A.R.A.R.@

— Ամէն ինչ, ինչ քեզ է վերաբերում, Արամ, — նորից էր շշնջում նրա ականջին այրեց գեղեցկուհին։

Ճիշդ է, նա ամուսնական փորձ չունէր, բայց զգում էր, որ ճշմարիտ կինն Եղիզաւետա Մարկովնայի պէս պիտի լինէր։ Այդ ոչ թէ նրա համար, որ մաքրէր նրա կօշիկները, որ նա ամենեւին չէր սիրում, այլ նրա պէս զգայուն, ուշադիր եւ հոգատար, թէկուզ ամէնից փոքր բաների մէջ։

Նրա հօրեղբայրն, որ նրան անչափ սիրում էր եւ ցանկանում էր նրան որքան, որ հնարաւոր է ծանօթ պահել կեանքի եւ մարդկանց վերաբերեալ, մի օր կանանց մասին խօսելիս ասաց.

— Տղամարդիկ այդ մասին չեն ասում իրենց կանանց, բայց շատ կանայք էլ չգիտեն կամ գիտեն, բայց անգիտանում են, թէ ինչ յուզում է առաջացնում տղամարդու մէջ իրենց կանանց կողմից, ասենք, լուացուած ու արդուկուած գրպանի մի հասարակ թաշկինակի հոգատար մատուցումը։ Ուզում եմ, որ հաւատաս, Արամս, որ ոչ մի նոր զոյգ գուլպայ իմ ոտքերն այնքան տաք ու հանգիստ չեն պահում, ինչպէս հօրեղբօրդ կնոջ ձեռքով մաշուած տեղերը լեցուած գուլպաները։ Այդ այդպէս է, որովհետեւ զգում եմ, որ նա այդ արել է սէրից եւ հոգացողութիւնից ելնելով իմ նկատմամբ։

## Ժ.

Մայիսի վերջերին, մի օր գերմաներէնի դասին, նա իր տետրակում երկտող գտաւ, որով նրա սիրուհին յայտնում էր, որ նա այդ երեկոյեան չի կարող այցելել նրան, քանի որ նա իր մի ընկերուհուց հեռագիր է ստացել, որով նա յայտնում է, թէ մի քանի օրով հիւր է գալիս եւ նա երեկոյեան կայարան պիտի գնայ ընկերուհուն ընդունելու համար։

Նա աւելի գէշ լուր չէր կարող ստանալ, քանի որ նրա սէրն իր սիրուհու նկատմամբ բազմապատկուել էր եւ գիտէր, որ չկարողանալով այցի գնալ նրան, այդ մի քանի օրը ծանր էին անցնելու իր համար։ Նա ատեց այդ երկտողը, ատեց իր սիրուհու ընկերուհուն եւ ամբողջ դասին նա մնաց մըռայլ, չնայած Եղիզաւետա Մարկովնայի քաջալերիչ հայեացքներին։

Դասամիջոցին նա ժամանակ գտաւ եւ իր սիրուհուն հարցրեց բարկութեամբ.

— Քանի՞ օր է նա մնալու քեզ հետ...։

Նա մի քիչ մտածեց.

— Երեւի մէկ շաբաթ։

— Մէկ շաբա՞թ, — բոլոր զգուշութիւնները մոռանալով աղաղակեց նա։

Եղիզաւետա Մարկովնան ծիծաղեց եւ հեռացաւ։

Նա այդ ամբողջ օրը տառապեց։ Երեկոյեան նրա սիրային տագնապն աւելի մեծացաւ, երբ սկսեց մօտենալ նրանց հանդիպման ժամը։ Մէկ ժամից յետոյ, ըստ նրանց հաստատուած պայմանադրութեան, նա այցի պիտի գնար իր սիրուհուն, եթէ չլինէր նրա ընկերուհին։

«Թերեւս չի եկել նա։ Ամէն բան կարող է յետաձգել նրա ժամանումը», — իր այդ մտածումից ուրախացած՝ տեղից ելաւ նա ու գնաց։

Սէրը, կարօտը եւ անձկութիւնն այնքան էին շփոթել նրա միտքը, որ նա գնում էր ու չէր մտածում, թէ ինչպէս պիտի ստուգէր իր սիրուհու ընկերուհու այցը։

digitised by A.R.A.R.@

## ԺԱ.

Ելիզաւետա Մարկովնայի տան բակի դրան առջեւ էր, որ նա կանգնեց եւ հարցրեց ինքն իրեն, թէ ինչո՞ւ է եկել եւ ի՞նչ պիտի անի հիմա։

Սկզբում նա ուզեց մի պատրուակ բռնել, գնալ տեսնելու, թէ ի՞նչ է անում իր սիրուհին։ Բայց ճանաչելով իրեն, որ ինքը կեղծել չգիտէ, եւ հենց ինքը պիտի մատնի իր կեղծիքը, թողեց այդ միտքը։ Մտածեց գնալ եւ ծածկորէն լուսամուտից ներս նայել, բայց ամաչեց ինքն իրենից, լրտեսութիւն անելու համար։

Սակայն, սէրը, կիրքը եւ կասկածամտութիւնը ստիպում էին նրան մի բան անել։ Եւ նա առանց նորից իրեն հաշիւ տալու բակի դռնից ներս մտաւ։

Երկյարկանի մեծ տան բնակիչները դեռ չէին քնել եւ երեւի մտադիր էին դեռ երկար նստել։ Բոլոր բնակարանների լուսամուտները բաց էին եւ լուսաւորուած։ Լսւում էր ուրախ խօսակցութիւններ։ Նա, ինչպէս միշտ, փոքրիկ պարտէզի ծառերի արանքով գաղտագողի գնաց եւ կանգնեց Ելիզաւետա Մարկովնայի առաջին սենեակի պատշգամբի վրայ բացուող պատուհանի առջեւ։ Սակայն, թէեւ լուսամուտի փեղկերը բաց էին եւ ներսում լոյս կար, բայց նա ոչինչ չկարողացաւ տեսնել, որովհետեւ վարագոյրներն իրար վրայ էին քաշուած։

Նա շրջանցեց տան ծայրը եւ գնաց կանգնեց յետեւի կողմի լուսամուտի առջեւ։ Այդտեղ նա ծածկուեց եղրեւանու մի թփի խիտ տերեւներում եւ վիզն երկարացնելով սկսեց դիտել սենեակի ներսը։

Ելիզաւետա Մարկովնան մենակ չէր։ Իրապէս, նրա ընկերուհին հիւր էր եկել եւ այժմ նրանք սեղանի առջեւ դէմ-դիմաց նստած, թէյ էին խմում եւ զրուցում իրենց վերաբերող հարցերի շուրջ։

Նա ուզում էր յետ դառնալ, երբ հիւրը խօսքը փոխեց եւ նրանց միջեւ սկսուեց մի խօսակցութիւն, որը տեղի է ունենում սովորաբար մտերիմ ընկերուհիների միջեւ, երբ նրանք վստահ են, որ իրենց կողմնակի լսող չկայ։

— Հը՛, ինչպէ՞ս են գնում սիրային քո գործերը հայկական այս քաղաքում, — ծիծաղելով հարցրեց հիւրը տանտիրուհուն։

— Լաւ, — իր հերթին ծիծաղեց Ելիզաւետա Մարկովնան։

— Լա՞ւ, — զարմացաւ հիւրը, մի՞թէ քո մէջ հոգեփոխութիւն է կատարուել տղամարդու նկատմամբ...։

— Երեւակայիր, որ այո՛։ Ես հանդիպել եմ մէկին, որի հոգու հետ իմ հոգին համընկնում է ճիշդ այնպէս, ինչպէս գետի ջրերն իրենց ափերի հետ։

— Հասկացայ։ Դու երեւի հանդիպել ես արտակարգ արտաքինով մի ուսուցչի քո դպրոցից։ Ուսուցիչները բարեկիրթ են լինում։

— Ո՛չ, — չարունակեց ծիծաղել Ելիզաւետա Մարկովնան, — մի ուսանող աւարտական իմ դասարաններից մէկից...։

Զարմանքից, հիւրը թէյի գաւաթը դրեց սեղանի եզրին, ափերը միացրեց իր նիհար կրծքի դիմաց եւ բացագանչեց.

— Ա՛հ, Լիզա՛... Քո ուսանողը։

Ելիզաւետա Մարկովնան հիւրին նայեց մեղանչական հայեացքով.

— Այո՛, Կարոլին։ Գիտես մեզ՝ կանանց։ Մի տղամարդու կանանաւոր

digitised by A.R.A.R.@

դիմագծեր, միպական յուզում յարուցող հայեացք, աչքերում ազնուութիւն եւ վստահութիւն, եւ մենք արդէն կորցնում ենք մեր գլուխները... Այդպիսի մէկն է իմ այդ ուսանողը, որի հետ ես ամիսներ է ինչ սիրային կապի մէջ եմ գտնւում... Ճիշդ է, նա հազիւ քսան տարեկան կայ, բայց լայն ինքնակրթութիւն ունի եւ իմ տարիքին համապատասխան հասունութիւն...։

Հիւրը ժպտաց ներողամիտ։

— Բայց Լիզա, երբ մենք դպրոցականներ էինք, դու արուեստագէտներին էիր գերադասում։

— Նա իրեն մարդկային վշտի բանաստեղծ է համարում, Կարոլին։

— Իրեն համարո՞ւմ է, թէ գրում է։

— Գրում է։

— Յաջո՞ղ են։

— Դեռ դժուար է ասել։

— Սիրո՞ւմ ես նրան։

— Ես նրան չեմ ասել, որ սիրում եմ։

— Իսկ նա՞։

— Նա ինձ սիրում է այնքան շատ, որ խնդրում է, որ ամուսնանանք։

— Գիտէ՞, որ տարիքով իրենից մեծ ես։

— Գիտէ։

— Ո՞վ է գրաւիչ։

— Հեքիաթային...։

— Աւելի գրաւիչ քան Վալտէր Ֆոն Բլաուբէրգէ՞րը...։

— Վալտէր Ֆոն Բլաուբէրգէրը գիտնալով իր գրաւչութիւնը, երես էր առել...։

— Դու դեռ չարունակո՞ւմ ես սիրել Ֆոն Բլաուբէրգէրին։

— Ո՛չ, ատում եմ նրան։ Իմ ամուսնութիւնը նրա հետ թիւրիմացութիւն էր։

— Ի՞նչ է քո այս նոր... Ինչպէ՞ս անուանեմ... Սիրային բարեկամի անունը։

— Արամ։

— Արա՞մ։ Գեղեցիկ է հնչում։

— Բոլոր հայկական բոլոր անունները գեղեցիկ են հնչում։

— Ինչպէ՞ս գիտես, որն է բուն հայկական անունը եւ որը՝ ոչ, — ծիծաղեց հիւրը։

— Արամն է բացատրել։

— Ա՜...։

— Ի՞նչ։

— Ոչի՛նչ... էլ ի՞նչ գիտես այս ժողովրդի մասին։

— Շատ քիչ բան։

— Բայց եւ այնպէս։

— Հայերն իրենք իրենց աշխարհի առաջին քրիստոնեայ ժողովուրդն են համարում...։

— Եւ հպա՞րտ են դրանով։

— Այո, եւ խարուած։

— Խարուած, քրիստոնէութեա՞ն կողմից։

— Ո՛չ։ Այսպէս կոչուող, ժողովուրդների բախտը տնօրինող եւ արեւմտեան «մեծ» պետութիւնների կողմից։

digitised by A.R.A.R.@

— Այդ, նորից քո Արա՞մն է ասել։

— Այո, եւ հայրս է գրել իր ժամանակին։

— Էլ ի՞նչ է ասել, քո այդ Արամը։

— Արամը թէեւ շատ է սիրում իր ժողովրդին, բայց իմ դիտումներն եւս ցոյց են տուել, որ այս ժողովուրդը Արեւելքի ամէնից լուսաւոր ժողովուրդն է։ Նոյն սահմանումն է կատարել նաեւ հայրս։

— Հայրդ ճանաչո՞ւմ էր հայերին։

— Այո։

— Բայց նորից, Լիզա, հայերի հայրենիքն Ասիան է։

— Ոչ։ Եւրոպայի սահմանը կովկասեան լեռնաշղթայի վրայ չի վերջանում, ինչպէս որ գծել է խելապատակի մէկը, այլ Հայաստանի եւ Փոքր Ասիայի վրայով նորից միանում է Եւրոպային։

— Ես տեսնում եմ, որ դու ամէն կերպ աշխատում ես հայերին եւրոպացիներ դարձնել, բայց քո գծած սահմաններով Թուրքիան էլ Եւրոպայի մասն է դառնում, — ծիծաղեց հիւրը։

— Ոչ։ Հայերը թ՛ե ծագումով, թ՛ե իրենց հայրենիքով եւս եւրոպացիներ են, իսկ թուրքերն Ասիայի խորքերից եկած մոնղոլներ։ Այդ նրանք են Հայաստանը Ասիա դարձնողները։

— Թուրքերը գերման ժողովրդի բարեկամներն են, — հենց այնպէս ասաց հիւրը։

— Արամը մի օր մէկ բառով բնորոշեց թուրքին եւ այդ ճշմարիտ է։ Նա ասաց՝ թուրքը բորենի է։ Արդ, բորենին ինչպէ՞ս կարող է բարեկամ լինել մէկին։ Թուրքը ագէտ է, ծոյլ է, սմսեղուկ է եւ փողոցային մուրացկան։ Թուրքն անամօթ է ու անազնիւ։ Մէկին տուՆՆ է մտնում հաց ուզելու, եթէ տանը մարդ չկայ, թռցնում է այն՝ ինչ ձեռքի տակ է։ Այդ արեան փաչխառու «մեծ» պետութիւններն են աշխատում թուրքին մի կերպ «մարդ» դարձնել։

— Ես տեսնում եմ Արամը քեզնից իր ժողովրդի քարոզիչ է դարձրել։ Բայց չարունակիր, — ասաց հիւրը։

— Հայերն ազնիւ են ու անկեղծ։ Աշխատասէր են ու շինարար…։

— Աւելի աշխատասէր, քան գերմա՞ն ժողովուրդը։

— Ինձ դժուար է ասել։ Բայց գիտեմ, որ հայ մի տղամարդ պատրաստ է օրը քսանչորս ժամ աշխատելու, միայն թէ՝ կարողանայ իր ընտանիքին համար բարւոք վիճակ ստեղծել եւ իր երեխաներին կրթութեան տալ։

— Լիզա, ես տեսնում եմ, որ դու պատրաստւում ես այս ժողովրդի հարսը դառնալու, — ծիծաղեց հիւրը։

— Ո՛չ։ Այս ուսումնական տարուայ վերջին ես հեռանալու եմ այստեղից։

— Ո՞ւր ես գնալու։

— Դեռ չգիտեմ։

Ընկերուհիները լռեցին, իսկ Արամն ուզում էր, որ նրանք խօսէին։

— Նոր թէյ ուզո՞ւմ ես, — ընկերուհուն հարցրեց Եղիզաւետա Մարկովնան։

— Այո, — գաւաթը տանտիրուհուն պարզեց հիւրը։

— Խմի՛ր։ Այստեղի ջուրը հրաշալի է, հետեւապէս այդ ջրից եփուած թէյը։

digitised by A.R.A.R.@

— Ինչպէս երեւում է նաեւ այդ ջուրը խմած երիտասարդութիւնը, — ծիծաղեց հիւրը։

— Ի՞նչ ես ուզում ասել, — ծիծաղեց նաեւ Ելիզաւետա Մարկովնան, եւ կարմրեց։

— Այդ, քո Արամը… Պատմիր նրա մասին։

— Արամը anachronist է, Կարոլին։ Միջնադարեան ասպետների պէս նա մէկ սէր է ընդունում եւ հաւատարիմ մնալու ցանկութիւն յայտնում այդ սէրին։

— Տուեալ դէպքում այդ սէրը դու ես։

— Այո, — հառաչեց Ելիզաւետա Մարկովնան եւ ապա արմունկն սեղանին դրեց ու իր գեղեցիկ գլուխը ձեռքին յենելով, սկսեց մտածել։

Նրա ընկերուհին, որ ուշադրութեամբ նրան էր դիտում, գաւաթը սեղանին դրեց եւ հազաց թեթեւօրէն․

— Լիզա…

— Այո, Կարոլին։

— Լիզա, կարծում եմ, որ քո այդ Արամը շատ գրաւիչ մէկն է, որ կարողացել է արժանանալ ո՛չ միայն քո մի փոքրիկ ժպիտին, այլեւ գրաւել քո սիրտն այնքան… որ…։

— Շարունակի՛ր, — ծիծաղեց տանտիրուհին։

— Ո՛չ։ Ների՛ր ինձ, — կարմրեց հիւրը։

Ելիզաւետա Մարկովնան ձեռքը հեռացրեց գլխից, նայեց ընկերուհուն եւ հառաչեց․

— Չգիտեմ, թէ ինչպէս բացատրեմ։ Նա իր ներկայութեամբ, անմիջապէս համակրութիւն է ստեղծում իր նկատմամբ։ Ինչ որ երազներ են յարուցում նրա դէմքը, ժպիտը, կեցուածքը եւ կեանքը հաճելի դարձնում…։

— Նա գիտէ՞ իր այդ արժանիքների մասին։

— Ո՛չ։ Ընդհակառակն, նա կարծում է, որ նա իրենից ոչինչ չի ներկայացնում։

— Ասացիր, որ նա քեզ ամուսնութեան առաջա՞րկ է արել։

— Նա ո՛չ միայն առաջարկ է արել, այլեւ հաւատացած է, որ ես շուտով նրա կինն եմ լինելու…։

— Դու ընդունե՞լ ես նրա առաջարկը։

— Ո՛չ…։

— Այն ժամանակ, ինչպէ՞ս է, որ նա կարծում է, որ դու նրա կինն ես լինելու։

— Մի գիշեր նա բարկացաւ։ Ուզում էր թողնել եւ գնալ… Ես առանց նրան չէի կարող լինել եւ ասացի կը մտածենք այդ մասին…։

— Ես տեսնում եմ, որ մեծ է նրա ազդեցութիւնը քո վրայ։

Ելիզաւետա Մարկովնան ցնցեց ուսերը։

Հիւրը նրան նայեց շեշտակի։

— Ամուսնացիր նրա հետ, Լիզա։

— Ի՞նչ…, — զարմացաւ Ելիզաւետա Մարկովնան։

— Ամուսնացիր նրա հետ։ Ես տեսնում եմ, դու սիրում ես նրան։

— Ո՛չ։ Ո՛չ սէր եւ ո՛չ էլ ամուսնութիւն։

— Ո՞չ, — այս անգամ զարմացաւ հիւրը։

— Այո։ Ես սէր կոչուած զգացումը չեմ ընդունում, իսկ ամուսնութիւնը ես համարում եմ ծանր բեռ իմ բարակ ուսերի համար։

digitised by A.R.A.R.@

— Այդ հայ երիտասարդի հե՞տ նոյնիսկ։

— Ընդհանրապէս․․․։

— Բայց մի օր դու պիտի ամուսնանաս․․․ Այդ է ամէն մի կնոջ ցանկութիւնը։

— Ո՛չ։ Հազար անգամ ո՛չ։

— Ըստ երեւոյթին, այս հայ տղան անսահմանօրէն սիրում է քեզ, դու էլ նրան։

— Արամն աննման է։ Նա գրաւիչ է, ազնիւ է, անկեղծ է, բայց նորից ես չպիտի ամուսնանամ նրա հետ։ Ճիշդ է, ես սիրային կապի մէջ եմ նրա հետ, բայց այդ կապը ես հաստատել եմ իմ ազատ կամքով եւ ոչ ամուսնութեան, նրա, այսպէս կոչուող, իրաւունքից հարկադրուած։ Ես ատում եմ ամէն իրաւունք, հետեւապէս եւ ամուսնական իրաւունք․․․։

— Ամուսնութիւնը սիրային փոխադարձ համաձայնութիւն է, հետեւապէս եւ իրաւունքի ու ոչ իրաւունքի խնդիր չկայ, Լիզա։

— Ինչո՞ւ համար է այդ համաձայնութիւնը, Կարոլին։

— Ընտանիք կազմելու համար։

— Ես ատում եմ ընտանիքը։

— Առանց ընտանիքի սերունդները չեն կարող շարունակուել, Լիզա։

Եղիզաւետա Մարկովնան ծիծաղեց հեգնական․

— Դու կարծում ես, որ մարդիկ ամուսնանում են, որովհետեւ շատ մտահոգ են սերունդների շարունակութեա՞մբ։

— Սերունդները հետեւանք են ամուսնութեան, իսկ ամուսնութիւնը սիրային ակութ է, Լիզա։

— Այդ ճիշդ ասացիր, Կարոլին։ Ամուսնութիւնը բոցավառ մի ակութ է, որի մէջ այրւում են ամուսնացող կողմերը, — ծիծաղեց Եղիզաւետա Մարկովնան։

Ծիծաղեց նաեւ Հիւբը։

— Ես քեզ ճանաչում եմ, Լիզա՛։ Դու ո՛չ միայն շատ գեղեցիկ ես, այլեւ ամբողջովին կինն ես։ Քո մարմնի ամէն մի բջիջը ներծծուած է կանացիութեամբ եւ յանկարծ այսպէս․․․, — ասաց Հիւբը։

— Ես նորից նոյնն եմ Կարոլին։ Բայց ոչ ամուսնութիւն։ Ո՛չ, — իր դիմացը նայելով ասաց Եղիզաւետա Մարկովնան եւ մռայլուեց։

— Որտեղի՞ց է գալիս քո այդ ատելութիւնը ամուսնութեան եւ ընտանիքի նկատմամբ։ Վալտէր Ֆոն Բլաուբէրգէրի՞ց, — հարցրեց Հիւբը։

— Այո։

— Ըստ քո պատմածի, Արամը սքանչելի մի երիտասարդ է եւ հետեւապէս նոյնքան կատարեալ մի ամուսին․․․։

— Ես վստահ չեմ։ Ես ուզում եմ նրանից սիրով բաժանուել, այլ ոչ իրար ատելով։

— Այդ դեռ չես կարող ասել, — դիտել տուեց Հիւբը։

— Բայց ես ատում եմ ամուսնութիւնը։ Հասկանո՞ւմ ես։ Ատում եմ, — ընկերուհուն շեշտակի նայելով ասաց տանտիրուհին։

— Ների՛ր ինձ, Լիզխէն, — մեղաւոր ասաց Հիւբը։

— Դու ինձ ների՛ր, Կարոլին, — անկեղծութեամբ ասաց Եղիզաւետա Մարկովնան, — ես գիտեմ, որ դու մտահոգ ես իմ ապագայի կարգաւորման հարցով, բայց անհոգ մնա, չեմ կորչի․․․։

digitised by A.R.A.R.@

*— Մի հարց եւս, Լիզա։ Եթէ պիտի հեռանայիր այս երկրից, այն ժամանակ, ինչո՞ւ եկար։*

*Ելիզաւետա Մարկովնան մի քիչ մտածեց.*

*— Մեղաւորը հայրս է։ Հայրս միշտ էլ ուշադիր էր դէպի օտարները, մանաւանդ դէպի հայերը։ Զօրավարի պաշտօնով նա եղել էր Հայաստանում, գիտել էր, ուսումնասիրել այդ երկրում ապրող ժողովուրդներին եւ գրի առել իր տպաւորութիւնները իր յուշատետրում։*

*«Երբ ես փոքր էի, յիշում եմ, որ նա հիացմունքով էր խօսում հայերի մասին, մեր հիւրերին։ Նա անաչառ մարդ էր։*

*«Նրա մահից յետոյ, նրա թղթերի միջից գտնուեց նրա յուշատետրը։ Այդ յուշատետրը, որը բաւական մեծ է, մեծ յայտնութիւն էր ինձ համար։ Ես սիրում էի հօրս եւ ցանկանում էի գիտնալ, թէ նա ինչպէս է մտածել կեանքին, մարդկանց, իր ընտանիքին, ինձ, որովհետեւ ես կարծում եմ, որ մենք երբեք այնքան անկեղծ չենք, ինչպէս մեր յուշատետրերում։*

*«Ես գիտէի, որ հայրս մարդասէր էր։ Բայց նրա յուշատետրը ցոյց է տալիս, որ նա նաեւ մեծ մտածող է եղել, կեանքն ու երեւոյթները վերլուծող, մարդկանց ճանաչող։*

*«Նրա աչքից ոչինչ չի վրիպել։ Եւ այն բոլորն ինչ նա տեսել է, կարճ ու համառօտ ու խտացուած տողերով գրանցել է իր յուշագրքում։*

*«Իմ մասին օրինակ գրել է՝*

«Շատուանից եմ նկատել, որ Լիզան տարուել է Վալտէր Ֆոն Բյառթէրգէրով, մի երիտասարդով, որը կարող է պարծենալ իր արտաքին գրաւչութեամբ եւ իր ազնուական ծագումով միայն։ Այլ կերպ, նա ոչնչութիւն է։ Անասուն»։

*«Սակայն վերադառնանք հայերին, որոնք հօրս յուշագրքում մեծ տեղ են բռնում։ Նա գրել է՝*

«Ես հիմա Հայաստանում եմ, այն լերան դիմաց, որի գագաթին, ըստ Աստուածաշնչի իջել է Նոյան Տապանը։ Այս Արարատն է։

«Նայում եմ այդ բարձր, լայնանիստ ու վիթխարի լերանը եւ զարմանում։ Լեռներն անշունչ, անշարժ, անտարբեր աշխարհագրական ցցուածքներ են։ Բայց Արարատն ոչ։ Այս ալեհեր հսկան, որ միշտ մտածկոտ է, թւում է, թէ աստուած է։ Ակամայօրէն պատկառանք ես զգում նրա հանդէպ, եւ ծնկի գալու եւ նրան երկրպագելու սարսուռ։ Թէեւ նախապաշարում է իմ ասածը, բայց ինձ հետ եղած միւս սպաները նոյնն ասացին ինձ։ Պէտք է ասել, որ հայերն Արարատը նոյնացնում են Հայաստանի հետ։ Արարատի գաղտնիքն ինձ պարզուեց, երբ ես հիւր եղայ մի հայ ընտանիքում եւ այնտեղ տեսայ այդ ընտանիքի ծերունազարդ նահապետին։ Ինձ համար տարբերութիւն չկար այդ նահապետի եւ հայոց այդ լերան միջեւ»։

«Արարատի գաղտնիքն ինձ է՛լ աւելի պարզուեց, երբ ես քիչ թէ շատ ծանօթացայ այդ անզուգական ժողովրդի անօրինակ պատմութեան հետ։

«Մենք խաբուած ժողովուրդ ենք, *— մի օր ինձ ասաց իմ հայ թարգմանիչը,* — խաբուած աշխարհի «քրիստոնեայ» եւ «մեծ» կոչուող երկրների կողմից»։

*— Մի այլ տեղ, հայրս իր յուշագրքում գրել է, — շարունակեց Ելիզաւետա Մարկովնան.*

«Մօտենում ենք մի որեւէ գիւղի եւ դեռ հեռուից զգում ենք, թէ տուեալ գիւղը հայկական է, թէ թրքական։ Հայկական գիւղի դաշտերը մշակ-

digitised by A.R.A.R.@

ւած են ու խնամուած, ինչպէս պատին փակեցուած ասեղնագործ մի կտաւ, թրքականը՝ ամայի ու վայրենի: Հայկական բնակավայրերը թաղուած են կանաչի ու պտղատու ծառերի պարտէզների մէջ, թրքականը՝ ամայի են, մերկ, կիսաւեր ու վանդալական: Հայ տունը յագեցուած է մաքրութեամբ, թրքականն աղտոտութեամբ եւ ծխի կծու հոտով: Ամէն հայ գիւղ իր դպրոցն ունի, իսկ թրքական որեւէ դպրոց չտեսայ: Թուրքը ծոյլ է եւ գող: Այդ նրա ցեղային բնոյթն է: Խօսում ես հայ մի տղամարդու հետ եւ տեսնում ես նրա պարզ ու բաց դէմքը, նրա շիտակութիւնը, նրա ազնուութիւնը, նրա անկեղծութիւնը: Խօսում ես թուրքի հետ եւ տեսնում ես նրա մութ դէմքը, նրա դաւադիր ու ստոր հոգին: Նրա նենգութիւնը եւ կեղծաւորութիւնը: Թուրքը միշտ էլ յարմար առիթ է փնտռում դանակը թիկունքդ խրելու»:

«Հայ կինն ամէնից առաքինին, ամէնից պարկեշտ, ամէնից բարոյական կինն է բոլոր կանանց մէջ: Հայ կինն է միայն հասկացել կնոջականութիւնը»:

*— Հօրս յուշագրքից երեւում է, որ նա մտադիր է եղել հայերի մասին մի ուսումնասիրութիւն գրել, — իր հիւրին ասաց Եղիզաւետա Մարկովնան, — որովհետեւ մի տեղ նա գրել է՝*

«Իմ մարդկային պարտքն ինձ թելադրում է, այս եզակիօրէն լաւ ժողովրդի, եւ նոյնքան եզակիօրէն անիրաւուած ժողովրդի համար մի բան անել, այսինքն՝ մի բան գրել: Գերմաներէնը «մեծ» լեզու է եւ թերեւս իմ գիրքը թարգմանուի ուրիշ «մեծ» լեզուներով: Ես այնքան միամիտ չեմ, որ կարծելու լինեմ, թէ իմ գիրքը փրկութեան դուռ կը բանայ հայ ժողովրդի համար: Այդ չէ իմ նպատակը, ո՛չ: Իմ նպատակն է ցեխ նետել ժողովուրդների բախտը «ճշդող» կեղծարարների երեսին, որոնք հայ ժողովրդին իբր թէ յիշում են, երբ այն պէտք է լինում իրենց վաճառականական հաշիւների համար...»:

*— Ինչպէս երեւում է, հայրս չի գրել կամ չի կարողացել հասցնել գրել իր այդ ծրագրուած գիրքը: Եւ ես եկայ տեսնելու հօրս կողմից սիրուած այդ ժողովրդին, — հօր մասին իր խօսքը լրացրեց Եղիզաւետա Մարկովնան:*

*— Արամը գիտէ՞ այդ բոլորի մասին, — հարցրեց հիւրը:*

*— Այո, ես պատմել եմ նրան:*

*— Լիզխէն, ասում ես նա սիրում է իր ժողովրդին, թերեւս քո վրայ սիրահարուելու պատճառներից մէկն էլ այդ է, — ասաց հիւրը:*

*— Թերեւս, — ուսերը վեր հանեց Եղիզաւետա Մարկովնան, — բայց այդ բոլորը ես նրան պատմել եմ, երբ մենք արդէն սիրային կապի մէջ էինք:*

*Նրանք երկար ժամանակ լռեցին: Յետոյ իրար նայեցին, ուզեցին խօսել, բայց նորից լռեցին:*

*— Օ՛, ես մոռացել եմ, որ դու ճանապարհից յոգնել ես եւ հանգստանալ ես ուզում, — իր մտածումներից սթափուեց Եղիզաւետա Մարկովնան:*

*Հիւրը ժպտաց ներողամիտ.*

*— Այդ ոչինչ, Լիզխէն, երկար ժամանակ է, որ քո տաք ձայնը չէի լսել:*

*Արամը մի քիչ էլ կանգնեց, բայց երբ տեսաւ, որ իր սիրուհին ընկերուհու համար անկողին է պատրաստում, թողեց եւ հեռացաւ:*

*Ս. ՍԱՆԻՆԵԱՆ*

(Շար. 4)

digitised by A.R.A.R.@

ՄԻՔԱՅԵԼ ԹԱՀԻՐՋԵԱՆ

# ԽՕՍՔ՝ ՇԻՐԱԶԻՆ
# ԵՒ
# ԵՐԿՐԻՆ՝ ՆԱՅԻՐԻ

●

Որքա՜ն տենչացի կեանքի ընթացքին,
Ես Նեղաշխարհի լռութիւնն անդորր,
Բայց լռութիւնն իմ եղաւ Յիսուսին
Գողգոթային մութ ճամբուն պէս մոլոր,
Զի խռովայոյզ խուժեցին խոհեր
Ծովափին վրայ մութ Նեղաշխարհիս,
Որոնք փրփրադէզ ալիքներու պէս,
Անխնայօրէն հարուածեցին զիս,
Բայց չպարգեւեց լռութիւնն երբեք,
Խաղաղութիւն իմ հոգւոյս յոգնաբեկ:
Խաղաղութիւնն իմ հոգւոյս հիմա խանգարող,
Քու խօսքդ եղաւ, սիրելի՛ Շիրազ,
Որ հայրենաշունչ խոհերով խռով՝
Արտասահմանի հայոց հարց կու տաս.—
«Դուք ինչպէ՞ս օտար աշխարհներ ընկած,
Չէք մեռնում վշտից իմ հեռաւորներ,
Իմ պանդուխտ հայեր:»

Ճակատագիրն է հայոց սեւաբախտ,
Անդուլ բաժնած մեր ազգը անամոք,
Այսպէ՛ս ցանկացաւ Աստուածն ապերախտ,
Այսպէ՛ս ցանկացաւ Աստուա՛ծն անողոք,

digitised by A.R.A.R.@

Որ ապրինք անվերջ իրարմէ հեռու,
Իրարմէ բաժա՛ն, իրարու կարօ՛տ,
Եւ ճակատագրին յաւիտեան հլու,
Ձայնենք իրարու կոչերով թախծոտ:
Որ ծլարձակիս դուն ծաղկի նման,
Մեր գեղածիծաղ Արազի ափին,
Իսկ ես՝ գլխահակ, հոգիս՝ արնաքամ,
Արազի ափէն հեռու թափառիմ.
Նայի՛ս Սեւանին մեր յաւերժահարս,
Նայի՛ս գետերուն կրքո՛տ, փրփրադէզ,
Նայի՛ս՝ մօրդ հալալ ստինքներուն պէս
Զոյգ Մասիսներուն՝ հեռու ու անհաս,
Նայիս յարատե՛ւ... որ քու սրտակէզ,
Հայրենակարօտ վէրքերդ բուժես:

Իսկ ես Արազի ափերէն հեռու,
Վշտահար, անօք եւ ուղեկորոյս,
Մատնուած անվերջ վայրագ հողմերու,
Կը թափառիմ դեռ, շուար եւ անյոյս,
Ներբաններուս տակ ցուրտ հողը օտար,
Անհաղորդ երկինք մը գլխուս վերեւ,
Որուն տաք արեւն իսկ եղաւ անկար,
Ջերմացնելու ներաշխարհս սեւ,
Թորք աչքերուս մէջ կարօտ ու թախիծ,
Հոգիիս մէջ մա՛ղձ, սրտակէզ մորմո՛ք,
Եւ հայրենիքիս սէրն անպարագիծ՝
Սրտիս կոտտացող վէրքը անամոք:
. . . . . . . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . . . . . . .

Անցան տարիներ այսպէս ընդերկար,
Մերթ յոյսերով լի եւ մերթ յուսահատ,
Վիշտը ծածկած էր՝ խաւարովն իր չար՝
Նայիրի երկրին առօրեան պայծառ:
Ցնցումներով նենգ ու ոճրածին,
Օձահոգի՛, չա՛ր բռնակալ մը վատ,
Փակած էր՝ սրտի խաղաղութեամբ հաշտ,
Նայիրի երկրին արեւի ուղին:
Բացած էր մահը իր երախը լայն
Ու կը թափառէր աքսորի դաժան
Ուղիով երկար... Սիպերիո՛յ մէջ խոր,
Նկուղներուն մէջ բանտի հեռաւոր:

Եղած էր երկրին դէկը գահընկէց.
Եւ ինչ որ որակ, արժէք էր ու մեծ:

Փոխարինած էր նախանձը անգութ,
Ու նետած բանտի խուցերուն մէջ մութ,

digitised by A.R.A.R.@

Եւ քմայքօրէն յանձնած մահին մերթ՝
Հայրենի երկրին մեծ տաղանդին,
Միասնիկեանէն մինչեւ Աղասին,
Իբրեւ դաւաճան աշխարհին սովետ:

Ողջ պատմութիւնը երկրին Նայիրի,
Զունեցաւ այնքան դաւաճա՛ն, մատնի՛չ,
Զունեցաւ այնքան տխո՛ւր, զազրելի՛
Անկումի շրջան մը վարկաբեկիչ:
Թունաւորուած էր մթնոլորտը ողջ,
Անվստահութեամբ ու մատնութիւնով,
Պառակտուած էր հայրենիքն ամբողջ,
Իբրեւ փոթորկոտ ու ալեկոծ ծով:
Հօր-զաւկի միջեւ կամուրջն էր քանդուած,
Կը զգուշանային երկուքն իրարմէ,
Եւ նոր Ճակօ մը, անունը՝ կասկած,
Հօր-զաւկի միջեւ թակարդ կը հիւսէ:
Փա՛կ է ամրակուռ դուռ ու լուսամուտ,
Ինչպէս եւ մարդոց շրթները բոլոր,
Որքա՛ն աչքեր կան՝ իրենց հետամուտ,
Որքա՛ն հաշիւներ՝ մութ ու թունաւոր,
Որքա՛ն հոգիներ՝ նե՛նգ, նախանձալի՛ր,
Բաւ է թոթովել բառ մը անկշիռ,
Կամ կարեկցանքի խօսք մը բարեգութ,
Կամ թշնամական վկայութիւն սուտ, —
Գտնելու ինքզինք Սիպերիոյ մէջ խոր:

Սնունդի տագնապ ու կեանքի վտանգ,
Ձկայ հոգեկան անդորր ու հանգիստ,
Կեանքը քմայք է ու յիմար կատակ,
Ամէն դի անգութ չեկիստներ անարգ,
Դիմագիծն անոնց ամպամած ու խիստ,
Եւ մահուան այնքա՛ն դաժան եղանակ:
Թերթենք հնամաշ էջերը դեղին,
Մեր հազարամեայ հայոց պատմութեան.
Ղեկավարներու միջեւ նոր ու հին,
Սեւ ճակատագրի ի՞նչ նմանութիւն,
Ինչպիսի՜ դաւեր, ինչպիսի՜ վախճան,
Ինչպիսի՜ տմարդ ոճրագործութիւն:
Անյուշ բերդի մէջ երբ անցեալին,
Արշակ արքան էր՝ նե՛նգ սադրանքի զոհ,
Այլ «եղբայրակա՛ն» վրաստանի մէջ,
Խանջեանը եղաւ զոհը նո՛յն դաւին:
Այսպէ՛ս, արտաքին ճնշումներու տակ,
Բռնութեան ներքեւ անվերջ հիւծասպառ,
Նայիրի երկրին սիրտը կը տքար,
Պայմաններու մէջ բիրտ ու դժնդակ:

digitised by A.R.A.R.@

Եղած էր երկրին ղեկը գահընկէց,
Եւ ինչ որ որակ, արժէք էր ու մեծ:

Ստանձնած էր նոր վարչամեքենան.
Հայ մատնիչներու խմբակ մը դժխեմ,
Որոնք գետնաքարշ սողունի նման՝
Իրենց ընծայուած փառքերուն նսեմ
Իբրեւ հատուցման վատթա՛ր եղանակ,
Ժահր հայթայթող մաղէզներ եղան,
Ստալին – Բերիա օձերուն անարգ:

Բայց Հայաստա՛նը՝ ժայռ ու լեռնակոյտ,
Սէգ բարձունքներու թիւերով հարուստ,
Հարուստ մթախոր կիրճերով տղմուտ,
Անդունդներով խոր եւ խաւարակուռ,
Ուր չար ու անգութ եւ նախանձի կոյր,
Արտաւազդնե՛րն են հոն գահավիժած՝
Իբրեւ մարդկային էակնե՛ր վիժած·—
Աւա՜ղ, չունեցաւ ի՛ր Քափիթոլը,
Իր Տարպեան ժա՛յռը:

Անցած է հիմա քառորդ դար լրիւ,
Օրերէն այդ սեւ եւ հողմացրիւ,
Ուր Հայաստանը արեւելահայ
Արեւմտահայ իր եղբայրներուն
Եղաւ բախտակից՝ ճակատագրով նոյն,
Եւ արեւակէզ Տէր–Զօրի փոխան,
Սիպերիայ անծիր դաշտերը եղան,
Սեւ գողգոթայի տանջամահ ճամբան:
Հա՞րկ է միթէ տալ անունը անոնց,
Այդ յուսապսակ ռահվիրաներուն,
Եւ քեզ վերստին քենել սրտախոց· —
Որոնց անուան վրայ տակաւին արիւնն
Է տաք, պղպջո՛ւն··· թա՛ց է ու տակաւ,
Ձիգ տարիներ ետք իսկ չցամքեցաւ:
Հա՞րկ է միթէ տալ անունը անոնց,
Եղերաբախտ ու անձնուէր մարդոց,
Որոնց մահն եղաւ միշտ խորհրդաւոր,
Որոնք չունեցան դագաղ ու թափօր,
Չունեցան իրենց մահը ողբացող,
Ոչ իսկ սգակիր եղերամայրեր,
Չունեցան իրենց վիշտերով լացող,
Հայրենիքի մէջ սրտեր կարեվէր:

Սիպերիա — Տէր–Զօր եղան համանիշ:

Հայ դպրութենէն՝ Սիպերիան խլեց
Սիամանթոյի փոխարէն՝ Չարենց·

digitised by A.R.A.R.@

Զօհրապի փոխան՝ Վահան Թոթովենց,
Սեւակի փոխան՝
Զապէլ Եսայեան,
Այլ մեծաքանքար հեթանոսերգակ
Վարուժաններու փոխարէն՝ Բակունց՝
Ժանիքներու մէջ ճմլուած ծաղկեփունջ,
Ինչպէս քաղցրաբոյր «Ալպիան մանիշակ»
Իր ոճին նման՝ զուլալ ու յստակ՝
Չարենցեան ոգով՝ «պայծա՛ռ նահատակ»։

Վայե՞լ է միթէ հայ բանաստեղծին,
Սիպերիայ մէջ խոր ըլլալ խոզարած,
Ինչպիսին եղաւ Գուրգէն Մահարին,
Արդ ըսէ՛, խնդրեմ, ծաղր ու ծանակի
Միթէ կա՞յ ուրիշ եղանակ մը ցա՛ծ,
Գուրգէն Մահարին ըլլայ խոզարա՛ծ...

Մտերմութենէն ետքը Չարենցին
Պիղծ խոզերո՞ւն հետ ան դառնար ընկեր. —
Չարենցը խոզո՞վ պիտ՝ փոխարինուէր.
Գուրգէն Մահարին ըլլայ խոզարա՛ծ...

ՄԻՔԱՅԷԼ ԹԱՒՐԻԶԵԱՆ

(Հատուած)

digitised by A.R.A.R.@

# ՈՃՐԱԳՈՐԾԻՆ ՀՈԳԵՎԱՐՔԸ

Իմ կեանքը քող տառին երգին պէս ըլլայ,
Եւ երգս անուանդ կրկնումն ըլլայ քող յաւերժ,
Իմ կեանքը քող մութ ջրվէժի պէս ըլլայ,
Ու դէպի քեզ անկում մ'ըլլայ գահավէժ.
Իմ կեանքը քող տառին երգին պէս ըլլայ...

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

## Ա.— ԵՐԲ ՍՐԲԱԶԱՆ ՏԵՍԻԼՔ ԵՄ ՏԵՍՆՈՒՄ

*Հիւանդանոց... լռութիւն, խոցոտուած սրտեր, թախիծների մէջ կորած հոգիներ... անքուններ... հառաչանքներ... ու դարձեալ լռութիւն...*

*Ապրիլեան մի անձրեւոտ գիշերամուտ է...*

*Նստած դրասեղանիս առջեւ, ակամայից խորհում եմ ցեղիս արիւնոտ անցեալի մասին... մի ահաւոր անցեալ, որը երբեք գերեզման չպիտի իջնի...*

*Յանկարծ մթատուերի միջից, այդ լռութիւնը մէկէն վերածւում է կենդանութեան եւ աշխուժութեան, որովհետեւ ես երգի ձայն եմ լսում, հայ երգի հոգեզմայլ մի կանչ... «Հո՛վ արէք, սարե՛ր ջան, հո՛վ արէք» մի հոգեպարար երգ, որը մեր երաժշտութեան աստծու պատգամախօս ձայնն է հնչեցնում:*

*Այդ երկնային երգին ունկնդիր, անքթիթ հայեացքով նայում եմ դիմացս, ուր մշուշապատ օդի միջից երեւում է մեր երգի տիտանը, նորարարը, իր ամբողջ վեհութեամբ: Նա լո՛ւռ է, յամառօրէն լո՛ւռ... նրա աչքերը, նրա անմեղ ու ջինջ հայեացքը ինձ կապում է իր ստեղծագործութեան, գեղեցիկի եւ բարւոյ ուխտին:*

*Սրբազան տեսիլքը, իր լռութեամբ, իր վեհութեամբ փշրում է սրտիս խայտանքները ու զգում եմ, որ երակներիս մէջ նոր ու աւելի թարմ արիւն է վազում, վրէժով ալցուն:*

*Կոմիտասի եւ իր բախտակիցների անմեռ ու սրբագործուած յիշատակը քանդակւում է հոգուս խորանում, նկատում եմ, նրանց արիւնոտած ճակատների կնճիռները վերանում են, նրանք սկսում են ժպտալ, տողանցել... Կոմիտասը յամենում է...*

Վեհացել է, աստուածացել,
Ի խնդիր նոր գոյատեւման
Ու նոր Յարութեան...
Կոմիտա՛ս...

digitised by A.R.A.R.@

Քարացած լռութիւն,
Հիւանդանոց...
Անհաղորդ ստուերներ,
Գանաններ նսեմ.
Ու այցելուներ,
Խայտաբղէտ ուրուներ:

Դարձեալ անապատ...
Դժպհի ու ոխակալած մրրիկ.
Անապա՛տ... մահ ու կոտորած,
Համատարած աւեր,
Կիրք ու մոխիր...

Կոմիտա՛ս...
Դու համայնակուլ անդոհանքի
Անօրինակ նամբորդ.
Դու մաքրամաքուր նուիրումի
Ինքնակէզ զոհասեղան —
Հայոց Սուս աստուած...
Դու մեծասքանչ մենախօս —
Ի խորոց սրտի աղօքում,
Կուց-կուց արիւն,
Եւ բոց առ բոց բոնկում.
Խուլ ու համր է այսդիական
Ձայների, դէմքերի հանդէպ.
Օ՛, այդ անկոչ յանախանքները,
Ստուերները...
Այդ նսեմ կերպարները
Մթագնում ու տարտղնում են
Մեծ ՅԱՌՆՈՒՄԻ շքեղութիւնը,
Պայծառութիւնը երանաւէտ:

Ընկել է խաժամուժ լաբիւրինթոսը,
. . . . . . . . . . . . . . . .
Եւ ահա, ահազնող ու կործանող
Տեղաշարժ է հիմա.
Ո՛ւժ ու կիրք ժայթքող.
Անդրերկրեայ մի նոր աշխարհ,
Ու լուսայորդ նամբայ...

Ու Կոմիտասը,
Հայոց Սուս աստուածը...
Ահա, հասնում է մեծ շքերթին.
Ահա, լուսապսակ Մեսրոպ Մաշտոց,
Փարպեցի, Խորենացի,
Նարեկ ու Շնորհալի.
Եւ ահա՛ւասիկ Աւարայրի
Բոցաշունչ Ղեւոնդ Երէց,

digitised by A.R.A.R.@

Ջեռքին Սուր ու Գրիչ,
Թագմաշունչ Ոգի։

Ու հիմա՝
Անծայրածիր անապատ,
Ռաս էլ էյն ու Տէր-Զօր...
Սպանդանոց Հայոց։
Ահա, նորագոյն դպրութեան պսակաւորներ,
Գուսաններ անմահ —
Հայ մտքի ու հանճարի
Ջահերն անբասիր,
Չգործած յանցանքի
Խաչեալները Նայիրի։

Ու դարձեալ հիւանդանոց,
Խենթանոց...
Հոգերոյժներ,
Այցելուներ —
Քայլող ստուերներ
Որոնք տարտղնւում են նորէն,
Մթագնում ամէն ինչ...
Նորէն ամէն ինչ դառնում է վազք,
Դառնում է ձեւք·
Դառնում ճարճատում, հրկիզում,
Սպանդ ու մոխրացում —
Տէր-Զօր, Ռաս էլ էյն —
Սպանդ...

Հիւանդանոց՝
Մահճակալներ,
Շարժուն դագաղներ...
Ու ջղաձգօրէն սեղմում,
Ճմռթկում է սաւանները
. . . . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . . . .
Անդոհանք է, անէացում —
Հիւանդանոց։

Ու բացւում են աշխարհագրական
Նոր բարձրութիւններ,
Նոր հարթութիւններ։
Հիմա ամէն ինչ նո՛ր է ու հզօր,
Լափլիզող մըրրիկ,
Խարշակ ու մահ —
Տէր-Զօր...

Հայ երգի քուրմը իր մազալաթեայ դէմքը
Ցառել է մեծ տեսիլքին,

digitised by A.R.A.R.@

Երբեմնի ծաղկուն Այգեստանին,
Հայոց դպրութեան վերամբարձ շքերթներին.
Ոսկեդա՛ր···
Աւարա՛յր···

Հիմա մենախօսում է Կոմիտասը,
Ողբո՛ւմ, բողոքում·
Աղօթո՛ւմ է,
Բողոքո՛ւմ է
Պատգամում···

*Յանկարծ հեռախօսի անակնկալ զանգի ձայնը խանգարում է ինձ, վեր եմ ցատկում արթուն երազանքիցս... Աստուա՜ծ իմ, այս պահին ո՞վ է ցանկանում մենութիւնս խանգարել... սակայն, դժբախտաբար, բժշկի համար ո՛չ հանգիստ կայ եւ ո՛չ էլ մենութեան պահեր։*

*Ընկալուչը վերցնում եմ ջղային, դողդոջ ձեռներով, ինձ կանչում են մի նոր հիւանդի այցելելու։*

*Սրտիս մէջ ծուլացած զայրոյթով քայլում եմ դէպի հիւանդի սենեակը։*

*Նա իր սնարում, մխրճուած բարձերի մէջ, մազաղաթի գոյն ստացած դէմքով, աղերսագին բարեւում է ինձ։*

*Նրա բարեւին պատասխանելով՝ մօտենում եմ, հանդարտ ու սառնարիւն հարցնում եմ...*

*— Ձեր անունը... ապա ուզեմ պատմեցէք, թէ ի՛նչ է ձեր հիւանդանոց գալու պատճառը։*

*Նա հառաչում է, խորը հոգոց հանելով, հազիւ լսելի ձայնով պատասխանում է.*

*— Ջավիդ Խալիլ Օղլի...*

*Անգութ եւ անողորմ ճակատագիր, ինչո՞ւ այս պահին ինձ պիտի վիճակուէր մի հիւանդ, որը զաւակն է ցեղասպան մի ժողովրդի, որոնք յօշոտել են ազգիս կէսին։ Այդ րոպէին ես անիծում եմ այն պահը, երբ որոշեցի բժշկութեամբ զբաղուել։*

*Յանկարծ ներսումս տեղի է ունենում մի չքեղ յեղաշրջում, մէկէն մոռանում եմ, թէ դիմացինս ով է. ապա, այս միտքն է ծագում մէջս, թէ նա հիւանդ է եւ կարիք ունի իմ օգնութեան... հիւանդութեան պարագային մենք պարտուած ենք ու մինչեւ իսկ մեր թշնամուն պիտի փրկենք, նոյնիսկ նրա տանջանքի առջեւ ծունկ չոքենք։*

*Հիւանդ մարդը նկատելով իմ դէմքի այլայլումը, դադարեցնում է իր խօսակցութիւնը, երբ նկատում է, որ ես պատրաստ եմ իրեն լսելու, աղերսագին այսպէս է շարունակում...*

*— Խնդրում եմ, ի սէր Ալլահի, ազատէք ինձ հոգեկան ու մարմնական տանջանքներից, տառապանքներից։*

*Արդէն սառնարիւնս վերագտած՝ հանդարտ ու մեղմ պատասխանում եմ...*

*— Ի հարկէ, պիտի աշխատեմ մեղմել ու ամոքել ձեր տառապանքները, միայն թէ՝ դուք օգնէք ինձ, համբերող եղէք։*

*Հիւանդ մարդը ցաւի ու հոգեկան տառապանքներից սարսափահար, այսպէս է մրմնջում...*

digitised by A.R.A.R.@

«Ես… հինգ… երկար ու ձիգ ամիսներ, շարունակ համբերել եմ… հինգ ամիս է ինչ շրթունքներս դէպի հոգեկան ցաւս կարկառած խնդրում, աղերսում եմ, որ Ալլահը ինձ մահ տայ, սակայն ես, դժբախտ արարած, մոլեգնաբար ամէն օր մահը հայցելով դեռ ապրում եմ… Ա՛խ, այդ մի քանի մարդկանց ուրուականները, ամէն օր երեւում են ու վրաս աղաղակում… «Մենք երկնի տակ դեգերող, ստեղծագործող ու լոյսին սպասարկու մարդիկ էինք, մեզ՝ գեղեցիկի ու բարութեան ուխտաւորներիս ինչո՞ւ սպանեցիք»…։

Այս խօսքերից յետոյ, յանկարծ նկատում եմ, որ հիւանդս խելայեղօրէն անզուսպ գալարումներով շարժումներ է անում, պրկւում են նրա մարմնի բոլոր մկանները ու նա կծկուած մի մսակոյտի վերածուելով՝ ընկնում է անզգայութեան գիրկը։

Երկար ժամանակ է տեւում՝ մինչեւ կարողանում եմ նրան ուշքի բերել… Թմրեցուցիչ սրսկելով՝ դուրս եմ գալիս նրա մօտից, որովհետեւ նման պարագայում հնարաւոր չէ բժշկական քննութիւնը շարունակել։

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Երբ սենեակս վերադարձայ, գիշերային խաւարը սեւ կուպրի պէս խիտ թանձրացել էր, սաստիկ յոգնած լինելով հանդերձ՝ քունս յամառօրէն չէր մօտենում կոպերիս… ընկել էի մտքերիս մղձաւանջում, անորոշ եւ անվերջանալի պատրանքներ էի տեսնում… Այդ պահին ես ուզում էի պոկուել ինձ տանջող մտքերից։

Այսպէս անցան երկա՛ր պահեր. երբ սթափուեցի անորոշ պատրանքներից, տեսայ հետեւեալ երազը։

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Սենեակս մշուշապատուած էր ու ես նստել էի մտայլ եւ անկենդան… աչքերս լեցուն էին աղօթքով, բայց չգիտէի, թէ ո՛ւմ աղօթեմ… ո՞ւմ բողոքեմ…

Յանկարծ, տարտղնուած մտապատկերս բոցավառւում է. լոյսեր են ծագում, որոնք բիւրեղէ աղբիւրների են վերածւում, եւ որոնց միջից լսում եմ անհանգչելի Հայ երգի ձայնը… «Երկինքն ամպել է»… զգում եմ, որ կրկին մի արեւ է ծագում իմ խաւարած սրտում։

Լուսաւորուած մշուշում, վեհ ու գեղեցիկ մի ուրուահոգի է երեւում՝ մաքրաթեւ, սրբակերտ, որը սաւառնում է սենեակիս եթերի մէջ… Այս տեսլական հոգին մօտենում է ինձ, նա լո՛յս է, նրա աչքերից լոյս է ծաթում, իր ճակատը կնքուած է հզօր տաղանդի կնիքով, եւ նա խրոխտ ու լո՛յս մօտենում է ինձ, անքթիթ հայեացքով նայում է աչքերիս։ Ա՛խ, այդ հայեացքը, լուռ ոգու այդ հայեացքը ցնցում է ինձ ու ես ճանաչում եմ նրան, նա մեր փոքր, բայց մեծագործ ժողովրդի զաւակն է, անունը ԿՈՄԻՏԱՍ, մի անուն, որը սրբազան է եւ ինքն ապրում է իր անուան մէջ։

Մի գերագոյն ճիգով հարցնում եմ.

— Կոմիտա՛ս, դու՝ որ քո հանճարով ճանապարհ ես բացել դէպի ազնիւ արուեստը, դու՝ որ հայ ժողովրդի հանճարի տուրքը նուիրաբերեցիր մարդկութեան շքեղ արուեստին, ինչո՞ւ տարիներ լռեցիր…

digitised by A.R.A.R.@

*Բայց հայ երգի քուրմը՝ մեր ոգեղինացած Մասիսը լուռ է, խոհուն ու մտասեւեռ, ինչպէս հին հայաշխարհի Սուս աստուածը... ու ես յանկարծ լսում եմ Նրա հոգում եռացող հրաբուխը, որը այսպէս է պոռթկում...*

«Ո՞վ համբուրեց նրանց մնացած սառն շրթունքները, ո՞վ այցելեց ու խունկ ծխեց նրանց շիրիմներին... միշտ անմահ ու բորբ հոգիները ո՞վ ամոքեց, երբ ոսոխը իր մահիկաձեւ եաթաղանով մաշում էր մեր գոյութիւնը, մեզ քշում էր դէպի երախը մահի ու գլխատում էր մեր արեւները... Ես համբուրեցի նրանց մնացած շրթունքները եւ արիւնոտած ճակատները, որտեղ հանճարի հուրն էր ապաստան գտել, ես, իմ այս չորացած ձեռքերովս խունկի փոխարէն հոգիս այրեցի նրանց վայրավատօրէն ցրուած անթաղ ոսկորներին, ու տասնեւութ տարի լռութիւն պահեցի, որ գուցէ մեծազօր Աստուածը գթայ մեզի: Այն արիւնոտ օրերին, երբ լռեցին մեր հայրենիքի հասկերի երգը, երբ սրի ու հրի տուին մեր ծաղկած այգեստանը, երբ Աստծոյ արեւի տակ թուրքի չարութեամբ հեղուած արիւնը ծովացաւ... ո՞վ լալագին աղօթեց... ես աղօթեցի ծնկաչոք, ես աղաղակեցի աղեխարշ ձայնով, սակայն բոլոր ականջները խուլ էին, խուլ էր քո ականջը, Աստուա՛ծ իմ... հոգիս քամու պէս ոռնաց դառնօրէն ու ես գնացի ԼՌՈՒԹԵԱՆ աստծոյ ճանապարհով... երկար լռեցի... հիմի լսիր հոգուս պատգամախօս ձայնը, լսիր իմ վերջին կտակը»:

*Ես լսում եմ անհարկու աղաղակներ, յիշոցներ ու նզովքներ բազմաթիւ հոգիների, որոնք մէկէն չքանում են՝ մենակ թողնելով հայ երգի Սփինքսին, որը այսպէս է պատգամում...*

«... Ես մրջնային յամառութեամբ տքնեցի,
Հոգիս նուիրելով լոյսի ու քարւոյ ուխտին.
Անկորնչելի մատեաններում դրոշմեցի
Յաւերժութեան երգը Սիրոյ Բագինի:

Ես վառեցի երգի խարոյկը հայի սրտում,
Որ նրա հոգում
Դարերի ու ժամանակների դիզուած
Սառոյցը հալուի,
Ու մաքրի ժանգը...
Ես «Անլռելի Զանգակատուն»...

Իսկ դո՛ւք — բորենիներ,
Մարդակեր գիշատիչներ,
Դուք անզօր էք հասկանալու,
Որ հայրենիքի սիրոյ համար
Ո՛չ խաւար կայ,
Ո՛չ սառոյց.
Ձեր հոգին խաւար է
Ու դժոխք...
Վա՛յ այն ժողովրդին,
Որ երգի սրբազան հուրը չունի իր
Կրծքի տակ,
Նա յաւէտ ցուրտ է,
Բուք է, ու ձիւն:

digitised by A.R.A.R.@

Ես վառեցի Պրոմէթէոսի հուրը հայի սրտում,
Որ նրա հոգու սառոյցը վար թափուի
Ու դառնայ դէպի հայրենական տուն:

Ո՛վ գազաններ,
Մարդասպաններ.
Գիտէ՞ք, որ կեանքը լի է անակնկալներով —
Այդ անակնկալը թուրքը տուեց.
Չինգիզի հալալ որդին այսպէս գրեց...

«Արդարութիւնը պիտի կապեմ սրիս ծայրին.
Պիտի կործանեմ ամէն բան.
Քարը քարի վրայ չպիտի թողնեմ.
Չպիտի մնան ո՛չ կանգուն ծառ,
Ոչ էլ կանաչ տերեւ.
Եւ այնպիսի աւերներ պիտի սփռեմ,
Որ նրան տեսնողները ասեն
Այստեղից ԹՈՒՐՔՆ է ԱՆՑԵԼ...»

*Ահա տեղի է ունենում թուրքերի ժողով... Հայ ցեղասպանութեան վճիռը այսպէս է արւում...*

«Հայերին մէկ առ մէկ առնել, կապել նրանց ձեռները եւ այդ անպաշտպան վիճակում նրանց խողխողել: Այս ձեւով պիտի յօշոտենք կին, երեխայ, մարդ, մինչեւ ամենավերջին զառամեալը:

«Նման յատուկ գործի համար հարկաւոր է յատուկ ուժ.

«Մի յատուկ ուժ, բաղկացած մասնագիտացած մարդկանցից»:

*Եւ այդ յատուկ ուժը հայասպանութեան համար նրանք ունէին:*

*Կատարուեց անսպասելին...*

*Եւ եղաւ ցեղասպանութիւն...*

*Դրանից յետոյ խորտակուեց հոգուս շէնքը:*

*Դառնութիւններ բարդուեցին սրտումս:*

*Ու որոշեցի ես վրէժխնդիր լինել Թշնամո՛ւն, մարդո՛ւն եւ Աստծո՛ւն...*

*Որոշեցի լռութեամբ ցուցադրել բողոքս Աստծուն,*

*Այն Աստծուն, որի համար նուիրել էի ամբողջ կեանքս:*

*Լռեցի Սուտ աստծու պէս...*

*Ոչ ոք չհասկացաւ ինձ... ինձ յիմարանոց տարան, հոգիս նորից փըշրեցին:*

*Ու չարերը նոյնիսկ ինձ անուանեցին խենթ ու խելառ:*

*Ես լռեցի՝ երբ բողոքս իմ արած գործերի, որը կարող էր անել մի հոգեւորական էր Աստծուն, սակայն բողոքս պատասխան չստացաւ, այլ ես դարձայ խենթ ու խելառ... միայն ինձ, խնայեցին չղթայելուց:*

*Ո՛վ մարդկային արդարութիւն, ո՛վ խաղաղութիւն ու արդարութիւն քարոզող հզօրներ, ձեր աչքերի առջեւ մի ամբողջ ժողովուրդ սրի ու հրի անցաւ, դուք անտարբեր մնացիք, դուք լռեցիք քարի պէս:*

*Ո՛վ Յիսուս, մի ժողովուրդ քեզ նման, բայց մի քանի անգամներ Գողգոթա բարձրացաւ ու աւելի տանջանք կրեց, քան դու:*

digitised by A.R.A.R.@

*Ո՛վ Աստուած, քո Որդու նման խաչուած մի ժողովուրդ ցեղասպանութեան զոհ եղաւ, ու դու դահիճներին չպատժեցիր։*

*Եւ դո՛ւք գազաններ, դուք սպանեցիք մեր կէսին եւ ցանկանում էիք միւս կէսին էլ ոչնչացնել, սակայն եղաւ ձեզ համար անսպասելին, մենք յարութիւն առանք ու նորից տիրացանք մեր արիւնոտ հայրենիքին ու դա՛րձեալ սկսեցինք ստեղծագործել ու ծառայել մարդկութեան արուեստին ու գիտութեան։*

*Ո՛վ հայեր, ո՛վ սիրելիներ, ո՛վ վերապրողներ, լսեցէք հոգուս կանչը։ Դո՛ւք աշխարհ էք եկել ծառայելու լոյսին ու գիտութեան, դուք ջահակիրներն էք մարդկութեան քաղաքակրթութեան. դուք պահանջ ունէք, արդար պահանջ, մի՛ մոռանաք, նա հատուցում պիտի տայ, մեր գրաւուած հողերը պիտի վերադարձուեն ու նորից պիտի լսուի հօրովելը հայի, ու հայ մայրերը մեր երկրում, մեր բուն հողի վրայ պիտի օրօրեն հայ մանկիկների որբ մնացած օրօրոցները։*

*Հայե՛ր, ո՛չ սուգ, ո՛չ լաց, այլ՝ բողոք Թուրքին ու համայն մարդկութեան։ Մենք քէն չունենք ոեւէ մէկի հանդէպ, բայց պահանջ՝ նախ Թուրքից եւ ապա՝ մարդկութիւնից»։*

*Եւ նորանոր տեսիլների յառնումից մթագնում են աչքերս... սակայն հոգուս աչքերով տեսնում եմ, ապրում եմ, զգում եմ...*

Դարձեալ եւանգանց,
Անդոհանք...
Անխոյաչափելի թախիծ
Ու բութ կսկիծ...

Նորարար վարդապետը հասել է կրկին
Բարձր կիզումի ջերմաստիճանին.
Հասել է լուսայորդ ու ամպամշուշ ոլորտին.
Հայոց Սուրբ աստուածը վերանում է.
Վերամբառնում...
Անբարբառ ողբում է,
Մենախօսում, բողոքում։
Կանչում է կրկին հայոց դպրութեան
Հաւատաւոր քուրմերին։
Կանչո՛ւմ է ըմբոստ հոգիներին,
Կանչում՝ մեծ նահատակներին։

«Ո՛վ դու գիտութեան ու մարդասիրութեան
Ուխտին նուիրուած երդուեալ բժիշկ.
Ո՛վ դու արուեստի.
Սիրոյ ու գեղեցկութեան ուխտին անձնամագրուած
Քնարակիր անբասիր եղբայր
Ռուբէն Սեւակ.
Երախտաւորիդ ձեռքով վառօրէն
Դաշնահարուած...
Իմ ափսոսի ու ցաւի խողխողուած ընկեր,
Հետեւիր ինձ...

digitised by A.R.A.R.@

Եւ դո՛ւ… Աւարայրի անխոնջ յարալէզ.
Դու պերճախօս Քերթողահայր.
Անա՛հ մռնչացող առիւծ.
Դո՛ւ՝ որ ՀԱՅՐԵՆԵԱՑ Սիրոյ համար
Խոնարհ զանգուածները զօրակոչեցիր,
Ու նրանց շարքերը վրէժի ուժագոռ
Թռուիչքի վերածեցիր…

Դո՛ւ՝ Աւարայրի փոթորկաշունչ մրրկահաւ.
Դո՛ւ՝ ահեղ ամպրոպ,
Դո՛ւ՝ ռազմի Քայլերգ հեռագնաց.
Դո՛ւ՝ անօրինակ ռազմաշունչ հայր
«Բլբուլդ Աւարայրի»
Ղեւոնդ Երէց —
Հետեւի՛ր ինձ:

Իսկ դու, Եարճանեան Ատոմ,
Խոհ ու Խռովքի հանճարեղ Քերթող.
Վահագնեան տարուշանի բոցերում թրծուած,
Ազատախոհ ու յաւերժամռունչ դիւցազներգակ —
Սիամանթօ…

Գրիչդ հայրենի հողից ծլարձակած՝
Եղէգան լուսայորդ փող.
Մելանդ հայի վառ արիւնով թաց,
Եւ ցեղիդ շունչը
Երգերիդ հէնքը եւ հերկը վերածած.
Դո՛ւ՝ անկրկնելի ու անխորաչափելի
Հանճարեղ երգիչ:
Դու խոշտանգուած ու խողխողուած
Իմ ախոյրի հպարտ ընկեր,
ՍԻԱՄԱՆԹՕ՝ եկ ինձ հետ:

Եւ վերջապէս դո՛ւ,
Հայկազուն փաշա,
ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ:

Դո՛ւ՝ հայրենի մոխիրների ու աւերների վրայ
Շքեղօրէն յառնած ՀԱՅՈՑ ԳԱՐԻԲԱԼԴԻ:
Դո՛ւ՝ արիւնկզակ ու մոլեխենդ
Ոսոխների սիրտը մխուած
Արդար դաշոյն:

Դո՛ւ՝ որ սովահար ու վտարանդի
Մնացորդից «ԱՐԻ ԱՐԱՆՑ» Բանակ կազմած՝
«ՄԱ՛Հ ԿԱՄ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ» կանչեցիր…
Դո՛ւ՝ պատմակերտ
Հպարտ ասպետ,
Դու սուրբ Գոյամարտ…
Սարդարապա՛տ:

digitised by A.R.A.R.@

Դո՛ւ՝ հայրենիքի ոսոխի պիղծ
Ճակատը խարանող.
Դո՛ւ՝ հրաշապատում զօրագունդ,
Ցեղիդ ամբողջական կամքը խտացուած,
Դո՛ւ՝ անտեղիտալի ըմբոստութիւն.
Դո՛ւ՝ Սուրբ ՅԱՐՈՒԹԻՒՆ...
Դո՛ւ՝ գերիվար զօրակերտ,
Դո՛ւ՝ ՍԱՐԴԱՐԱՊԱՏՈՒՄ.
Հայրենի հողում, դէպի երկինք բարձրացող
Սրբատաշ յուշակոթող:
ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Ե՛կ... Օգնի՛ր ինձ...
Ո՛ւժ տուր ինձ...
. . . . . . . . . . . »

***

Հիմա Կոմիտասը մենակ չէ.
Հայոց մտքի, հաւատքի եւ ուժի ուխտեալների
Լուսեղէն փաղանգը շրջապատել է նրան.
Նա մենակ չէ...

Ընտրեալների դասը
Վերանում է, ամբառնում
Դէպի բարձրունքները ծիրանաշող.
Դէպի հայրենի սուրբ լեռը,
Դէպի Մասիսն ի վեր...
Կոմիտասը այլեւս մենակ չէ:

Եւ ահա՛,
Նոր Յարուցեալի խաչը ուսին,
Նրանց միանալու է գալիս
Նայիրի մի ըմբո՛ստ պոետ:
Նա կրում է պղնձագոյն մի տաւիղ,
Աչքերում վառւում է հրաքորք
Նայիրեան կրակ,
Իսկ սրտում,
Իր հրաքորք սրտում,
Արձագանգում է «Խելագարուած ամբոխներ»ի
Զրնգուն ճիչը վերջին...

*Զարենց.—* «Կոմիտա՛ս, Կոմիտա՛ս»
*Կոմիտաս.—* «Ի՞նչ ունես, Զարենց»
*Զարենց.—* «Պատգամ»...
*Խումբը.—* «Քո պատգամը, Զարենց,
Մեր հրէ կամքն է վերջին,
Եւ անխախտ ուխտը մեկին.
Մեր հաստու խօսքը աւանդ ձգած

digitised by A.R.A.R.@

Հայ մնացորդներին...
Քո թէժ կամքը
Մեր կամքն է վերջին —
Մեր ուխտը մեկին,
Խօսի՛ր, Զարենց...»

*Զարենց* — «ՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՔՈ ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ
ՔՈ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԷՋ Է»։
..., Իսպառ ցամքել է Կոմիտասը,
Հայոց Սուս աստուածը:
Ցամքել է, որ դառնայ մոմիա,
Որ գնայ անհուն դառնայ,
Ու հայրենի հողում պանթէոն գտնի,
Ու ձուլուի՛, մերուի՛ հայրենի հողին,
Եւ որպէս Յուշարձան
Երեւանում վե՛ր բարձրանայ...։

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

*Յանկարծ վեր եմ ցատկում քնից, ճակատս այրւում է, նկատում եմ, որ սեղանի ելեկտրական ճրագը ընկել է ճակատիս եւ խանձել է նրա մորթը ... ճրագը մարում եմ... անթափանցելի խաւարը պատում է ինձ եւ ես կրկին նիրհում եմ...*

## Բ.— ԵՐԲ ՀԻՒԱՆԴՍ ՊԱՏՄՈՒՄ Է ԻՐ ՈՃԻՐԸ

Ո՞վ կու լայ այսպէս խշտեակիս չեմքին,
— Քո՛յր դարիքն է, բաց...
Կմա՞խք մը կ'անցնի դուրսէն լալագին...
— Սո՛վն է, դուռդ բաց...
Տապա՞րն է ջախջախ դրանս կուրծքին.
— Ձա՛րդն է, դուռդ բաց...

Ռ. ՍԵՒԱԿ

*Առաւօտեան արթնանում եմ, երբ լուսամուտից ներս էին ընկել արեւի թրթռուն ճառագայթները ու գարնանային հովը այրուած ճակատս էր շոյում... սակայն մի ինչ-որ յուշ նեղում էր ինձ... յիշում եմ անցեալ գիշերուայ երազս... ու հոգուս խորքում ծնւում են զանազան իրերամերժ զգացումները։*

digitised by A.R.A.R.@

Հապճեպ հագնւում եմ, սառը ջրով լուացւում, մի բաժակ սուրճ խմելուց յետոյ անցնում եմ հիւանդներիս այցելութեան։

Մի ներքին ուժ ինձ մղում է նախ այցի գնալ Զաւիդ Խալիլ Օղլիին... ու ես ինձ գտնում եմ նրա սենեակի շեմքին...

Նա իր անկողնում նմանւում է կծկուած թելակոյտի, նրա դէմքը գունատ է մոմի աղօտ լոյսի պէս, աչքերն խորն ընկած անթարթ հայեացքով նայում է ինձ ու ես նրանց մէջ աղերս եմ տեսնում...

Մօտենում եմ նրան ու ակամայից ձեռքս դնում նրա ուսին եւ մեղմ հարցնում.

— Այսօր ի՞նչպէս էք, գիշերը հանգիստ անցկացրի՞ք, թոյլ կը տա՞ք հիմի անցնենք մեր բժշկական քննութեան։

Յանկարծ նրա գունաթափ դէմքը լուսաւորւում է յուզմունքից ու նա հեկեկալով այսպէս է պատասխանում.

— Գիշերը անց եմ կացրել կէս քուն, կէս արթուն վիճակում... շնորհակալ եմ, թող Ալլահը եւ Օմարը ձեզ երկար կեանք տան... սակայն ուրախ չեմ բժշկական քննութեան ենթարկուելու համար, հոգի՛ս բուժիր, բժի՛շկ, հոգեկան տանջանքներիս հետ ծանօթացիր եւ գիտցիր, երբ հոգեկան ու մարմնական ցաւերը իրար են ձուլւում՝ մարդուս տանջանքը կրկնապատկւում է եւ բուժման որեւէ յոյս գոյութիւն չի ունենում։

Ես արդէն կռահում եմ, որ մի շատ հետաքրքրական հիւանդի հետ գործ ունեմ... հետեւաբար աւելի լաւ է նախ նրա հիւանդութեան պատմութեան հետ ծանօթանամ եւ ապա սկսեմ բժշկական քննութիւններս, նրա ցաւը ախտորոշելու... հետեւաբար նրա անարի մօտ նստելով հարցնում եմ.

— Արդեօք ցանկութիւն ունէ՞ք պատմելու ձեր հիւանդութեան մասին, ա՛յն օրից, երբ սկսեց ձեզ անհանգստացնել։

Եւ ծերունի հիւանդը դառնում է աւելի տխուր ու խղճալի մի արարած, նա իր արցունքները կուլ տալով այսպէս է ասում.

— Հինգ ամիս է ինչ օրուայ որոշուած պահերին, յանկարծ կոկորդս սկսում է սեղմուել, գլուխս պտտւում է, աչքերս լցւում են մշուշով, ականջներումս սկսում են տեղաշարժ ձայներ լսուել ու կարծես թէ խեղդւում եմ... կարծես թէ մի վրիժառու ոգի ինձ կախաղան է հանում, բայց ես չեմ խեղդւում, չեմ մահանում, այլ տեսնում եմ ու վերապրում այն պահերը, այն րոպէները, երբ ես, իմ այս չարագործ ձեռքերովս, ոճիր գործեցի։

Տեսնում եմ, որ հիւանդս ցնցւում է, նրա երեսի մկանները պրկւում են ու սկսում են դողալ։ Աչքերից երկու կաթիլ արցունք է գլորւում չորացած այտերի վրայ... եւ նա դառն հեկեկալով այսպէս է շարունակում։

— Գիտեմ, որ բժիշկը իր հիւանդների գաղտնիքները իրաւունք չունի դրսեւորելու, սակայն ես կ'ուզէի դուք իմ կեանքի դժբախտ պատմութիւնը դարձնէիք բոլորի սեփականութիւնը, որ բոլորը հասկանային, թէ մի ոճրագործ իր կեանքի վերջին օրերին ինչպիսի անպատմելի հոգեկան տանջանքների է ենթարկւում։

Ես նկատում եմ, որ նրա կրծքից պոկւում է մի ծանր հառաչանք, անմխիթար, երկար, շա՜տ երկար հեկեկում է ու այսպէս է շարունակում իր կիսատ թողած խօսքը.

— Յիսուն հինգ տարի առաջ, մեր գեղատեսիլ երկրում գարուն էր, ամէն ինչ նորից ծնւում էր եւ ամէն մի բոյս իր նոր կեանքն էր վերսկսում... մեր ընտանիքը ուրախ եւ զուարթ ապրում էր Զանգեզուրում... հայրս հարուստ էր եւ մենք ոչ մի բանի կարիք չունէինք... եւ ահա՛, յանկարծ մի

digitised by A.R.A.R.@

տխուր օր մեծ քոյրս, գեղանի քոյրս հիւանդացաւ, ու դառնութիւն թափուեց մեր սրտերին, գեղատեսիլ քրոջս աչքերի փայլը սկսեց մարել եւ նա սկսեց նուաղել, մաշուել ու հիւծուել: Հայրս իր գլուխը կորցրած՝ սկսեց դիմել դրացիներին ու տեղական հեքիմներին, սակայն բոլորը ապարդիւն անցան:

Դառնութիւնը ծուարել էր մեր սրտերին, մեր ընտանիքի բոլոր անդամները աղօթելուց բացի ուրիշ բան չէինք կարողանում անել... սրտաբեկ ու յուսահատ սպասում էինք ճակատագրին:

Յանկարծ մի գեղեցիկ օր, մի յուսատու օր, հայրս ուրախացած տուն գալով աւետեց:

«Վաղը, առաւօտեան մեր գիւղն է հասնելու գաղթաւորների դէպի մահ քայլող քարաւանը: Ասում են նրանց մէջ մի ուսեալ բժիշկ կայ... գուցէ նա կարողանայ բուժել մեր Ֆահիմէին... գուցէ բախտը մեզ ժպտայ»:

Մեր ընտանիքի անդամները այդ գիշեր անհամբեր սպասեցին արեւի ծագումին... չէ՞ որ մեր սիրելին հիւանդ էր, ու նրա բուժման համար յոյսի մի փոքր բոց էր սկսել շողալ:

Միւս առաւօտեան, երբ լուսաբացի կապտաւուն մշուշը ցրւում էր, մեր տան դուռը թակեցին... մի քանի զինուորներ իրենց հետ բերել էին ցնցոտիների մէջ կորած, արիւնոտ, մերկ ոտքերով ու յոգնած դէմքով մի մարդ... նա խոժոռ էր, շրթունքները տանջանքից ամուր իրար սեղմած, որոնող աչքերով ներս մտաւ մեր շեմքից... Հայրս զինուորներին արձակելով այսպէս ասաց այդ մարդուն...

«Քեզ ազատելով մահուան քարաւանից մեր տուն եմ բերել, գիտեմ որ Եւրոպայի [illegible] գիտութիւն ես ամբարել օգնելու մարդկութեան, նրանց ցաւերը ամոքելու, դու պարտաւոր ես հիւանդ աղջկանս բուժել»:

Ցնցոտիներ հագած այդ մարդը կանգնել էր հօրս դիմաց, վեհ ու անըմբռնելի... Ես նկատեցի, որ նրա աչքերից լոյս է ցայտում եւ այդ լոյսը ինձ յուսադրեց, որ նա կարող է քրոջս բուժել:

Մեր ընտանիքի համար եղաւ անսպասելին, այդ գեավուր բժիշկը մի քանի օրում հմտօրէն բուժեց գեղանի քրոջս... մեր տանում ուրախութիւնը եռում էր ու այդ ցնցոտիներ հագած մարդը քրոջս փրկիչն էր... Հայրս նրան ասաց.

«Լսիր, գեավուր բժիշկ, դու քո հնարամտութեամբ փրկեցիր աղջկաս կեանքը, փոխարէնը ես պատրաստ եմ քո կեանքը փրկել, միայն մէկ պայմանով, որ դու հաւատափոխ լինես ու դառնաս իմ փեսան»:

Քրոջս փրկիչը երկար լռեց... ես զգացի, որ նրա սրտում ու հոգում մի ահարկու շանթ է կուտակուել, որը յանկարծ պիտի ժայթքէր... ու ես նկատեցի նրա դէմքին մի հեգնական ժպիտ, որը մինչեւ այսօր չեմ կարողացել մոռանալ:

Այդ մարդը, այդ պահին կարծես մի սուրբ էր լուսարձակ, նա վրդովուած այսպէս պատասխանեց հօրս:

«Ես ուրացող չեմ, ես չեմ կարող ձեռք քաշել կրօնիցս, որը միաձուլուած է ազգութեանս հետ: Ես անձնապէս շատ շնորհակալ եմ ձեր մեծահոգութեան համար, որ ցանկանում էք շնորհ անել ու ինձ փրկել մահուան քարաւանին միանալուց... սակայն, ես գերադասում եմ մեռնել հազարաւոր արիւնակիցներիս նման, քան ապրել մի մարդու յարկի տակ ու վայելել նրա աղջկայ գեղեցկութիւնը, որը պատկանում է աստուածային սեղ-

digitised by A.R.A.R.@

*ծագործութեան գեղեցկագոյնը՝ մարդուն։ Դուք սպանում էք արեւին, ծաղիկներին, պղծում էք հողն ու երկնքի լազուրը... ես երբեք ոճրագործների մէջ չեմ կարող ապրել»։*

*Նրա շրթունքների խորքում ես տեսայ ծուարած հեգնական մի ժըպիտ, որը պատմում էր, թէ այդ յանդուգն գիտնական հայը մահն էլ է հեգնում, դահիճներին էլ։*

*Հայրս ջղագրգիռ ու անխղճօրէն այսպէս պատասխանեց.*

*«Ուրեմն միացի՛ր ընկերներիդ... միացի՛ր նրանց մահուան քարաւանին։ Ես ցանկացայ ճակատագիրդ փոխել, իսկ դու մերժեցիր, քո մեղքը քո վզին»։*

*Այդ գիշեր ես քուն չեղայ, մտածեցի հօրս դաժանութեան ու եղեռնագործութեան համար, սակայն ապարդիւն։*

*Միւս առաւօտ հայրս ինձ արթնացրեց. ես մէկէն սթափուեցի այրող մտքերիցս... կարծես թէ նախազգում էի, թէ ի՞նչ ահաւոր ու անտանելի ապագայ է սպասում ինձ։*

*Ես հօրս ու նրա ասկեարների հետ քայլեցի գիւղից դուրս, ուր մահուան քարաւանն էր կանգ առել։ Ես նրանց մէջ նկատում էի լալագին աղօթող կանայք եւ նրանց աչքերում, տեսայ ստորացումից ժայթքած արցունքներ, աղաղակներ ու աղերսներ։*

*Եւ մենք հասանք գեավուրների մահուան բաղանիքը... ամէն տեղ արիւն էր հեղուած... հօրս հրամանով չորս գեավուրների ձեռները պարանով իրար կապեցին, նրանցից մէկը այն խոհուն բժիշկն էր, որը քրոջս կեանքն էր փրկել... ես չէի յանդգնում նայել նրա աչքերին...*

*Հայրս ինձ իր մօտ կանչելով ասաց.*

*«Օմար, այսօր քեզ համար մի տօնական ու շքեղ օր է, այսօր դու առաջին անգամը լինելով ձեռներդ պիտի թաթախես գեավուրի արեան մէջ... է՛կ... մօտեցի՛ր... մի՛ սարսափիր... դու էլ ինձ նման Ալլահի արքայութեան պիտի արժանանաս։*

*Եւ անողորմ հայրս բռնի կերպով ափիս մէջ սահեցրեց իր արծաթեայ դաշոյնը... արդէն հօրս ցուցմունքներով գետին էին տապալուել չորս անզէն դատապարտեալները... հայրս կարծես վայրենի էր դարձել... ինձ հրելով տարաւ նախ դէպի այն բժիշկը, որը քրոջս էր բուժել եւ նրա կեանքը փրկել... իմ ձեռներն անզօր էին... սակայն հօրս ուժեղ բազուկը օգնեց ինձ ու դաշոյնը մխուեց այդ բարի մարդու կրծքի մէջ... կարմիր ու տաք արիւնը շատրուանի պէս դուրս ցայտեց... մէկէն տեսողութիւնս կարմրեց, գլուխս սկսեց պտտուել, աշխարհը մթնեց ինձ համար ու ես ուշագնաց լինելով՝ այլեւս չհասկացայ, թէ ինչ է կատարւում իմ շրջապատում։*

*Մի քանի օր տկար պառկում էի տանը, քրոջս դրութիւնը աւելի վատթարացաւ, նա խելագարուեց... սկսեց իր մազերը փետտել ու տնից փախաւ... մէկ շաբաթ յետոյ նրա դիակը գտանք մի ծառից կախուած... նա իրեն կախել էր։*

*Ես այդ աղէտալի դէպքից յետոյ փախայ ծննդավայրիցս, սկսեցի թափառել քաղաքից քաղաք եւ երկրից երկիր անցնել ու վերջապէս հասայ այս հիւրընկալ ու խաղաղասէր մարդկանցով լի քաղաքը, ու նրա մզկիթներից մէկում դռնապան եղայ... ես երկար տարիներ ծառայել եմ Ալլահին, որ նա ների իմ յանցանքը, սակայն ներելու փոխարէն կեանքիս վերջալոյսին ինձ տուել է այս անտանելի հիւանդութիւնը։*

*Ամէն օր ու գիշեր կոկորդիս ցաւերը սաստկանում են եւ ես խեղդա-*

digitised by A.R.A.R.@

*ժամի պէս եմ լինում, այդ պահերին աչքիս առաջ է գալիս մահուան այն անտանելի պահը, որի մեղսակիցը ես էի ու իմ ժողովուրդը»:*

*Վերջանում է Թուրք հիւանդի պատմութիւնը...*

*Երբ նրա վիզն եմ քննում, նկատում եմ, որ ուռուցքը նման է մի օձի, որը փաթաթուել է նրա վզին ու կոկորդին: Հետագայ քննութիւնները ապացուցում են, որ նրա շնչափողը բռնուած է առաջացած քաղցկեղով:*

## 3.— ՏԱՆՋԱԼԻ ՀՈԳԵՎԱՐՔ

Ե՛ս կ'ուզէի զձեզ խարանել եւ ես կ'ուզէի մուրճերուս
եւ կռաններուս կատաղութեանցը տակ
Ձեր ոսկորներն եւ ձեր եղեռնագործի ճղճիմ գանկերն
աւազներու նման փշրտել...
Ե՛ս կ'ուզէի զձեզ գարշապարներուս տակ առնել, ես
կ'ուզէի զձեզ մահացնել եւ ե՛ս վերստեղծել,
Ե՛ս կ'ուզէի զձեզ աստուածաբար հազար անգամ
վերստեղծել եւ ե՛ս նորէն կ'ուզէի հազար անգամ
գերեզմանել...

Ա՜հ, մահը գթութիւն է ձեզ համար եւ խարոյկներուն
հուրը՝ մարտիրոսի փա՜ռք:
Ձեր օրրանը ցեխը եղած է եւ ձեր օթեւանը
ճահիճներու ժահրը պէտք է ըլլայ,
Աքցաններով ձեր միսը, հիւլէ առ հիւլէ, ժլատօրէն,
ծուծկալօրէն պէտք է քերծել,
Եւ տարիներով կաթիլ կաթիլ քամին հանել,
ձեր արիւնէն, նախնիրակեր բորենիներու
ծարաւին...

ՍԻԱՄԱՆԹՕ

*Թուրք հիւանդիս խոստովանութիւնը ինձ հոգեկան խռովք է պատճառում... ուրեմն նա մէկն է այն դահիճների զաւակներից, որոնք կարճեցին մեր մշակոյթի եւ գրականութեան կենդրոնական դէմքերի բեղուն կեանքը եւ մեր մեծագոյն քնարակիրներին, որոնք իրենց արտակարգ տաղանդի լուսարձակով լուսաւորուած քայլում էին լոյսի ուղիներով:*

*Նրանք այդ ուղին կարելով իրենց անմարելի հուրը վառեցին մեր արիւնոտ դարի ճակատին ու իրենց արժանավայել տեղը գրաւեցին մեր պատմութեան ոսկէ մատեանում:*

*Հիմա նրանց լուսապայծառ հոգիները դեռ թրթռում են օդի մէջ, իրենց խօսքը ասելու, իրենց պահանջը փոխանցելու մեզ՝ վերապրողներիս:*

*Խռովայոյզ հոգիս թելադրում է վրէժ առնել ոճրագործի զաւակից. բայց գիտակցութիւնս չի ընդունում դա, առարկելով, որ Հայը ոճրագործ չէ. նա իրաւունք չունի եւ չի կարող Աստծու վարդակարմիր արեւի տակ մարդ սպանել...*

*Այսպէս անցնում են շաբաթներ եւ ես ամէն օր այցելում եմ Թուրք հիւանդիս: Նրա վիճակը օրէց օր վատթարանում է ու նրա կոկորդի ուռուցքը մեծանում է եւ օղակում նրա վիզը, որը կախաղանի պարանի նման սեղմում է նրա շնչափողը, նրան դարձնելով մի խղճալի արարած:*

digitised by A.R.A.R.@

Մի օր, այցելութեան ժամանակ, նա այսպէս է ասում.

«Ի սէր Ալլահի, վերջ տուր ցաւագար կեանքիս… ես այլեւս դիմանալ չեմ կարող… ես խոստովանեցի իմ յանցանքը… ես այլեւս դիմանալ չեմ կարող… մի՛ վախենայ, մի ոճրագործի՝ այն էլ անբուժելի հիւանդութեան ճիրաններում գտնուողի կեանքին վերջ տալու համար, քեզ ոչ ոք չպիտի դատապարտի»։

Նրա ծանր եւ զղջուն աչքերի մէջ արցունքներ են երեւում։

Ես չգիտեմ ի՛նչ պատասխանել այդ մարդուն, որը զղջման ու տառապանքի խայթից յաղթահարուած, ինձանից պահանջում է անկարելին. իմ ներսում եռացող մտքերից սթափուելով այսպէս եմ ասում…

— Լսիր, Օմար, ոչ մի բժիշկ իրաւունք չունի իր հիւանդի կեանքի թելը կտրելու, դա ոճիր է… մենք սովոր չենք սպանելու, մենք ազնուին, գեղեցիկի, լոյսի սպասարկուներն ենք։ Մեր հոգում արեւը երբեք մայր չի մտնում եւ լոյսի ջահը երբեք չի ծրարւում խաւարով… գիտցիր, որ մեր մտորումների, մորմոքների եւ յուզումների հիմնական երակը ստեղծելն է, ոչ թէ աւերն ու մահը։ Մենք միշտ լոյս ենք տենչում եւ խորշում ենք խաւարից։

Թուրք հիւանդս լսում է խռոված դէմքով, նա իր շուրթերը ամուր իրար սեղմած՝ որոնող աչքերով նայում է ինձ…։ Յանկարծ նա ցնցուեց, ու ես նկատեցի նրա աչքերից երկու կաթիլ արցունք ցած գլորուեցին, նա լալագին այսպէս մրմնջաց.

— Ինձ համար արդէն պարզ է, որ ես գտնւում եմ մահուան ճիրանում. ես գահավիժել եմ մի անդունդ, որտեղ օձեր են սողում վզիս վրայից… ես սոսր մի արարած եմ ու տառապանքից ժայթքած դառն արցունքները այտերիցս չեն չորանում… մի՞թէ դու Աստուած չունես, գութ չունես, որ աղերսս չես լսում… ես ցանկանում եմ հանգիստ ու հանդարտ մեռնել։

Եւ նա լռեց… ես էլ լռեցի։ Սրտումս կուտակուած շանթ զգացի, որ եթէ թոյլ տայի լեզուս պիտի ասէր, որ իր ցեղը բարոյազուրկ է, նա խաւարի ու աւերի զաւակ է, մի մարդ, որի բերանից իմ սիրելիների արիւնն է կաթկթում, նա մի ժողովրդի զաւակն է, որ խաւար ու մահ սփռելուց բացի ուրիշ հորիզոն ու մտասեւեռում չունի։ Սակայն նորէն հոգումս խօսում է հայ բժշկի խիղճը, որը յաղթանակում է ներքին «եսիս» եւ նրան այսպէս եմ պատասխանում։

— Գիտեմ, ցաւերդ անպատում են ու գիտեմ, որ դու դարձել ես տառապանքիդ բռնակիրը, գիտեմ, որ քո սպանած մարդկանց հոգիները թըրթռում են օդի մէջ եւ հենց դրա համար էլ ձեր ամենակարող Ալլահը քեզ շանթահարել է, որ զգաս ոճիրիդ անքաւութիւնը։

Վերջին նախադասութիւնը ակամայից դուրս թռաւ կոկորդիցս։

Նայելով հիւանդիս դէմքին՝ զգացի, որ նրա երեսի վրայ տհաճութեան մռայլ անցաւ, նա կարծես կենսունակութիւն ձեռք բերելով՝ այսպէս գոռաց.

— ՈՒՐԵՄՆ ԴՈ՞ՒՔ ԷԼ ՀԱՅ ԷՔ… ԱԼԼԱ՛Հ… ԱԼԼԱ՛Հ… ՆԵՐԻՐ ԻՆՁ, ՈՐ ԱՅՍ ԱՆՀԱՒԱՏ ՄԱՐԴՈՒ ՄՕՏ ԽՈՍՏՈՎԱՆԵՑԻ ՄԵՂՔԵՐՍ…

Նրա այդ խօսքերը հրաշէկ երկաթի նման այրեցին հոգիս… Թուրքը իր համոզումն է տալիս, սաստ մի ներքին ձայն, ու նորէն ներքին «եսս» գլուխ բարձրացնելով բողոքեց։ Ես թոյլ էի տուել, որ նա ապրէ, շնչէ ու ողջունի արեւի անմեղ ճառագայթներին… սակայն նորէն կարողացայ ներ-

digitised by A.R.A.R.@

ջին խումբս ու հոգեկան պայքարներս սանձել... ու նողկանքով ասացի, իմ թաքուն զայրոյթը կոտրելու նպատակով.

— Զգիտեմ ինչո՞ւ բախտը թէ պատահութիւնը մեզ դէմ յանդիման է հանել... ինչո՞ւ մենք այսպիսի պարագաներում պիտի հանդիպէինք իրար... եթէ ճակատագիրն է տնօրինել, ես անիծում եմ այդ դժխեմ ճակատագիրը... իսկ եթէ բախտի քմահաճոյքն է, որ մեզ դէմ առ դէմ է կանգնեցրել, այդ ուրիշ բան է:

Եւ ես դժկամութեամբ լռեցի...

Նա, հիւանդս սկսեց ցնցուել, ամբողջ հասակով, սկսեց օձի նման գալարուել, աւելի գունաթափուեց... անթարթ աչքերը յառեց դէպի առաստաղը եւ սկսեց հառաչել, ախ քաշել... ու իր չորացած մատներով մազերը փետտել:

Ես նրան մի թմրեցուցիչ ներարկեցի եւ երբ արդէն քնել էր, դուրս եկայ նրա սենեակից:

Կեանքումս առաջին անգամը լինելով խղճացի մի ոճրագործի համար, ներեցի նրան, բայց ներսումս ասացի. «Ո՛վ մարդ, մենք կռուի դէմ անհաւասար չենք, բայց դու, որ քո ձեռներովդ փորել ես անդնդախոր գերեզմանդ, յանցանքիդ հետ համահաւասար, ի՞նչ ես սպասում ինձանից. վրէ՞ժ լուծեմ, կեանքիդ վե՞րջ տամ... ո՛չ, այդ չեմ անելու»:

Միւս առաւօտ, երբ այցելեցի Թուրք հիւանդիս, նա արդէն կիսագիտակից վիճակում էր գտնւում... անդադար «Ներէ՛ր, Ներէ՛ր» էր աղաղակում, ու աջ ձեռքը վեր բարձրացնելով՝ խփում էր իր կրծքին ու աղիողորմ ճիչեր էր արձակում... ես գիտէի, որ երբ նա հարուածում է, քաղցկեղի հետեւանքով նրա հիւծուած ոսկորները փշրւում են ու աւելացնում նրա տանջանքները:

Մի քանի րոպէ յետոյ, նա վերագտնելով իր գիտակցութիւնը աղերսագին ասաց.

— Ներիր ինձ, ես երէկ այն անպատկառ արտայայտութիւնը արած պիտի չլինէի... Ներիր, գիտեմ շուտով պիտի մահանամ, սակայն ցանկանում եմ, որ դու ներես իմ բոլոր մեղքերի համար, թող հանգիստ սրտով մեռնեմ ու հեռանամ այս աշխարհից... խղճա՛ ինձ, ներէ՛ր ինձ քո հայի ազնիւ մեծահոգութեամբդ:

Այդ հիւանդը ինձ դրել էր մի անորոշ կացութեան մէջ, սակայն նրա տառապանքը ի նկատի ունենալով ասացի.

— Օմար, ներում եմ քո արտայայտութիւնը միայն:

Եւ ես նկատեցի, որ նրա տառապած ու անհուն տանջանքներ կրած սիրտը սկսեց ալեկոծուել... նա մէկէն աշխատեց իր տեղից վեր կենալ, սակայն ճչաց ցաւերից, հեկեկալով ասաց.

— Բժի՛շկ... բարձիս տակ մէկ հատ կապոց եմ պահել եւ դա ցանկանում եմ քեզ յիշատակ տալ... վերցրու դա, միայն թէ՝ խնդրեմ, երբ որ մահանամ՝ այն ժամանակ բացիր:

Ես տհաճ մօտեցայ նրա սնարին ու նրա բարձի տակից հանեցի կապոցը... ձեռքերիս մէջ կարծես հրաշէկ կրակ լինէին, այրում էր անողորմ... քիչ յետոյ նկատեցի, որ նա ընկել է հոգեվարքի մէջ:

Նրա հոգեվարքը երկար է տեւում, հինգ երկար ու ձիգ օրեր, որի ընթացքում նա անպատում տանջանքներ է կրում, նա ցաւերից անդադար գալարւում է, նրա մարմինը կորանում է, ձգւում... ժամը մէկ՝ նա կիսագիտակից է դառնում եւ հազիւ լսելի ձայնով ոռնում է.

digitised by A.R.A.R.@

«Ներեցէ՛ք ողիներ, թոյլ տուէք հոգիս ազատուի սեւ օձերի անպատիւցս·

Եւ նա դարձեալ լռում է քարի պէս…

Ամէն անգամ, երբ նրա գալարումները վերջանում են, նա իր աջ ձեռքը թափով վեր է բարձրացնում, կարծես թէ ցանկանում է իրեն դաշունահարել… Ու նա ամուր հարուածում է իր հիւծուած կրծքի վանդակին, որը փշրւում է չորացած հացի պէս… անտանելի ցաւեր առաջացնելով։

Նա շնչահեղձ է, հինգ օր շարունակ խեղդամահ վիճակում, խզխզացնում է եւ թանձր լորձունքը հաւաքւում է նրա շրթունքներին։

Ես գիտեմ, որ դժուար է խախտել այդ անտանելի կացութիւնը, պիտի սպասել, որ նրա կեանքի թելը կտրուի։

Վերջապէս հասնում է այն պահը, երբ մահը իր սեւ թեւերն է սփռում եւ ամէն ինչ, ամէն ցաւ ու տանջանք վերջանում է…

Թուրք հիւանդը իրիկնադէմին մահացաւ…

Նա ընդմիշտ լռեց սեւ քարի պէս…

Դրանից յետոյ, իմ մտքերը մի պահ խառնուեցին… յանկարծ ուղեղումս մի միտք փայլատակեց, տեսնել, թէ նա ի՛նչ է նուիրել ինձ։

Հապճեպ հասնում եմ սենեակս, նրա տուած գունաթափ թաշկինակի միջից ջղագրգիռ ձեռներով բացում եմ կապոցը ու նրա մէջ գտնում եմ մէկ հատ հնամաշ ժամացոյց եւ մի հատ կոտրուած ինքնահոս… Ես մնում եմ շուար ու շփոթ… ինքնահոսի վրայ նկատում եմ երկու քանդակուած տառեր… Ռ. Ս. … Աստուա՛ծ իմ… գլուխս սկսում է պտտուել, հոգեկան ներաշխարհս լեցւում է յուզմունքով, ամէն ինչ ինձ համար պարզւում է, այդ երկու սրբազան մասունքները ուրեմն պատկանելիս են եղել մեր անման գրագէտ ու անզուգական մարդասէր բժիշկ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿին…

Այդ կոտրած ու հնացած ինքնահոսը ինձ համար դառնում է մի սրբազան մասունք եւ նրա տիրոջ անունը իմ հոգում դառնում է փառքի ու անմահութեան յուշարձան։

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Նայում եմ դիմացս, կապոյտ երկնքում փոքրիկ ամպի կտորները նազանքով յետ ու առաջ են սահում… սակայն մտքերիս սեւ ամպերը կուտակւում են իրար վրայ… Ես լռում եմ… սակայն հոգիս անհանգիստ է… լռութիւնը գուցէ հանգիստ տայ այրուող հոգուս…։

Է. Ս. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ
(արձակ)
ՀԱՅԿ ՅՈՎՍԷՓԵԱՆ
(բանաստեղծութիւն)

digitised by A.R.A.R.@

ՍՈԱԿ

# ՀՍԿԱՆ ԵՐԲ ԱՐԹՆՑԱՒ...

Պապըս հուժկու, պարթեւ հսկայ,
Որսի կ'երթար միշտ ալ մինակ.
Հըրացանը զարդն էր ուսին,
Երէն կ'ըլլար զոհ թակարդին:
Լեռնապատառ շուքին ի տես
Կը փախչէին արջ ու աղուէս:
Օր մը յոգնած, խորն անտառին
Կ'երկննայ քիչ մ'անշարժ՝ հողին:
Հոտը կ'առնէ մէկ շրջագայլ,
Կը մօտենայ ծի՛ր, անայլա՛յլ...
Ձայն չի հաներ պապըս որսկան:
«Փարթամ ճաշ է ծերն անկենդան», —
Կ'ուրախանայ շրջագայլն, ու՝
Նստած պապիս կուրծքին հուժկու,
Դունչը հովին՝ ընկերներու
Կոչունք կ'ընէ. «Եկէ՛ք, հո՛ւ, հո՛ւ,
Ամէն մէկուդ բաժի՛ն առատ,
Ցեղակիցներս իմ հարազատ,
Ճաշկերոյթս է արքայակա՛ն»:
Ամէն կողմէ խումբ-խումբ կու գան
Բարեկամներ նօթի, ծարաւ.
Կը լըզուըրտեն, կը հոտուըտան
Ձեռքը, ոտքը, մօրուքը թաւ...
Ծերը չի տար կեանքի նըշան...
Կը պատրաստուին ճաշին փարթամ:
Պապըս որսկան՝
Կը նըկատէ ժամը հասած,
Կը փըռընգտայ ուժգի՛ն յանկարծ...
Չորս ոտք եղած, սարսափահար
Կը փախչին շո՛ւտ դէպի անտառ՝
Զինակիցներն տաւարառու.
Մեր հերոսն ալ լեռնապատառ
Կը փըչէ շունչն վա՛յրկենաբար
Կուրծքին վըրայ պապիս հուժկու:

Այսպէս պատմեց մէկ բարեկամ
Ու աւելցուց. «Երբ տարաժամ
Զարթնու խորունկ կամ սուտ քունէն,
Հըսկան յանկարծ շարժի տեղէն՝
Գող, ազգադաւ կամ աւազակ,
Մարդ չի մընար հըրապարակ:

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

digitised by A.R.A.R.@

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ Կ'ՈՒԶԵՆ...

●

Ցանցառերը մերը չէ, երբ այս տուններում վրայ աւելցնելիք բան մը չունիմ, — ո՞վ եմ, ո՞ւր ծնած եմ, ե՞րբ սկսած եմ գրել, ի՞նչ գործեր ունիմ հրատարակած կամ հրատարակելի, ի՞նչ ասպարէզի կը հետեւիմ, եւն.։

Բ. Թ.

*Կենսագրակա՛ն կ'ուզեն... Նեղօսի ափերէն մինչեւ Ընքըլ Սէմի հայրենիքը, ծանօթութիւններ կ'ուզեն իմ մասին։ Ամենահամեստ արարածն իսկ կը խանդավառուի, երբ իմանայ, թէ հետաքրքրութեան առարկայ դարձած է, առանց բացալ մը իսկ ինքնամփոփուելու ու գնահատելու իր կատարած գործը։ Անկեղծօրէն խոստովանիմ, որ խառնուածքով համեստ չեմ, սակայն տրամաբանականն ու ծիծաղելին զատորոշելու բացառիկ շնորհքը ունիմ, նոյնիսկ այնքան ծայրայեղութեան կ'երթամ, որ ամենալուրջ խօսքերու, գրութիւններու կամ շարժումներու մէջ իսկ կը փնտռեմ ծիծաղելին եւ... ընդհանրապէս կը գտնեմ։ Բրածս սոփեստութիւն չէ. գիտեմ, եւ կ'ընդունիմ անշուշտ, որ որամիտ մարդիկ շատ կան ու վստահաբար այս խեղճ ներածականիս մէջ վխտացող ծիծաղելիութիւնները նըկատեցին արդէն...*

*Եթէ համեստութիւնը առաքինութիւն սեպեմ, հակիրճ կերպով պէտք է ըսեմ, որ ես ալ մարդու նման ես ալ մարդ մըն եմ...։ Սակայն ինծմէ պահանջուածը խղճմտօրէն կատարելու համար, պարտաւոր եմ մէկդի ձգել համեստը, որ համազօր է անգլերէն* hումպըլ *ածականին, որ ադաւաղուելով Թրքերէնի մէջ դարձած է* խըմպըլ*...*

## Ո՞ՒՐ ԾՆԱԾ ԵՄ ԵՒ Ո՞ՒՐ ԿԱՊՐԻՄ

*Ծնած եմ Պէյրութ քաղաքին մէջ եւ ափսոս չեմ կարծեր, որ հպարտանալու պատճառ մը ըլլայ։ Իսկ եթէ ճշդեմ, թէ ծնած եմ այն* ֆէմքին *մէջ, որ հետագային մոխրացաւ ահաւոր հրդեհի մը պատճառաւ, ամէն ինչ կատարեալ կ'ըլլայ...*

*Զկարծուի, թէ սկսած եմ գրել յուշերս. անհեթեթ կ'որակեմ այդ կասկածը, քանի որ մահուան մօտեցող մարդիկ միայն կը ձեռնարկեն գրի առնելու իրենց յուշերը, մինչդեռ ես նոր է, որ սկսած եմ ապրիլ, առանց նկատի առնելու այն երրորդութիւնը որ ծնած եմ...* ֆէմքի *հըրդեհէն առաջ։*

*Ի դէպ, հպարտանալով ըսեմ, թէ ինքզինքս Պուրճ Համուտցի կը դաւանիմ, քանի որ* ֆէմքի *հրդեհէն ետք, ուրիշ շատ մը հայերու նման, ծնողքս եկած ու հաստատուած են Պուրճ Համուտ, ուր ապրած եմ երեսուն տարի։ Իսկ եթէ հետագայ երեսուն տարիներս անցընեմ Փարիզի մէջ,* բիբիներն *ու մայթերու կիները մազ մը անգամ պիտի չկարենան փոխել այն ազդեցութիւնը, որ դրոշմած է վրաս Սփիւռքի մեծագոյն հայկական աւանն՝ Պուրճ Համուտը։*

*Հիմա կ'ապրիմ ծովէն բարձր վայր մը, Թառած լերան կողին եւ աչքիս առ-*

digitised by A.R.A.R.@

ջեւ կը տարածուի կապոյտ Միջերկրականը, Անթիլիասի վանքը, Պուրճ Համուտն ու Պէյրութը, որոնք մերկացած իրենց կիրքերէն ու աղտերէն, աչքիս առջեւ կը ներկայանան հաւասար մաքրութեամբ։

## ԱՆՈՒՆՍ

Սարգիս Սարգիսեան կը կոչուիմ։ Սարգիսը՝ Ֆարգինցի իմ մեծ հօրս անունն է։ Որբանոցին մէջ հայրս իր Զալոյեան մականունը փոխած է Սարգիսեանի։ Ուրեմն հօրս կողմէ տիգրանակերտցի եմ, քանի որ Ֆարգինը, Տիգրան Երուանդեան Թագաւորի շինած բուն Տիգրանակերտ քաղաքն է։ Մօրս կողմէ վանեցի եմ եւ վստահօրէն կրնամ ըսել, թէ ժառանգած եմ վանեցիներուն բոլոր ունակութիւններն ու առաքինութիւնները, եթէ երբեք վանեցիները առաքինութիւններ ունին...

Սարգիս Սարգիսեան անունը, ամենահասարակ յատուկ անունը դարձած է ինծի եւ ուրիշ շատ-շատերու համար։ Որովհետեւ, միա՛յն Պէյրութի մէջ, այս անուն-մականունը կրող տասնեակ տասներհինգ հոգիի ծանօթ եմ, ու կը վստահեցնեմ ձեզ, թէ շատ անգամ հայհոյած եմ այս անունին եւ այս անունը ինծի տուողին։

Որովհետեւ, քանի՛-քանի՛ անգամներ անախորժ կացութիւններ ստեղծուած են ինծի համար, ու ես ապրած եմ մղձաւանջային ժամեր, որոնց վերյիշումը անախորժ սարսուռներով կը ցնցէ մարմինս։

Սարգիս Սարգիսեան կոչուող հռչակաւոր ոճրագործ մը պատճառ դարձաւ, որ Երուսաղէմի ճամբուն վրայ չորս ժամ ձերբակալուած մնամ յորդանանեան սահմանը, մինչեւ որ հաստատուեցաւ, թէ ես իրենց փնտռած Սարգիս Սարգիսեանը չեմ։

Ուրիշ օր մը, փոքր ծրարներու մաքսատան մէջ, ճի՛շդ երեքուկէս ժամ անհամբեր սպասեցի, պատասխանատուէն եկող անակնկալ նուէրի մը։ Ի՛նչ անուշ վերյիշումներ տողանցեցին մտքիս մէջ։ Ո՞ր անգին բարեկամը ցանկացած էր երջանկացնել զիս իր անսպասելի նուէրով, կը մտածէի, ի՞նչ առիթով կը ստանայի այս նուէրը, որ անկասկած թանկագին ըլլալու էր։ Ինքնասիրութիւնս շոյուած էր եւ որքան հերթս մօտենար, ա՛յնքան կ'աճէին խանդավառութիւնս ու հետաքրքրութիւնս։ Եւ երբ տուփը բացուեցաւ, ո՛վ հայհոյանք, կօշիկի զոյգ մը փայտէ կաղապար։ Ըսի, թէ կը պատկանէր անկասկած կօշկակար Սարգիս Սարգիսեանին, որ հիմա ունի նաեւ պէնզինի կայարան մը, կօշիկի վաճառատուն մը, կաշիի խանութ մը, ուտեստեղէնի քօոփերաթիւ մը, եւ հակառակ այս ծանրաբեռնուած վիճակին, վարչական ու պերախօս գործեր ալ կը կատարէ եկեղեցական, հայրենակցական, մշակութային եւ մարզական մարմիններու մէջ։

Կայ ուրիշ Սարգիս Սարգիսեան մը, որ մսագործ էր եւ որ հիմա, երկու մեծ շէնքերու պահակն է Անթիլիասի մէջ, ու վստահօրէն կարելի է ըսել, թէ լա՛ւ կը կատարէ իր պաշտօնը, քանի որ յիշեալ շէնքերը, երկու տարիէ ի վեր, եղած տեղերնին կը մնան։

Սարգիս Սարգիսեան, Սինեմա Ֆինարի հին պաշտօնեան, տարբեր մէկ արտայայտութիւնն է այս անունին։ Բարի երիտասարդ մը, որ շարժանկարի արուեստին նուիրուելու առաջադրութեամբ սկսած է, եւ սակայն, դժբախտաբար, քսանըհինգ տարիէ ի վեր մնացած է համեստ պաշտօնի մը վրայ։

Շատ անգամ, թերթերու եւ ծանուցումներու մէջ հանդիպած եմ կիթառահար Սարգիս Սարգիսեանին եւ բարդութեանց տեղի չտալու համար, բնաւ չեմ ձեռնարկած կիթառ ածելու հաճելի արուեստին։

Տակաւին կայ «Գասպար Իփէկեան» թատերախումբի դիմայարդար Սարգիս Սարգիսեանը, որ շուկայի վրայ յայտնի վաճառական մըն է։ Անձնապէս, այն թատերախումբին մէջ գործած եմ եօթը

digitised by A.R.A.R.@

տարի, եւ յաճախ, երբ հարցուցած են, թէ դիմայարդարը ի՞նչ եմ, կարճ կապելու համար, գրական պատասխան տուած եմ։

Ուրիշ Սարգիս Սարգիսեան մը կայ, որուն անձնապէս ծանօթանալու պատիւը չեմ ունեցած, սակայն պատեհ առիթով մը, կարծր Քրոշէ մը պատրաստած եմ ծնօտին։ Այս պարոնը ինքնաշարժ վարելու չափազանց քմահաճ ոճ մը ունի կ'երեւի, քանի որ ամիսը նուազագոյնը մէկ անգամ տուգանքի կ'ենթարկուի եւ այդ տուգանքները ես կը վճարեմ, ի սէր խաղաղութեան։

Տակաւին կայ կեղծ ծաղիկներու վաճառումով զբաղող Սարգիս Սարգիսեանը, կայ՝ Փութպոլի Ֆետերասիոնի անդամ եւ Հ. Մ. Մ.-ի վարչական Սարգիս Սարգիսեանը, կան՝ մի քանի ուրիշ Սարգիս Սարգիսեաններ, որոնք կ'արտադրեն եւ կը վաճառեն Պէյրութի լաւագոյն կնոջական կօշիկները, եւ դեռ շատ շատեր, որոնց անձնապէս ծանօթանալու դժբախտութիւնը չեմ ունեցած։

ԻՆ՞Չ ԸՐԱԾ ԵՄ

Չորս տարի դպիր՝ Թիրօ Թաղի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ուրիշ չորս տարի եւս դպիր՝ այս անգամ Էշրէֆիէի Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի մատրան մէջ։ Կիրակնօրեայ ուսուցիչ՝ լուսաւորչականներու եւ բողոքականներու մօտ, դերասան՝ դպրոցին մէջ, Թաղին մէջ, «Լեւոն Շանթ» թատերախումբին, ապա «Գասպար Իփէկեան» թատերախումբին մէջ, տպագրիչ եւ ապա տպարանատէր, գայլիկ եւ սկաուտ, սիքլիստ եւ երկար վազքեր, կոփամարտիկ եւ Փութպոլէօր, նամակագիր, երգիծագիր, բանաստեղծ, երգչախումբի անդամ եւ խմբագիր, հրատարակիչ եւ թարգմանիչ, կուսակցական եւ դաշնակցական։

Ութ տարեկանիս գրած եմ բանաստեղծութիւններ, որոնք դիպուածով մօրս ձեռքը անցած են։ Մայրս, քերթըւածներս տարած է դպրոցի տնօրէն Եղիա Տօլպագեանին, որ, իր կարգին, յարմար դատած է իրմէ աւելի վաստակաւորի մը կարծիքը առնել։ Երբ դպրոցէն արձակուելու պահուն խորհրդարան կանչուեցայ, սարսափած էի պատժուելու վախէն, որովհետեւ աշակերտները միայն բացառիկ պարագաներու հրաւէր կը ստանային խորհրդարան ներկայանալու, եւ դուրս ելած պահուն, կարմիր եւ ուռած աչքեր կ'ունենային։

Սակայն, տնօրէնն ու բանաստեղծ հիւրը համբոյր անակնկալի մը առջեւ դրին զիս, մէջս վառեցին գրականութեան սէրը եւ անսահման ինքնավստահութիւն ներշնչեցին ինծի։

Այս կանխահաս «շնորհս» թաղուած մնաց մէջս եւ պէտք է սպասէի մինչեւ քսաներկու տարեկան հասակս, երբ «Փարոս» երգիծաթերթի պարապ էջերը բացուեցան առջեւս ու առիթ տուին, որ մշակեմ երգիծական սեռը։

Մինչ այդ, արդէն առաջին կարգի Փութպոլէօր էի, ու աւելին, Լիբանանի կոփամարտի ախոյեան։ Պէտք է ըսել, որ երկու ճիւղերուն մէջ ալ, երկիրի լաւագոյններուն մէջն էի եւ երբեմն... լաւագոյնը։ Մարզական յաջողութիւններուս մէկ մասը կը պարտիմ սրտիս, որ միլիոններու մէջ եզական է, ըստ բժիշկներու վկայութեան։ Մէկ վայրկեանի մէջ, քառասունըվեց անգամ կը զարնէ...

«Փարոս»ի խաւարումով վերջ գտաւ նաեւ գրական գործունէութիւնս։ Գրելու առիթը կը ներկայանար միայն, երբ ծանօթներու համար ստիպուէի սիրային նամակներ գրել, բանաստեղծական շունչով։

Կը մտածէի, թէ քառասունին քաշուած կ'ըլլամ մարզական գործունէութենէ, տեղաւորուած կ'ըլլամ, տեսակ մը վանականի տրամադրութեամբ կը հաւաքեմ մուսաներս, կը կեդրոնանամ ու կը գրեմ։ Քառասունին, հասած կ'ըլլամ հոգեկան թէ մտային հասունութեան, այրած կ'ըլլամ, երկիրներ տեսած, փորձառութիւն ձեռք ձգած, տեսակ մը հեռացած կ'ըլլամ աշխարհիկ կեանքէն։

digitised by A.R.A.R.@

ծիծղ է, փորձառութիւն ձեռք ձգեցի, ապրեցայ, տեսայ, կարդացի, սիրեցի, լսեցի, զգացի, յղփացայ ու հարբեցայ, եթերին մէջ սաւառնեցայ ու ցեխերու մէջ տապլտկեցայ, եւ այն պատրանքը ունեցայ, թէ կեանքիս վայելքի բաժինը սպառեցի։

Ափսո՜ս։ Ապրեցայ, բայց չկշտացայ, կարդացի, բայց դեռ ոչինչ կարդացած եմ, փորձառութիւն ձեռք ձգեցի, սակայն կը զգամ, որ տակաւին ոչինչ գիտեմ։

## ԽԱՌՆՈՒԱԾՔՍ

Աստուած իր պատկերով է ստեղծած մարդ արարածը եւ ես աստուածային ստեղծագործութեան բոլոր ստորոգելիներուն դրոշմը կը կրեմ։ Մէջս կան բարին ու չարը, գեղեցիկը եւ մեղաւորը, նուիրապաշտն ու բանաստեղծը։ Սակայն ինծի պարգեւուած մեծագոյն առաքինութիւնը՝ անկեղծութիւնն է։

Հէնրի Միլլըր կը սքանչանայ Տոսթոյեւսկիի վրայ, ես՝ կը պաշտեմ Հէնրի Միլլըրը, սակայն քաղաքակրթուած գոյապաշտ մըն եմ, սանձուած վայրի նժոյգ մը, որ արգելափակուած է այս ընդարձակ կենդանաբանական պարտէզին մէջ, որ աշխարհն է։

Շատ կը սիրեմ Սայաթ-Նովան, Ազատ Վշտունին եւ Զարենցը, որովհետեւ, եթէ մտածողութեամբ գոյապաշտ եմ, խորքին մէջ ռոմանթիք սիրտ մը կը կրեմ։

Գրականութեան սէրը մէջս հրահրած են Գառնիկ Ս. Դաւիթեանը՝ ութ տարեկանիս, Վազգէն Այգունին՝ տասնըհինգ տարեկանիս, իսկ Պօղոս Սնապեանը՝ երեսունութ տարեկանիս։

Դպրոցի մէջ ուսանելու առիթ չէ տրուած ինծի։ Երկու անգամ վտարուած եմ Սէն Կրէկուարէն, յեղափոխական ըննաւորութեանս պատճառաւ, սակայն ժամանակի ընթացքին կրցած եմ սորվիլ Ֆրանսերէն եւ անգլերէն լեզուները, քիչ մը գրաբար և նոյնքան քիչ՝ իտալերէն։

## ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Պատանի տարիքէս, անմահութեան մասին շատ կը մտածէի, անմահութիւնը կը համարէի կեանքիս առանցքը, միակ երազը, որ կը խանդավառէր հոգիս։ Քսաներկու տարեկանիս, մօրս իմացուցի, թէ ամուսնանալ կ'ուզէի, սակայն միայն երեսունըհինգին էր, որ իրականացաւ երազս։

Երկու տղայ կ'ուզէի ունենալ, բախտը տուաւ ուզածս։ Անձնական տուն մը կ'ուզէի, համեստ պարտէզ մը ունեցայ, ու ամէն անգամ, որ ջուրի խողովակը ձեռք առնէի՝ ծառերս ու ծաղիկներս ջրելու համար՝ անսահման խորհրդածութեան մէջ կը սուզուէի։ Ա՞յս է կեանքը, կը մտածէի։ Առտուն արթընցիր, գործի վազէ, յետմիջօրէին ծաղիկները ջրելու համար գործէն քիչ մը կանուխ պրծէ, դալարը կոխկռտած ըլլալուն համար երեք տարու տղադ ապտակէ, ապա, իրիկունը, հեռատեսիլին առջեւ մրափելէ ետք, քաշկռտուելով գնա՛ ու անկողին մտիր։ Ա՞յս է կեանքը...

Ցանկարծ նշմարեցի, թէ անիմաստ ու աննպատակ գոյութեան մը վերածուած էր կեանքս։ Դարձած էի պզտիկ պուրժուա մը, որ առտուն մեխակներուն կոկոնները կը զննէ աւելի ուշով, տեսնելու համար, թէ բացուելու մօ՞տ են արդեօք, եւ հաւնոցին սատկած ճուտիկ մը շատ աւելի վիշտ կը պատճառէ իրեն, քան բռնակալութեան դէմ բողոքելու համար ինքզինք հրկիզող չեխ ուսանողին մահը։

Խորհրդածութեանց ու խոկումներու այս աղջամուղջին մէջ, յաճախ կը յիշէի Պօղոս Սնապեանի խօսքը, զոր մեր բոլոր հանդիպումներուն կը կրկնէր ինծի. «Ամէն ինչ եւ ոչինչ»։ Սակայն, ատենէ մը ի վեր, աւելի յոռետես դարձած էի եւ ես ինծի կը կրկնէի. «Ամէն ինչ էիր, սակայն ոչինչ ես հիմա»։

Տասնըհինգ տարի առաջ, «Փարոս»ի մէջ տիպար մը ներկայացուցած էի։ Այդ

digitised by A.R.A.R.@

գրութիւնը գրուած էր Սնապեանի ուշադրութիւնը, եւ անկէ ասդին, ամէն անգամ որ հանդիպէինք իրարու, առանց յուսահատելու կը կրկնէր.

— Սա զէվզէկութիւններէն ե՞րբ վազ պիտի անցնիս, ե՞րբ պիտի սկսիս լրջանալ եւ լուրջ բան մը գրել...

Օր մը, երբ դիպուածով «Ազդակ»ի խմբագրատուն գացած էի, Փօղոսը իր սովորական յանկերգը դարձեալ կրկնեց... Ընդունեցի առաջարկը... երեսունութ տարեկան էի: Խոստացայ երկու շաբաթէն բերել պատմուածք մը:

Փորձեցի կեդրոնանալ, անկարելի էր: Միտքս կը պտտէր ծաղիկներու պարտէզին մէջ. մեխակները բացուեցա՞ն, երէկ ճուտիկ մըն ալ մեռաւ, քանի՞ հատ մնացին հաւնոցին մէջ, տղաքս դարձեալ գալարը կոխկռտած են, խոտի ծիլերը պիտի դիմանա՞ն, պիտի չորնա՞ն, թէ վերապրին...

Վերստին փորձեցի կեդրոնանալ եւ դարձեալ հաստատեցի, թէ անկարելի էր...: Հին թուղթերս մէջտեղ հանեցի: Նամակներ, կիսաւարտ վիպակներ, քերթուածներ: Սակայն յարմար բան մը չգտայ: Ժամկէտին երկու օր մնացած՝ Փօղոսը հեռաձայնեց.

— Լրջացա՞ր քիչ մը, ի՞նչ ջուրի վըրայ ես:

Ըսի, թէ պատմուածքը աւարտելու վրայ էր եւ երկու օրէն անպատճառ քովդ կ'ըլլայ:

Հանգիստս խռոված էր:

— Շունչանոյդի բախտ,— կը մտածէի զառնացած,— ուրկէ՞ ինկանք այս զաւակն մարդուն ճիրանը. այսօր գալարն ալ չջրեցինք, պէտք է ճուտիկներուն կեր տալ: Պէտք է ճար մը գտնել...

Հեռապատկերի համար մի քանի զաւեշտներ գրած էի, ներկայացուցած էին երեք տեսակ մարդիկ: Խօսակցութիւններուն վրայ նկարագրութիւններ աւելցուցի, իրարու միացուցի, պզտիկ ներածական մը կցեցի գրութեան եւ յաջորդ օր ներկայացայ Փօղոսին.

— Յուսամ զէվզէկութիւն չկայ մէջը,— հարցուց լուրջ:

— Կարդա՛, կը տեսնես,— պատասխանեցի:

Գրութիւնս երգիծական էր: Կարդաց, երբեմն խնդալով եւ երբեմն մըռթելով: Իբրեւ եզրակացութիւն՝ թուղթը ծալեց եւ դարակին մէջ դնելով՝ ըսաւ.

— Լաւ: Այս ամիս կը տպենք այս մէկը: Անմիջապէս ուրիշ մը պէտք է պատրաստես: Ականջի ետեւ մի նետեր: Երկու ամիսը հատ մը պէտք է բերես, ու քանի մը տարիէն կը տեսնես արդէն, որ բաւական ճամբայ քալած ես:

Յաջորդ ամիս դարձեալ քովն էի, այս անգամ սիրային վիպակ մը շալկած:

— Ի՞նչ բանի մասին է,— յուսամ նախորդին պէս զէվզէկութիւն չկայ մէջը:

«Նախորդի՛ն պէս»: Եթէ զէվզէկութիւն կար նախորդին մէջ, ինչո՞ւ ուրեմն տպեց, ի՞նչ է հետապնդածը արդեօք, մտածեցի վայրկեան մը, եւ նոր բերածիս համար ըսի խռոված.

— Լուրջ գրութիւն է, սիրային:

Կարդաց: Զգացի, որ շատ հաւնեցաւ: Ուրախութեամբ մեկնեցայ:

Ճամբան գտած էի: Այնուհետեւ սկըսայ միշտ գրել: Ու ամէն անգամ, որ պատմուածք մը լոյս տեսնէր իմմէ, բարեկամներ կը շնորհաւորէին զիս, երբեմն նոյնիսկ չհաւատալով, որ ինծի պէս վայրենիին մէկը կրնայ համբերութեամբ այսքան էջեր մրոտել:

Վերջին խրախոյսը եկաւ Եգիպտոսէն: Բ. Թաշեան քանի մը տող գրած էր նաեւ իմ մասիս: Շատ ուրախացայ:

Հիմա բաւական ինքնավստահ դարձած եմ եւ խիզախօրէն կրնամ արտայայտել կարծիքս ու մտածումներս: Խիզախութիւնս կը դաւաճանէ ինծի միայն ա՛յն ատեն, երբ շան մը հանդիպիմ: Փոքր տարիքէս սկսած կը վախնամ շուներէն եւ դեռ մինչեւ այսօր համարձակութիւնս կը կորսնցնեմ ամէն անգամ, որ շուն մը տեսնեմ: Արդեօք երախտագիտութի՞ւնս, թէ շուներու հանդէպ զգացած վախս է պատճառը, որ միշտ պատկառանքով կը մօտենամ... Փօղոսին:

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@



# Իմացական Շարժում

## ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ

«Je ne puis plus lire Faust en allemand, mais dans cette version francaise tout reprend sa fraicheur, sa nouveauté, son esprit.»

GOCTHE

Վազգէն Գէորգեանի «Մատեան ողբերգութեան» հատորէն աշխարհաբարի վերածած հատուածներուն մէկ մասին ծանօթ է ընթերցողը, եւ ամբողջութիւնը տարբեր տպաւորութիւն մը չի ձգեր։ Գեղեցիկ յաղթանակ մը եղաւ այս թարգմանութիւնը, ասոր քննադատ մը պիտի ըսէր՝ «մշակութային մեծ իրագործութիւն մը»։

Ճիշդ է, թարգմանութիւնը բնագրին հետ բաղդատող վստահելի մասնագէտներ (Վարագ Առաքելեան) կարգ մը անճշդութիւններ մատնանշեցին Վազգէն Գէորգեանի թարգմանութեան մէջ, բայց բոլորը մէկ բարձրօրէն գնահատեցին անոր բերած արդիւնքը, որ «Գեղարուեստական կատարումով բարձր է նախորդ թարգմանութիւններէն»։

Գեղարուեստական կատարումով համեմատական առաւելութիւն մը միայն չունի Վազգէն Գէորգեանի թարգմանութիւնը, իր մեծ առկայով անիկա նոյնիսկ համեմատելի չէ նախորդներուն հետ։ Բաղդատութեան համար կարդացած հեռագայ էջերը, ասոնք՝ն իսկ հայհոցով կը հաստատեն վերջինին գերազանցութիւնը։

Գրաբարը անծանօթ չէ մեզի ու գրաբարէն աշխարհաբարի թարգմանուած որեւէ տող, խօսք, տաղ, կամ աստուածաշնչական գրուագ չէ կրցած պահել իր ուժը, համը, անհամ բան մըն է նոյնիսկ աշխարհաբարի վերածած մեր Աստուածաշունչը։ Վազգէն Գէորգեանի գրչին տակ տարբեր եղաւ «Մատեան ողբերգութեան» գործէն փոխադրուած հատուածներուն ճակատագիրը, պայծառ'ու։ Բազմաձայնօրէն, բառախաղ, իր լեզուով բարձրաթռիչ ու ներքին ալեկոծումներով լայնատարած Նարեկացին իր ամբողջական շքեղութեամբ վերանորոգուած է հոս, դարձած է մե՛ր օրերու բանաստեղծ։

Տեղ մը Գէօթէ, իր «Ֆաուստ»ին Ֆրանսերէն թարգմանութեան առթիւ կ'ըսէ.

«Այլեւս կը դժուարանամ «Ֆաուստ»ս կարդալ գերմաներէնով: Կը սիրեմ կարդալ անոր ֆրանսերէն թարգմանութիւնը, ուր ամէն ինչ կը վերստանայ իր թարմութիւնը, իր նորութիւնը, իր իմաստը»:

Նոյնը պիտի ըսէինք մենք «Մատեան ողբերգութեան» հատորէն Վազգէն Գէորգեանի թարգմանած հատուածներուն մեծ մասին համար։

digitised by A.R.A.R.@



# Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

## ԲԱՆ Զ.

### Բ.

Ըստ օրինակի խռովութեան մրրկաց ծովու ծըփեցայ։
Ոչ այնքան սարսեցի եւ պատկառեցի ի սաստկութենէ քումըդ հրամանի,
Որքան ալիք ծովուն՝ յեպերացն։
Ընդ թիւըս չափուց կշռութեան առ իմըս գործոց՝
Եւ աւազոյն կոյտ սահմանեցաւ։
Պակասեաց անբաւիցն չիղք՝
Առ համբարս իմոցս անօրէնութեանց։

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

⁂

Մրրիկներէն խռովուած ծովու նման ծփեցայ։
Չսարսեցայ բնաւ հրամանիդ սաստէն,
Այնքան՝ որքան ծովու ալիքները՝ եպերքներէն։
Չափել աւազներն աւելի հեշտ է,
Քան կշռել անթիւ գործերս մեղապարտ։
Ամբարքն անօրէն իմ արարքներուս՝
Շատ աւելի են քան շեղջակոյտերն անոնց անհամար։

Թարգմ.
ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏՐԱՊԻԶՈՆԻ

digitised by A.R.A.R.@

***

*Ալեկոծ ծովուն պէս ծփուեցայ, ու Քու հրամանիդ սաստկութենէն չարչարուեցայ եւ չքաշուեցայ այնքան, որքան ծովուն ալիքները՝ եզերքներէն. Իմ գործերուս չափին ու թիւին դէմ աւազակոյտեր համրուեցան ու անոնց անբաւ շեղջերը պակաս եկան քան իմ անօրէնութիւններուն գումարը:*

Թարգմ.
ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

***

Ծփացի մրրիկներից յուզուած ծովի նման·
Սարսեցի սաստիկ քո հրամանից ու չպատկառեցի այնքան,
Որքան մեծածուփ ծովի ալիքներն իրենց ափերից:
Իմ գործերի չափն ու քանակը որոշելու համար աւազակոյտը վերջացաւ,
Պակասեցին նրանց անբաւ շեղջերը՝ չափելու կուտակումներն իմ անօրէն
արարքների:

Թարգմ.
ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆԵԱՆ

***

Ալեկոծուեցի խօլ մրրիկներից յուզուած ծովի պէս·
Սարսափեցի հրամաններից քո ահեղասաստ
Դէթ այնքան, որքան ծովի ալիքներն իրենց ափերից:
Գործերիս թուի, չափի ու կշռի համեմատութեամբ՝
Քիչ եղան անգամ կոյտերն աւազի·
Բաւական չեղան նրանց անհատնում շեղջերը նոյնիսկ՝
Բոլոր անօրէն իմ արարքները խաշուելու համար:

Թարգմ.
ՎԱԶԳԷՆ ԳԷՈՐԳԵԱՆ

digitised by A.R.A.R.@

## ԲԱՆ ԻԴ.

### Բ.

Ահա հատաւ եւ կամ խզեցաւ լար կենաց յուսոյն,
Տիրեցայ ի բորոտութեանցըն գարշութենէ համայն ախտացեալ,
Ամենայնիւ սպառեալ ըզմարմինս ապականութիւնըն շրջապատեալ՝
Մեռոյց Աստուծոյ.
Դոյլըն պալար փայլունակ տըգեղ լնացեալ.
Մնացուած ինչ պահեալ նախունակ երկդիմի կերպին,
Որ ըզկրկին անմաքրութիւնն նշանակէ,
Պարծանացն նշոյլ ամենեւին ինձ շիջաւ.
Փրկութիւնն մատնեցաւ, բարին ստուերացաւ,
Ելք կենացն բնաւին փակեցաւ, մխիթարութիւնն բարձաւ,
Դատաստանին ատեան մերձեցաւ, թոյնք մահուն ինձ արծարծեցաւ,
Սպանեալն կրկին ինձ կենդանացաւ,
Լաստին դադարք վիմօք խըցաւ։

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

⁂

Ահա, ուրեմն, ապրելու յոյսին լարը կտրեցաւ եւ կամ խզուեցաւ։
Գարշ բորոտութեամբ ես վարակուեցայ.
Եւ այն փայլունակ, տըգեղ, լնացած պալարին պէս դոյլն՝
Որ կրկնակի (հոգւոյ եւ մարմնի) անմաքրութեան նշան եղող առաջին
Երկդիմի ախտին ըսպին կը պահէ, —
Ապականութիւնը պաշարելով՝ բոլորովին ըսպառեց մարմինս
Եւ մեռցուց կայն Աստուծոյ աչքին։
Պարծանքի նշոյլը բոլորովին շիջաւ ինձ համար.
Փրկութիւնը մատնուեցաւ, բարին ստուերացաւ,
Կեանքին մուտքն յաւէտ փակուեցաւ, մխիթարութիւնը վերցուեցաւ,
Մօտեցաւ ատեանը դատաստանին, մահուան թոյնը մէջս արծարծուեցաւ,
Սպանուածը՝ կրկին մէջս կենդանացաւ,
Լաստին դադարքը քարերով խցուեցաւ...

Թարգմ.
ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏՐԱՊԻԶՈՆԻ

⁂

*Ահա կորուեցաւ, խզուեցաւ կեանքի յոյսին լարը․ բորոտութեանց գարշութիւնը տիրեց վրաս․ մարմինս ամբողջովին ախտաւորուելով հիւծեցաւ, սպառեցաւ․ ապականութիւնը պաշարեց ու մեռցուց զայն Աստուծոյ։ Փայլուն բայց տգեղ, լնացած փոքրիկ պալար մը գոյացաւ վրաս, վերջամնացութիւն առաջին երկդոյն տեսքին, որ կը նշանակէ կրկնակի անմաքրութիւնը։*

digitised by A.R.A.R.@

*Պարծանքի նշոյլը ի սպառ շիջաւ ինձի համար, փրկութիւնը վտանգւեցաւ, բարին մթագնեցաւ, կեանքի աղբերակը բոլորովին փակուեցաւ, մխիթարութիւնը վերցաւ. դատաստանին ատեանը մտեցաւ, մահուան թոյնը արծարծուեցաւ մէջս, ինչ որ սպանուած էր մէջս՝ նորէն կենդանացաւ, նաւահանգիստը մեծ քարերով խցուեցաւ։*

Թարգմ.
ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

***

Եւ ահաւասիկ, ապրելու յոյսի լարը կտրուեց,
Ու վարակուեցի՛ ես բոլորովին գարշ բորոտութեամբ.
Տգեղ, սպիտակ ու փոքր-ինչ փայլող պալարի պէս այն,
Որը կրկնակի մեր անմաքրութեան իբրեւ նշանակ՝
Նախնական ախտի սպին է պահում երկդիմի կերպով,
Ապականութիւնն ինձ պաշարելով՝ սպառեց մարմինն իմ բոլորովին։
Պարծանքի նշոյլը բոլորովին շիջաւ ինձ համար,
Փրկութիւնը վտանգուեց, բարին ստուերացաւ,
Կեանքի դուռն ընդմիշտ փակուեց,
Մխիթարութիւնը վերացաւ,
Դատաստանի ատեանը մտեցաւ,
Մահուան թոյնն արծարծուեց իմ մէջ,
Սպանուածն իմ մէջ կրկին կենդանացաւ,
Նաւահանգիստը քարերով խցուեց։

Թարգմ.
ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆԵԱՆ

***

Կտրուեց լարը ապրելու յոյսի,
Ու վարակուեցի ես ամբողջովին գարշ բորոտութեամբ.
Երեւաց չնչին պալարն սպիտակ փայլուն ու տգեղ,
Երկդիմի կերպով նախնական ախտի հետքերը կրող,
Իբրեւ կրկնակի անմաքրութեան նիշ.
Ապականութեամբ լափուած՝ մարմինս ի սպառ քայքայուեց,
Մահացաւ, մեռաւ Աստուծու համար։
Պարծանքի նշոյլն անհետ չքացաւ,
Փրկութեան յոյսը մատնուեց փորձութեան, բարին խաւարեց.
Կեանքի դուռն ընդմիշտ փակուեց իմ առաջ.
Վերացաւ ամէն մխիթարութիւն.
Մտեցաւ ատեանը դատաստանի.
Մէջս արծարծուեց թոյնը մահաբեր.
Սպանուածն այնտեղ յարութիւն առաւ.
Նաւահանգիստը խցուեց քարերով։

Թարգմ.
ՎԱԶԳԷՆ ԳԷՈՐԳԵԱՆ

digitised by A.R.A.R.@

## ԲԱՆ ՀԱ.

### Դ.

Սաստեա՛ ի ձմեռըն ամբոխեալ ալեաց ոգւոյս ծըփանաց,
Արձանացո՛ ըկծաւալըս մոլեգին շարժման սրտիս խըռովութեան,
Ընդոստնեա՛ ի սանձըս կապոյ երասանաց ըմբռնման
Զցընդեալ մտացս վայրագութիւն։
Եղիցի՛ խաղաղութիւն հրամանաւ մեծից ամենավարան բքոյս սասանման,
Սատակեա՛, խափանեա՛ կըպակմագըլխեան անդամս ուրուականս
Գաղտնեաց ամօթոյս՝ երկրակենցաղս հինից։
Գրեսցես աղօթս մշտամատոյցս պայս նորընծայ տառ ողորմաղերս՝
Թախծագին ձայնի որբերգարկութեան այսր մատենի։
Հա՛ն ի խորոց մահուս անդնդոց՝
Զքնաղ ապրեցեալ ընդ մարգարէին փրկելոյ.
Ընկա՛լ վխոստովանութիւն անձնադատ բանիս ի հոտ անուշից.
Շնորհեա՛ մըխիթար դառնութեան վշտաց ուժգին հեծութեան յուսահատելոյս։

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

⁂

Սաստէ՛ ձմեռուան մէջ խռով ալիքներուն՝ ուր կը ծփայ հոգիս։
Անշարժացո՛ւր վրդովուած սրտիս ծաւալումները մոլեգին յուզման,
Ընդոտնէ՛ ամրապինդ սանձահարումով՝
Վայրագութիւնը ցնդած միտքիս։
Թող խաղաղի՛ մեծիդ հրամանով տատամսումի բուքը սասանող.
Սատակէ՛, խափանէ՛ գաղտնի եւ ամօթալի, ցնորական եւ բազմագլխեան
Անդամներս ամբողջ՝ որոնք հէներ են երկրակենցաղ։
Մշտամատոյց աղօթք նկատէ քեզ նորընծայ տողերն այս ողորմաղերս՝
Որ ողբերգական թախծոտ շեշտերով այս մատեանի մէջ կը գտնուին։
Հանէ՛ զիս մահուան խոր անդունդներէն,
Որպէսզի փրկուած՝ մարգարէին հետ՝ ե՛ս ալ չքնաղ կեանքով վերապրիմ։
Ընդունէ՛ այս խոստովանական անձնադատ խօսքերս իբրեւ անուշ հոտ։
Շնորհէ՛ ըսփոփանք յուսահատածիս ուժգին հեծութեամբ դառըն վիշտերուն։

Թարգմ.
ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏՐԱՊԻԶՈՆԻ

⁂

*Ձեռքովդ սաստէ՛ հոգիիս ամբոխուած ծփանքներուն, դադրեցո՛ւր խռովուած սրտիս մոլեգին շարժման ծաւալումները, պարաւանդող երասաններու կապերով սանձահարէ՛, ընդոստնէ՛ ցնդած մտքիս վայրագութիւնը։ Քու հրամանովդ թող խաղաղի ամէն կողմ տարածուող բուքիս փոթորիկը. սատկեցո՛ւր, ջնջէ՛ բազմագլխի ուրուական անդամները ամօթալի պաղատիքներուն, երկրակենցաղ հէններուն։ Թախծագին երգերու այս նոր եւ գրաւոր ողբաձայնութիւնը նկատէ իբրեւ ժողովի մատուցուած աղօթք մը։ Գերեզմանի խորքէն դուրս հանէ զիս, փրկուած մարգարէին պէս հրաշալի կերպով*

digitised by A.R.A.R.@

*ողջ մնացած։ Ինքնադսրով խօսքերուս այս խոստովանութիւնը ընդունէք իբր անուշահոտութիւն, Մխիթարութիւն շնորհէ յուսահատածիս դառնահեծ վիշտերուն։*

Թարգմ.
ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

⁂

Սաստի՛ր ձեռքովդ խռովայոյզ հոգուս ծփանքները.
Դադարեցրու վրդովուած սրտիս մոլեգին յուզման ծուալումները,
Զսպիր ամրապինդ սանձահարումով վայրագութիւնը իմ ցնդած մտքի,
Թող խաղաղուի մեծիդ հրամանով սասանող քուքը ամենավարան,
Ջնջիր, խափանիր գաղտնի, ուրուային եւ ամօթալի եւ բազմագլխեան
Անդամներս ողջ այդ երկրակենցաղ հէքերին բոլոր,
Համարիր աղօթք մշտամատոյց ողորմաղերս տողերն այս նորընծայ,
Որ ողբերգական թախծագին ձայնով կան այս մատեանում:
Հանի՛ր ինձ մահուան խոր անդունդներից,
Որպէսզի փրկուած՝ մարգարէի հետ վերապրեմ եւ ես գեղեցիկ կեանքով:
Ընդունի՛ր խօսքերն իմ այս անձնադատ խոստովանութեան, որպէս անուշ հոտ,
Շնորհի՛ր սփոփանք դառն վշտերին ուժգին հեծութեամբ յուսահատուածիս:

Թարգմ.
ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆԵԱՆ

⁂

Սաստի՛ր քո ձեռքով ալեկոծումը մրրկայոյզ հոգուս,
Դադարեցրո՛ւ սրտիս ծփանքի
Մոլեգին շարժման ծաւալումները,
Սանձ ու կապերով, երասաններով բռնած ամրապինդ՝
Նուաճի՛ր, զսպի՛ր վայրագութիւնը ցնդած մտքերիս:
Թող հրամանով մեծիդ խաղաղուի
Ամենավարան քուքն այս սասանող.
Ջնջի՛ր, խափանի՛ր ի սպառ ամօթի
Մութ գաղտնիքների անդամներն ահեղ՝
Այդ երկրակենցաղ աւազակների
Բազմակերպարան ուրուականները:
Համարի՛ր աղօթք մի մշտամատոյց
Ողբիս մատեանի այս ողորմաղերս
Նոր տողերը, որ թախծագին ձայնով ընծայեցի քեզ:
Հա՛ն անդունդների խորքերից մահուան
Եւ չքնաղ կեանքով ապրեցրո՛ւ փրկուած մարգարէի պէս.
Ընդունի՛ր սիրով խոստովանութիւնն իմ այս ինքնադատ
Եւ տո՛ւր սփոփանք դառը վշտերով
Ուժգին հեծեծող յուսահատուածիս:

Թարգմ.
ՎԱԶԳԷՆ ԳԷՈՐԳԵԱՆ

digitised by A.R.A.R.@

## ԲԱՆ ՁԲ.

### Զ.

Մի՛ ածեր, ողորմա՛ծ, ինձ օր տարաժամ ի համառօտըս երբի՝
Անթոշակ ապաձեռնութեամբ ընդ անկատար ուղին հետեւել,
Մի՛ մատուցաներ բաժակ դառնութեան՝ ի ժամ ծարաւու.
Մի՛ փակեր, գթա՛ծ, իմ հանդէպ՝ ըկյաջողուած հոգեւոր օգտիս,
Եւ մի՛ իբր յանկարծադէպ հինից ասպատակ՝
Գիշեր մահուն ինձ պատահեսցէ.
Մի՛ տապ տօթոյն յանպատրաստ պահուն վարմատըս հատեալ՝ ցամաքեցուսցէ,
Եւ մի՛ լուսնական դիպուածքըք հասեալ գաղտնեօք վնասեսցեն,
Մի՛ պահեսցի ինձ սառըն մեղացըս,
Եւ մի՛ հոսանք ուղխից կենցաղոյս վիս ողողեսցեն։
Մի՛ հանգիստն մահ բերիցէ,
Եւ մի՛ ննջումնն ի սատակումն յառաջեսցէ։

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

⁂

Մի փութացներ, ողորմա՛ծ, կարճ ատենի մէջ, օրը տարաժամ,
Որ չըլլայ թէ առանց պաշարի ձեռնունայն քալեմ անվերջ ճամբայէն,
Մի՛ մատուցաներ դառնալից բաժակ՝ ծարաւցած պահուս.
Մի՛ փակեր իմ դիմաց, գթա՛ծ, յաջողուածն հոգեւոր օգտիս։
Հէներու յանկարծադէպ ասպատակին պէս
Մահուան գիշերն ինձ թող չպատահի.
Թող տօթագին տապն անպատրաստ պահուն չկտրէ արմատներս ու չչորցնէ։
Ոչ ալ դիպուածները լուսնական գաղտնի հասնելով վնասեն ինծի.
Թող սառը մեղքի ներսս չպահուի,
Ոչ ալ այս կեանքի ուղխերու հոսանքը վիս ողողէ։
Թող հանգիստը մահ չբերէ,
Եւ ոչ ալ ննջումը սատակումի թող առաջնորդէ։

Թարգմ.
ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏՐԱՊԻԶՈՆԻ

⁂

*Ողորմած, խնայէ՛ ինծի յանկարծական օրհասի մահը, որպէսզի անպատրաստ եւ բարի գործերէ ունայնացած չմեկնիմ այս կեանքէն. Ծարաւած պահուս լեղի բաժակ մի՛ մատուցաներ ինծի, Գթա՛ծ. առջեւս մի՛ փակեր հոգեւոր օգուտիս յաջողութեան ճամբան. մահուանս գիշերը ասպատակող յանկարծադէպ հէնի պէս թող չհասնի վրաս. տօթակէզ տապը անակնկալ մէկ րոպէին կարելով չչորցնէ արմատներս, ու լուսնային դիպուածները գաղտ-*

digitised by A.R.A.R.@

*Նայէս հասնելով չմնասեն ինծի, մի՛ թողլ տար որ անէ մնայ մեղքերուս սառոյցը, ու կեանքի յորդ հոսանքները չողողեն վրաս։ Հանգիստը թող մահ չբերէ ինծի, ու ննջումը դէպի սատակում չառաջնորդէ զիս։*

Թարգմ.
ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

⁂

Մի՛ արագացնի, ողորմա՜ծ, կարճ ժամանակում, օրս տարաժամ,
Որ չլինի թէ անպաշար ու ձեռնունայն ընկնեմ ես երկար ու անվերջ ճամբայ.
Մի՛ տար ինձ բաժակ դառնութեամբ լեցուն՝ ծարաւած ժամին.
Մի՛ փակիր իմ դէմ յաջողութիւնը հոգեւոր օգտիս,
Եւ յանկարծադէպ ասպատակների նման տեառր՝
Թող չպատահի մահուան գիշերն ինձ.
Տայր տօթակէզ, անպատրաստ պահին, թող չկտրատի արմատներս
ու չչորացնի։
Ոչ էլ լուսնակաճ դիպուածները թող վրաս հասնելով՝ գաղտնի վնասեն.
Թող իմ մէջ մեղքի սառոյց չպահուի,
Ոչ էլ աշխարհիկ կեանքի ուղխերի հոսանքները ինձ ողողեն, տանեն,
Եւ ոչ էլ ննջը սատակման առաջնորդի։

*Թարգմ.*
*ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆԵԱՆ*

⁂

Մի՛ բեր, ողորմա՛ծ, ինձ օր տարաժամ այնքան շուտափոյթ,
Որ ես անվաստակ ձեռնունայնութեամբ
Անցնեմ այս կեանքիս թերաւարտ ուղին։
Մի՛ մատուցիր ինձ ծարաւիս ժամին դառնալի բաժակ.
Մի՛ փակիր, գթա՛ծ, յաջողութեան դուռն հոգեշահ գործիս,
Եւ թող դարանից յանկարծ դէմ ելնող
Աւազակների ասպատակի պէս
Մահուան գիշերն ինձ վրայ չհասնի.
Թող տօթաշունչ տապն անպատրաստ պահին
Չկտրատի իմ արմատները ու չչորացնի։
Ոչ էլ լուսնոտի ախտով բռնուած գաղտնի վնասուեմ.
Թող մեղքի սառոյց չպահուի իմ մէջ.
Եւ թող այս կեանքի յորդ հեղեղները ինձ չկլանեն.
Թող չպատճառի հանգիստը ինձ մահ,
Եւ ոչ էլ ննջը կործանում բերի։

*Թարգմ.*
*ՎԱԶԳԷՆ ԳԷՈՐԳԵԱՆ*

digitised by A.R.A.R.@

## ԲԱՆ ՁԸ·

### Բ·

Եւ արդ, ընկա՛լ պայս հիւսուած բանի աղիողորմ հեծեծանաց,
Եւ հոտոտեսցի՛ս յայս նուէր բանի անարիւն զոհի, թագաւո՛ր երկնի,
Եւ օրհնեալ սրբեա՛ պտառ մատենի այսր ողբերգութեան.
Եւ զըրեալ դրոշմեսցես յարձան յափտեան
Ընդ հաճոյականացն ըսպասաւորութիւնս:
Պատմեսցի ի յականջս ազգաց եւ քարոզեսցի ի լուր ծողովրդոց.
Նկարեսցի ի դրունս իմաստից
Եւ տպաւորեսցի ի սեամս կզայութեանց.
Կացցէ առաջին քո մշտնջենաւոր, եւ յիշատակեսցի՛ ի լսելիսըդ քո հանապազ.
Բարբառեսցի շրթամբք ընտրելոց քոց
Եւ խօսեսցի բերանովք հրեշտակաց քոց:
... Եւ թէպէտ վախճան ընկալայց իբր կմահացու,
Այլ յարակայութեամբ բանի այսր սոփերի՝ գրեցայց կենդանի:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

⁂

Արդ, աղիողորմ հեծեծանքներով հիւսուած այս խօսքերը դու ընդունէ՛,
Եւ այս բանաւոր անարիւն զոհի նուէրն հոտոտէ՛ս, թագաւո՛ր երկնի:
Օրհնութեամբ սրբէ՛ մատեանի տառերն այս ողբերգութեան,
Եւ գրէ՛, դրոշմէ՛ կանոնք իբր արձան յաւիտենական՝
Քեզի հաճելի սպասարկութեանց հետ:
Թող ազգերու ականջին կրուցուի, ժողովուրդներու ի լուր քարոզուի.
Մտքի դռներուն մէջ թող նկարուի,
Եւ կզայութեանց սեմերուն վրայ թող տպաւորուի.
Թող ան մընայ առջեւդ մշտապէս եւ լսելիքներուդ ինչէ՛ ամէն ժամ.
Թող ընտրեալներուդ շրթներով խօսի
Եւ հրեշտակներուդ բերնով բարբառի:
... Ու թէպէտեւ ես իբր մահկանացու պիտի վախճանիմ,
Բայց այս սոփերի յարամնացութեամբ՝ կենդանի պիտի համարուիմ:

Թարգմ.
ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏՐԱՊԻԶՈՆԻ

⁂

*Ընդունէ՛ ուրեմն աղիողորմ հեծեծանքի իմ այս բանահիւսութիւնը ու անարիւն զոհ մը հոտոտէ այդ բանաւոր նուէրին մէջ, երկնաւոր Թագաւոր. օրհնէ՛ եւ սրբէ ողբերգութեան այս մատեանը ու զայն ըրէ յաւիտենական արժան հաճելի սպասաւորութեան։*

*Թող Քու առջեւդ մշտնջենական ըլլայ անիկա ու շարունակ յիշատակուի լսելիքիդ մէջ. Թող բարբառի՛ ընտրեալներուդ շրթունքներովը եւ խօսուի հրեշտակներուդ բերանովը։ Թող պատմուի՛ սերունդներուն եւ քա-*

digitised by A.R.A.R.@

*բոլոր ժողովուրդներուն, Թող Նկարուի՛ իմացականութեան դուռներուն եւ ապաւորուի զգայութեանց սեմերուն վրայ. այնպէս որ Թէպէտ մեռնիմ իբրեւ մահկանացու, բայց կենդանի պիտի համարուիմ այս գիրքին յարակայութեամբը։*

Թարգմ.
ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

⁂

Եւ արդ, ընդունի՛ր այս ազիողորմ հեծեծանքներով հիւսուած խօսքերը,
Եւ այս բանաւոր անարիւն զոհի նուէրն հոտոտի՛ր, թագաւո՛ր երկնի.
Սրբիր օրհնութեամբ գիրը մատեանի այս ողբերգութեան.
Եւ դրոշմիր գրուածքն այս որպէս արձան մշտնջենական՝
Քեզ համար հաճոյ միւս միջնորդական մաղթանքների հետ:
Թող որ պատմուի ազգերին ի լուր եւ ժողովրդի համար քարոզուի.
Պատկերուի՛ թող որ մտքի դռներին եւ զգայարանքների սեմերին տպուի.
Թող որ նա ընդմիշտ մնայ քո առաջ եւ ականջներիդ հնչի շարունակ.
Եւ շրթունքներով ընտրեալներիդ բարբառի՛ թող նա,
Ու հրեշտակներիդ բերանով խօսի.
Եւ թէպէտ որպէս մահկանացու պիտի վախճանուեմ ես,
Սակայն այս համեստ մատեանովս միշտ անմեռ կը մնամ...

Թարգմ.
ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆԵԱՆ

⁂

Ընդունի՛ր հիւսուածքն այս ազիողորմ հեծեծանքներիս
Եւ այս բանական նուէրն հոտոտի՛ր
Որպէս անարիւն զոհաբերութիւն.
Օրհնութեամբ սրբի՛ր ու մաքրի՛ր ամէն
Տառը մատեանի այս ողբերգութեան.
Վաւերագրի՛ր, հաստատի՛ր, կնքի՛ր
Այն որպէս արձան յաւիտենական՝
Ընտիր ու հաճոյ գործերի կարգում:
Թո՛ղ որ առջեւդ լինի մշտապէս
Ու լսելիքիդ հնչի շարունակ,
Խօսի շուրթերով քո ընտրեալների,
Հրեշտակներիդ լեզուով բարբառի:
...Թո՛ղ որ հռչակուած հասնի ազգերին,
Ժողովուրդներին քարոզուի ի լուր,
Տպուի դռներին բանականութեան
Եւ զգայութեան սեմերի վրայ դրոշմուի ամուր:
... Ու թէպէտ որպէս մի մահկանացու՝ պիտի վախճանուեմ,
Բայց այս մատեանի յարակայութեամբ կը մնամ անմահ...

*Թարգմ.*
*ՎԱԶԳԷՆ ԳԷՈՐԳԵԱՆ*

digitised by A.R.A.R.@

# ԲԱՆ ՂԱ.

## Բ.

Ահա՛ կարկառեմ մատամբքս ձեռինըս
Ըստեառնագրութիւն նըշանիդ ի ժամ գիշերիս,
Որ ոչ մըթանաս խաւարաւ անգիտութեան, ամենեփ՛ն տեսականութիւն,
Քան թէ ի լոյս անմատոյց հանգուցեալ բնակես։
Ընկա՛լ պաղաչողըս վըտանգաւոր գոհաբան
Ընդ պահպանութեամբ թեւոց հզօրիդ,
Փրկեա՛ ի ցնորից եկամուտ պղտորութեանց,
Սուրբ արա՛ պկգայարան հայելեաց սրտիս նըկատմանց,
Ամրացո՛ փայտիւրդ կենաց ի տխրական անրջոց,
Արեամբ քո սրսկեա՛ պշրջարկութիւնըս կայիցս,
Զհետս ելումըտիցն կաքուածով կենարար կողիդ գըծագրեա՛.

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

⁂

Նայէ՛, գիշերուան սա պահուն ահա՛,
Ձեռքիս մատներովը քու նշանիդ տէրնագրութիւնը կը կարկառեմ քեզ՝
Որ անգիտութեան խաւարովը չես մթննար, ո՛վ ամենատես,
Այլ մանաւանդ թէ անմատոյց լոյսին մէջ կը բնակիս, կը հանգստանաս։
Ընդունէ՛ հզօրիդ թեւերուն պաշտպանութեան տակ
Զիս վշտահարս՝ որ կ՚աղաչեմ քեզ գոհաբանութեամբ։
Փրկէ՛ եկամուտ պղտորութեանց ցնորանքներէն,
Մաքրէ՛ կգայարանը տեսողութեան սրտիս աչքերուն,
Փայտովդ կեանքի տխուր անուրջներու դէմ ամրացո՛ւր զիս,
Արիւնովդ սրսկէ՛ շուրջ բոլորն իմ բընակարանիս,
Կենարար կողիդ կաթիլով գըծագրէ՛ ճամբան ելումուտիս։

Թարգմ.
ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏՐԱՊԻԶՈՆԻ

⁂

*Ահա ձեռքիս մատներով կը կարկառեմ սուրբ նշանիդ տեառնագրութիւնը, այս գիշերաժամուն, դէպի Քեզ որ չես մթագնիր տգիտութեան խաւարով, վասնզի ամենատես ես եւ անմատչելի լոյսի մէջ կը բնակիս. Վտանգուած աղաչաւորս իբրեւ գոհաբանող ընդունէ՛ Հզօրիդ թեւերուն պահպանութեան տակ. փրկէ՛ զիս եկամուտ պղտորութեանց ցնորքներէն. սրբէ՛ սըր-*

digitised by A.R.A.R.@

*տես աչքերուն տեսութեան զգայարանը․ կենաց փայտովդ պահպանէ՛ զիս, Տիրական անուրջներէ․ արիւնովդ սրսկէ՛ հանգստարանիս շրջակայ-քը․ կենարար կողիդ կաթուածքովը գծագրէ՛ ելումուտիս հետքերէ։*

Թարգմ․
ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

***

Մթին գիշերուայ այս ժամին տես՛ ձեռքիս մատներով
Նշանիդ տեառնագրութիւնը քեզ եմ կարկառում․
Քեզ, որ ոչ միայն չես մթնում անգիտութեան խաւարով, ո՛վ ամենատես,
Այլեւ անմատոյց լոյսի մէջ ես բնակւում ու հանգստանում:
Աղաչում եմ քեզ գոհաբանութեամբ, ընդունի՛ր դու ինձ,
Ա՛ռ վշտահարիս եզօր թեւերիդ պաշտպանութեան տակ,
Փրկի՛ր դրսից եկող պղտոր ցնորքներից,
Մաքրի՛ր սրտիս աչքերի տեսողութեան զգայարանքը դու,
Կենաց փայտովդ ինձ ամրապնդիր տխուր անուրջների դէմ:
Արիւնովդ սրսկի՛ր բնակարանիս շուրջ-բոլորը,
Կողիդ կենարար արեան կաթիլով գծագրի՛ր ճամբան իմ ելումուտի:

*Թարգմ․*
*ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆԵԱՆ*

***

Կէս գիշերային այս լռութեան մէջ՝
Նշանդ օրհնեալ ձեռքիս մատներով
Քեզ եմ կարկառում, ո՛վ ամենատե՛ս,
Որ անգիտութեան խաւարով երբեք չես աղօտանում,
Այլ բնակւում ես ու հանգչում ես միշտ
Անմատոյց լոյսի ջինջ ոլորտներում:
Գոհաբանութեամբ աղաչում եմ քեզ՝
Ա՛ռ վշտահարիս եզօր թեւերիդ պաշտպանութեան տակ․
Փրկի՛ր ներխուժող խուռնամբոխ պղտոր այս ցնորքներից․
Մաքրի՛ր լիովին զգայարանը սրտիս տեսութեան․
Կենացդ փայտով ամրապնդի՛ր ինձ
Այս տխրաթախիծ անուրջների դէմ:
Արեամբդ ցօղի՛ր իմ կացարանի շուրջն ամբողջութեամբ․
Կողիդ կենարար սուրբ կաթիլներով
Սրսկի՛ր ճամբան իմ ելումուտի:

*Թարգմ․*
*ՎԱԶԳԷՆ ԳԷՈՐԳԵԱՆ*

digitised by A.R.A.R.@

# ՊԵՐԹՐԱՆՏ ՌԱՍԸԼ

●



Ծնած վիքթորեան ազնուականութեան ծոցին մէջ, զաւակը անաստուածեան գաղափարներ ունեցող հօր մը, տառապեալ մօր մը եւ որդեգիրը՝ Ճոն Սթուըրտ Միլի։ Այս բոլորէն զրկուեցաւ, երբ տակաւին 5 տարեկան էր։ Մեծ հայրը, երկու անգամ վարչապետ եղած, Նափոլէոնի հետ բանակցութիւններ վարող պաշտօնական անձնաւորութիւն մըն էր, սակայն 6 տարեկանին Պէրթի, կը կորսնցնէր նաեւ զայն եւ կը մնար իր բարեպաշտ մեծ մօր խնամքին։ Այս կրթուած ծերունին շատ բան կը փորձէր տալ անհանդարտ մանուկին, բայց Պէրթի դժբախտ կը զգար ինքզինք, ու առանձին, ու դժգոհ՝ մինչեւ այն ատեն, երբ գրքերու մտերմութեան հետ կը հաղորդուի նաեւ մաթեմաթիկի վայելքին։

Իր նշանաւոր ինքնակենսագրութեան մէջ կը կարդանք, թէ ինչպէս, առաջին անգամ ըլլալով, 11 տարեկանին, եղբայրը իրեն երկրաչափական խնդիրներ կը բացատրէր եւ ինք մեծ ուրախութեամբ կը լուծէր զանոնք, ցոյց տալով բացառիկ ուշիմութիւն մը։ Ապա զինք կը տեսնենք Քէմպրիճի համալսարանը, իբրեւ ուսանող եւ ապա իբրեւ դասախօս։ Երկար ատեն չի կրնար այնտեղ պահել իր դասախօսի աթոռը, երիտասարդութիւնը զայթակղեցնելու մեղքով կը կորսնցնէ համալսարանի իր պաշտօնը։ Այս առթիւ բազմաթիւ ընկերներ եւս կը լքեն զինք։

Իր կեանքը երկու խոշոր հանգըրուաններ ունի՝ սալոններու, ազնուական շրջանակի մարդը, ապա յանկարծ յեղաշրջուած յեղափոխականը։

Յիսուն տարեկանին, ան արդէն հեղինակ էր մօտ երեսուն հատորներու, յեղաշրջած էր մաթեմաթիկական տրամաբանութիւնը։ Գրած էր ամէն բանի մասին, երկրաչափութենէն մինչեւ բոլշեւիզմի։ Բանտարկուած էր խաղաղութեան ի նպաստ կատարած ցոյցերուն համար։

Երկրորդ յիսնամեակին, շարունակեց մնալ նոյն սկզբունքներուն հաւատարիմ, գրած գրքերուն թիւը հասցնելով յիսունի եւ միաժամանակ գրելով բազմաթիւ նշանաւոր նամակներ՝ ժամանակակից գրչի եւ մտքի մեծերուն։

Մաթեմաթիկոս, գիտնական, իմաստասէր, ընկերաբան, սեռագէտ, քաղաքականութեամբ զբաղուող, նամականի եւ գործնական աշխատանքի մարդ։ Այս բոլորով ան գեղեցկօրէն ինքզինք բնորոշած էր իբրեւ «Վերջին վերապրողը մնացած դարաշրջանի մը»։

Քաղքենի, սալոնի, դեսպանատուներու, լորտերու եւ ազնուականութեան կեանքին ծանօթ Կոմս Ռասըլի ան-

digitised by A.R.A.R.@

ծանօթ չէր եւ փողոցը, ժողովրդային զանգուածներու խռովքները, Թշուառութիւնն ու անօթութիւնը։

## «ՎԵՐՋԻՆ ՎԵՐԱՊՐՈՂԸ՝ ՄԵՌԱԾ ԴԱՐԱՇՐՋԱՆԻՆ»

Մարդ մը՝ զինուած գիտութեան եւ արդի ժամանակներու կարելիութիւններով՝ իջաւ հրապարակ, բողոքի ձայն բարձրացուց մարդկային կեանքի պաշտպանութեան համար, մտաւորական անկախութեան եւ ընկերային անկաշկանդ գործունէութեան համար։

Կուսակցութիւն մըն էր առանձին, իր գաղափարներով, իր աշխարհահայեացքով եւ ապրումներով։ Ընդդիմադրութիւն մըն էր բոլոր մեծ պետութիւններուն դէմ, երբ անոնք կը բռնաբարէին մարդկային խիղճն ու վաճառքի հանել կը փորձէին մարդկային սրբազան սկզբունքները։

Ծնունդով անգլիացի, իր ձգտումներով եւ հեռանկարներով դարձաւ ճըշմարիտ աշխարհաքաղաքացի մը, դարձաւ մէկը ա՛յն քիչերէն, որոնք պատկանելով հանդերձ հին սերունդին, ո՛չ միայն ատելութեան առարկան չդարձան նորերուն, այլեւ պաշտուեցան անոնցմէ, եղան անոնց ընկերային եւ գաղափարական ուսուցիչները։ Հոգիով երիտասարդանալ գիտցաւ, նոր գաղափարներով, նոր ձգտումներով նորոգուեցաւ։

Քաղաքական կեանքին մէջ առաջնորդուեցաւ իմաստասիրական արժէքներով եւ սկզբունքներով. հաւանաբար մարդկային մտքի պատմութեան մէջ հանդիպեցաւ ա՛յն միակ իմաստասէրը, որ կրցաւ տիեզերական ճշմարտութիւններու գործնականացման նուիրել իր ամբողջ կեանքն ու ստեղծագործական ճիգերը։ Եւ տակաւին հաւատացող մը մարդկային տրամաբանութեան անսահման կարելիութիւններուն՝ ան ստեղծեց տրամաբանութեան աւանդութիւն մը, մաթեմաթիկի ճշգրտութիւնները դարձնելով ընկերային կեանքի վեհագոյն ձգտումներու հիմքերը։

## ՍԷՐ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ

Ռասըլի ընկերային եւ սեռային կեանքը կարծէք գործնականացումն է իր քարոզած գաղափարաբանութեան։ Առաջարկեց յեղաշրջել ամուսնական կեանքի ըմբռնուած սովորութիւնը, թելադրելով համալսարանական երիտասարդութեան նախքան պաշտօնական ամուսնութիւնը, առանց որեւէ փոխադարձ պարտադրանքի, ազատ սեռային յարաբերութիւն ունենալ, որոշ փորձառութիւն ձեռք ձգել, նկարագրային յարմարութիւններու փորձի շրջան մը անցընել, յետոյ միայն վերջնականօրէն իրենց ճակատագիրը մէկու մը կապելու որոշում կայացնել։

Որքան ալ քաղաքակրթուած, մարդկային ընկերութիւնները պատրաստ չէին նման արտառոցութիւններ ընդունելու, որովհետեւ անոնց համար, այս կատարուած առաջարկը ո՛չ թէ յառաջդիմութեան քայլ մը, այլ մարդկային արժէքներու, բարոյական չափանիշներու խորտակում մըն էր, որ կրնար մարդը առաջնորդել նախաքաղաքակրթական շրջանի կենդանական-սեռային կեանքին։ Ընկերութիւններ, համայնքներ, այս առաջարկին դէմ ծառացան, բողոք բարձրացուցին, մանաւանդ Ամերիկայի մէջ, ուր ան արձակած էր իր տեսակէտները, սկսան ատել զինք, «սեռային իրէշ» հռչակել, նոյնիսկ դատարան քաշել, ամբաստանել զինք իբրեւ «լկտի, կրքոտ, սեռամոլ, անսանձ, անվստահելի, ճեղմիտ, բարոյականէ զուրկ...» մէկը։

Իր անձնական կեանքին մէջ եւս շարունակեց նոյն արկածախնդրութիւնը։ Չորս անգամ ամուսնացաւ եւ բաժնուեցաւ իր օրինաւոր կիներէն, վիպային շանդալից պատմութիւններով։

Այս փորձառութիւնները, կամ այս ձախողութիւնները զինք մղեցին 1929-ին լոյս ընծայելու «Ամուսնութիւն եւ բարոյականութիւն» գիրքը, որ շատերուն կողմէ նկատուեցաւ ազատ յարաբերութիւններու եւ ծնունդները հակակշռելու ջատագովութեան նուիրուած աշխատանք մը, մինչդեռ այս գիրքը գրեց վերը յիշ-

digitised by A.R.A.R.@

ւած օգտակար հանդիսանալու մտահոգութիւններէն թելադրուած։

Այս բոլորը եթէ միացնենք, կրնանք յանգիլ միակ եզրակացութեան մը՝ — երջանկութեան որոնում։ Այդ երջանկութիւնը գտաւ ամուսնանալով իր վերջին կնոջ հետ, քանհինգ տարեկան, եւ ապրեցաւ անոր հետ ըստ իր խոստովանութեան, ամուսնական արբշռանք մը։

## ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱԽՈՅԵԱՆԸ

Ամբողջ կեանքին ընթացքին, Ռասըլ ունեցաւ բուռն կիրքը իր գոյութիւնը երեք ձգտումներու կեդրոնացումով պարզաբանելու — Սիրոյ որոնում, Գիտութեան եւ զարգացման տիրապետում եւ օգնութիւն՝ թշուառներուն, զրկեալներուն։

Այժմու ընկերաբաններուն նման իր համոզումը եղած էր այն՝ թէ մարդկութեան երեք գլխաւոր թշնամիները եղած են եւ կը մնան՝ Աղքատութիւնը, հիւանդութիւն-մահը, պատերազմը։

Այս հարուստ, ազնուական եւ մինչեւ իր մահը զարմանալի կերպով աշխոյժ ծերունին, չէր կրնար լուռ մնալ և չպայքարիլ այս երեք թշնամիներէն մանաւանդ անոնց դէմ, որոնք մարդկութեան կողմէ ստեղծուած են և զորս կարելի է չքացնել բարի կամեցողութեամբ և համագործակցութեամբ։ Ամբողջ էութեամբ պայքարեցաւ պատերազմներուն դէմ, որոնք կը մղուին ցեղային, կրօնական, ազգայնամոլ կիրքերով եւ տնտեսական ու շահագիտական այլազան նպատակներէ թելադրուած։ Ռասըլ անոնց դէմ պայքարեցաւ իր հարստութեամբ, իմացական եւ մտաւորական ամբողջ զօրութեամբ։ Ո՞վ հանդիպած չէ Ռասըլի նկարին, Լոնտոնի Թրաֆալկար Սքուէրի վրայ, համակիրներու խումբով մը շրջապատուած, ճառախօսելու պահուն։

Իր սիրտը այնտեղ էր, ուր մարդիկ մէկով թէ միլիոնով կը տառապէին, կը մահանային։ Օր մը ձայնը կը բարձրացնէր Քաթանկայի համար, ուրիշ օր մը Գիաֆրայի համար, Վիեթնամի համար։ Վերջերս ան ծառացաւ սովետական իշխանութեանց դէմ, դատապարտելով անոնց հալածանքը գրագէտ Սոլժենիցինի նկատմամբ։ Իր մահուընէ երկու օր առաջ միայն, ան դատապարտեց Իսրայէլեան օդային յարձակումները արաբական երկիրներուն դէմ։ Արդարութեան պատմութեան մէջ անմոռանալի պիտի մնայ իր եւ Սարթրին կողմէ Փարիզի մէջ հաստատուած արդարութեան ատեանը՝ Միացեալ Նահանգները դատապարտելու համար, հաւաքական ոճրային ամբաստանութեամբ։

Քաղաքական եւ ընկերային կարեւոր երեւոյթ մը չկայ, որուն հակազդեցութիւնը դրական կամ ժխտական, չտեսնենք Ռասըլի մօտ, գրիչով թէ արարքով։ Ծանրագոյն գաղափարները արտայայտեց մատչելի գրիչով, հեգնանք դրաւ իր խօսքերուն մէջ, ծաղրեց ազգերու ճակատագիրը վարելու յաւակնութիւնը ունեցող ա՛յն մարդիկը, որոնց «ուղեղները առօրեայ մտահոգութիւններէ անդին չեն կրնար անցնիլ, առանց հոգեկան անհրաժեշտ մեծութիւնը ունենալու, կը պայքարին լոկ ժամանակաւոր իշխանութեան մը համար»։

Իրապաշտ առարկայականութեամբ մը ներկայացուց Մ. Նահանգները, որովհետեւ ապրած էր այնտեղ։ Այցելած էր եւ մօտէն կը ճանչնար Խորհրդային Միութեան եւ Չինաստանի ընկերային-քաղաքական կեանքը։

1961-ին, տուած էր վճիռը մարդկային կեանքը ոչնչացնելու կոչուած մարդոց, որոնք ուրիշ բան չէին ըներ, եթէ ոչ հետապնդել նոյն նպատակը՝ Մարդկութեան վախճանը։

Ծնաւ իբրեւ արդարութեան զինուոր, նահատակուեցաւ պատնէշի վրայ, մարդկութեան դատին պաշտպանութեան պատերազմին մէջ։ Սկսաւ այդ պայքարին, երբ կը գտնուէր 20-ի սեմին, նոյն եռանդով շարունակեց պատերազմիլ բոլոր պատերազմներուն դէմ՝ 97 տարեկան խոր ծերութեան մէջ, երբ փակեց իր աչքերը յաւէտ։

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ

digitised by A.R.A.R.@

## Նոր Գիրքեր



Յ. ԿԱՐԱՊԵՆՑ

# «ԱՆԾԱՆՕԹ ՀՈԳԻՆԵՐ»

ՀԵՂԻՆԱԿ
ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ

Եթէ Կարապենցն իր գրքի համար ընդհանուր խորագիր է ընտրել երկերի այդ առաջին ժողովածուի մէջ զետեղուած պատմուածքներից մէկի խորագիրը՝ «Անծանօթ հոգիներ», ապա պէտք է ենթադրել, որ նա այդպիսի որոշման է յանգել համապատասխան մտորումներից յետոյ։ Եւ ասացնել է յաջող ընտրութիւն։ Այդ պատմուածքի մէջ Փիլովարողը ասում է Սուրէնեանին՝ «Մենակ եմ»։ Միւսը արձագանգելով պատասխանում է՝ «Դու էլ թան ասացիր։ Բոլորս էլ մենակ ենք։ Նայի՛ր այս մարդկանց, այս խելացրեալ ամբոխին, նրանցից իւրաքանչիւրն էլ մենակ է»։ Եւ ահա բոլորի, այսինքն՝ անհատ մարդկանցից իւրաքանչիւրի մենակութեան, ապրող միւս էակներին անծանօթ լինելու զգացումն ու գիտակցութիւնը շարժառում է գրքում երեւան եկող ամէն տեսիլքի մարդկանց։ Գրքի բովանդակութիւնը գերազանցապէս հիւսուած է կեանքի այդ մակարդակի սուսերներով։

Բայց ի՞նչ է դա, արդեօք հեղինակային ըմբռնո՞ւմը, թէ իրականութեան համարժէք արտացոլում։ Մի՞թէ իսկապէս գոյութիւն չունի հասարակութիւնը այդ տարիներու կազմուած է միայն մենակ ու անծանօթ հոգիներից եւ որեւէ շփման կէտ չկայ նրանց միջեւ։ Կարապենցը պատկերում է թէ՝ իւրեւէ ընկերանր հայրենի ափերից արմատախիլ եղած ու Ամերիկա ընկած տարբեր ազգերի պատկանող մարդկանց եւ թէ գրուն ամերիկացիներին կեանքը։ Եթէ հոգեւոր առումով անհրաժեշտ ու անզօր կապութիւնը վերապրում էր միայն տարիքներին, ապա թերեւս հեչութեամբ անվիճելի բացատրութիւն գտնուէր։ Բայց վերագրուածը բառ չափման ընդհանուր է եւ դրանից էլ լուրջ հարց է ծագում, թէ ինչո՞ւ է այդպէս։

digitised by A.R.A.R.@

Գաղտնիք չէ, որ արդի աշխարհի արդէն մասնրում, արդյունաբերականացման ու քաղաքաշինության անմիջական հետեւանքով, ոտքի են ունենում մարդկային զանգուածների անօրինակ կուտակումներ: Եւ այդ համեմատութեամբ էլ կրճատւում է անհատ մարդկանց կենսական տարածութիւնը, մեքենայական է դառնում նրանց առօրեան եւ նսեմանում են նրանց կապող թելերը. այդպիսով հոգիների անծանօթութիւնը մեծագոյն իրականութիւն է դառնում: Կարապետյանը երկար ժամանակից ի վեր ապրում է այդպիսի երկրներից մէկում եւ առաջին հերթին դա՛ է տեսնում ու պատկերում: Անշուշտ, ընդհանրապէս առած՝ «հոգիների անծանօթութիւնը» բոլորովին նոր եւ յատկապէս որեւէ երկրի բնորոշ երեւոյթ չէ, փաստօրէն գոյութիւն ունի մեզ յայտնի աշխարհի սկզբից ի վեր, այս կամ այն համեմատութեամբ, բայց արդի կիսազօրանոցային պայմաններում աւելի զգալի են դառնում նրա յարուցած տուայտալից անպատեհութիւնները: Թերեւս ժամանակի ընթացքում մարդկային ջանքերով դրա ճարն էլ գտնուի եւ իսկապէս տանելի պայմաններ երեւան գան: Արդէն, դրանից անկախ, միշտ էլ բաց հոգիները յարմար ելքը որոնում են լայն աշխարհին ներքին աղիներով կապւելու համար, բայց նրանց թիւը համեմատաբար քիչ է, իրականում գերակշռում են փակ ու լեռցած հոգիները՝ տարբեր պատճառներով: Կարապետյանը այսօրուայ գրող է եւ իր դերն է համարում իր պատկերացրած ձեւով ներկայացնել այսօրուայ իրականութիւնը, առանց քաղաքացիական ու հասարակագիտական կողմնակի մտահոգութիւնների:

Այստեղ հարկաւոր է մի ճշգրտում: Կարապետյանը խօսում է «անծանօթ հոգիների», այլ ոչ թէ «անծանօթ մարդկանց» մասին: Իսկ դրանք նոյնը չեն: Մարդիկ, իրենց արտաքին տուեալներով, անկարող են անծանօթ մնալ, իրականում նրանց հոգեկան հարուստ կամ էլ աղքատ ներաշխարհն է, որ անթափանց է մնում ուրիշների առջեւ, երկար ժամանակ կամ ընդմիշտ՝ ցմահ: Եւ բաժանող պատերը քանդելու անկարելիութիւնը կամ անկարելիութեան զգացումն է յուսահատեցնում շատերին: Իսկ այդ անկարելիութիւնը կամ, նուազագոյն դէպքում, դժուարութիւնը բոլոր դարերի ապրող էակների վիճակ ու անհանգստութեան աղբիւր է ծառայել: Ուրեմն, Կարապետյանի ընտրութիւնը գրական քմայքի արդիւնք չէ, այլ կենդանի պատճառաբանուած կենսական իրողութիւն:

Սրանից էլ բխում է այն հանգամանքը, որ Կարապետյանը զբաղւում է գերազանցապէս մարդկային հոգեկան աշխարհով: «Որեւէ տեղից մինչեւ այստեղ» պատմուածքում՝ առաջին դէմքով պատմող հերոսուհին իր զրուցակից Արտաւին բացատրում է, որ՝ «Կան մարդիկ, որ հողը չեն տեսել եւ, փոխարէնը, հոգիների աշխարհն են ստեղծել իրենց համար»: Թերեւս էլ դրանով կարելի լինի բացատրել ընդհանուր վերաբերմունքը. եթէ հայրենական ամբողջական իրականութիւնը այս կամ այն պատճառով մերժւում է, ապա աշխարհում պէտք է ապրել ու գործել գէթ գոնէ հոգեկան յափանիշներով: Բացի այդ, հենց գուտ հայրենականն էլ վերջին հաշւով վաւերական իմաստ է ձեռք բերում հոգեկան զգացմունքների յաղթական ընթացքով: Դատելով գրքի զանազան տուեալներից, երեւում է, որ Կարապետյանը միակողմանիօրէն, ոմանց նման, չի պարծենում անհայրենիք հողու անապաստան ու «անկաշկանդ» կացութեամբ, չի բացարձակացնում անհող ու անհայրենիք անձի վերացական հոգեկանի արժէքը, այլ համոզուած է, որ հայրենականի հարկադրական բացակայութիւնը երբեք չի նշանակում, այսինքն չպէտք է նշանակի անմիջապէս անձնատուր լինել եւ հրաժարուել ամէն ինչից, ինքն իրենից, այդ թւում եւ ստեղծագործական ծրագրերից:

Պարզ է, թէ ինչու է այդպէս մտածում գրողը: Իր մանկութիւնն ու պատանեկութիւնը հայրենամերձ ադգային միջավայրում անցկացրած ու այդ մթնոլորտով թրծուած Կարապետյանը նոր միջավայր է ընկել արդէն պատրաստի անհատականութեամբ եւ այդ նոր միջավայրը չէ, որ նրան հայ գրող է դարձրել, թէեւ մատակարարել է գրականութեան ամբողջ հում նիւթը: Նա թէեւ կեանքի բերումով ասէթ չի ունեցել լիովին ապրելու այն կենսաթրթիռ հոգեվիճակը, որը հոգեպէս առողջ մարդու մէջ ստեղծում է հայրենական հարազատ իրականութիւնը, օժտուած անըսպառ ուժի աղբիւրներով ու անբացատրելի հպարտութեամբ եւ խակական ազատութեամբ, արնուամենայնիւ, իր անխախտ մնացած խորով եւ գիտակցութեամբ ու աշխարհահայեացքով՝ անպայման կապուած է հայրենական իրականութեամբ պայմանաւորուած արժէքներին: Եւ դա՛

digitised by A.R.A.R.@

է նրան մղում ապրողը, ոտքի պահողն ու ձայն պարգեւողը։

Ուրեմն, այսպիսի պատկեր է ստացւում. Թէեւ ազգային հայրենիքում չծնուած, բայց հայրենական հիմնախարիսխ արժէքները իր մէջ համատարմօրէն կրող, նրանց հանդէպ հաւատ ունեցող հայ գրողը գրականութեան նիւթ է դարձնում օտար երկրի, թէեւ նոյն ժամանակ նաեւ իր առօրեայ կենցաղը պայմանաւորող իրականութիւնը, չհեռանալով այդ իրականութեան որոշակի կողմերի, ոչ թէ մարդկանց առնչական կենսական կապերի ու յարաբերութիւնների, այլ նրանց ներքին զգացումութիւններից բխող անմատչելի ոլորտների, առարկայականութիւնների ու արտայայտումների վրայ։ Պէտք է սկզբից եւեթ ընդգծել, որ Կարապենցը ամբողջական հոգեբանօրէն հիմնաւորուած կերպարներ չի ստեղծում, կամ ստեղծում է շատ աննշան չափով, այդ չէ՝ նրա բնագաւառը։ Ճիշդ է, նա եւս այսպէս կոչուած գրական հերոսներ է ներկայացնում, նրանց խօսել ու գործել տալիս, բայց ամբողջապէս չի մտահոգւում նրանց վարքի ու արարքների հոգեբանական հիմնաւորուածութեամբ։ Երբեմն այն տպաւորութիւնն է ստացւում, թէ մէկի ասածն ու արածը միւսներն էլ նոյն զգացողութեամբ կարող են ասել ու անել։ Դէրերի բաշխում է կատարւում ոչ թէ ըստ խառնուածքի ու բնաւորութեան, այլ մէկնումէկի արտայայտած մտքերի, արտախօսական մտածողութեան։ Կարապենցը իր սեփական կենսափորձը, գէթ նրանց խօսք վերագրեւած վիճակում, կուտակած տպաւորութիւններն ու մտածումներն է, որ արտայայտում է տարբեր մարդկանց շրթունքներով։ Այս երեւոյթը բնաւ առարկելի չէ, այլ գրական որոշակի մօտեցման արդիւնք։

Ի հարկէ, ով որ չգիտէ, թէ Կարապենցն անձամբ ինչ է մտածում իր գրածների մասին։ Բայց գրքի ընթերցումը յարուցում է որոշ տպաւորութիւններ եւ մղում որոշ եզրակացութիւնների, որոնց մի մասը արդէն նշուեց։ Սա կարող է այն տպաւորութիւնը թողնել, թէ քանի որ հեղինակը չի պատկերում այսպէս կոչուած հոգեբանական կերպարներ տիպական հանգամանքների մէջ, ինչպէս ընդունուած է արտայայտուել, ասենք, խորհրդային գրականագիտութեան լեզուով, ուրեմն նրա գրածը չինծու է եւ գրականութիւն չէ։ Մինչդեռ կացութիւնն այլ է։ Դեղարուեստական գրականութիւնը, իր ամբողջութեամբ եւ բառի բուն իմաստով, միշտ էլ չինծու է, իրականութեան անջատ-անջատ հում տուեալների գրական մշակում, այսինքն՝ զանազան տարրերի փոխադարձ յարմարեցում, կապակցութիւն, միահիւսում ու վերջապէս կառուցում։

Արդ, երբ Կարապենցը կեանքը տեսնում է մի այլ մակարդակից, անտեսում երկրային իրական յարաբերութիւնների անմիջական ընթացքը եւ դիմում փաստօրէն ինքնատեսակ ընդհանրացումների անկաշկանդ համակարգի, նրա գրածը դառնում է ուղղակի մի տեսակ գրականութեան գրականութիւն, եղածից մի յարկ բարձրանում։

Սա չի կարելի բացատրել միայն հեղինակի կեանքի անհող ու յարափոփոխ պայմաններով։ Դա նրա գրելաձեւն է, ընտրութիւնը, անհատական ոճը, գրողական հայեացքը։ Մօտաւորապէս նոյն վերացարկային ուղղութեամբ գրելու փորձեր են լինում եւ այսօրուայ Հայաստանում, որոշ երիտասարդ արձակագիրների ու բանաստեղծների կողմից։ Մինչդեռ ամերիկեան միջավայրում Կարապենցից առաջ եւ նոյնիսկ մեր ժամանակ ապրող ուրիշ գրողներ գրել են և գրում են բոլորովին այլ ձեւով, ոճով ու ոգով։ Ուրեմն, այս դէպքում գործ ունենք գրական որոշակի անհատականութեան հետ։ Նա դեռ ուրիշ գրքեր կարող է գրել, թերեւս էլ ինչ-ինչ փոփոխութիւններ մտցնի իր գրելաձեւի մէջ, բայց հիմնականից հրաժարուել չի կարող։ Այդ հիմնականն այսօր երեւում է «Անծանօթ հոգիներ» ժողովածուի բոլոր երկերում, ինչ չափի, բնոյթի եւ որակի էլ նրանք լինեն։

Կարապենցն, արդէն, «Վերջին կայարանը» եւ «Հրեղէն ձին» պատմուածքներում ներկայացնում է մանկական հասարակութիւն, մանուկներ, նոյնիսկ հայ մանուկներ։ Բայց նա ըստ երեւոյթին դրանք գրել է միայն իրեն յուզող հարցերի վերաբերեալ որոշ մտքեր արտայայտելու, մեծի կողմից մեծերի հետ զրուցելու նպատակով, այլ ոչ թէ մանկական իւրայատուկ հոգեբանութիւնը գեղարուեստօրէն մարմնաւորելու եւ մանուկ ընթերցողներին գեղարուեստական նիւթ մատակարարելու համար։ Երեւում է, որ հեղինակի միտքը գրական ուրիշ ոլորտներով է զբաղուած եւ մանուկները պարզապէս արտայայտուելու չարժանացին են, կամ, ասենք, իսկապէս շատ վարպետ եւ հմուտ ձեւով է սկսում

digitised by A.R.A.R.@

[illegible]

«Կերչերս ո՞վ է գնացել Հալիֆախս», «Կարմիր շրջազգեստով կինը», «Այստեղից մինչև յաւիտենականութիւն», «Մի այլ քաղաքում», «Ինչո՞ւ Իթաքան լեռ չունի», «Արեւադարձային քոյլերը» [illegible]

[illegible]

digitised by A.R.A.R.@

րական կեանքում հազիւ թէ այդպիսի համատարած հոգեկան որոնումների համաճարակ իշխի՝ բայց Կարապենցն այդ մթնոլորտն է ընտրել իր գրական կառուցումների համար, կեանքի այդ կողմն է իր ուշադրութեան կենտրոնում պահում, որպէսզի «անծանօթ հոգիների» խորհրդաւոր աներըմբռնելիութեան բաւիղներում կարողանայ շարունակել իր հետախուզումները, եթէ նոյնիսկ յայտնաբերումների յոյս չլինի։ Նիւթի դիմադրութիւնը չի կասեցնում հեղինակի թափն ու յարատեւութիւնը։

Վերջին տարիներին հետաքրքրական է, որ թէեւ մակերեսային լաւատեսութիւնը որեւէ արտայայտութիւն չի գտնում Կարապենցի երկերում, միւս կողմից էլ, նոյնիսկ ամենացաւոտ իրողութիւններ պատկերելու ընթացքում, յոռետեսութիւնը եւս հեռու է մնում նրանից։ Թերեւս դրա պատճառն այն է, որ հրապարակում իրական ողբերգութիւններ ու իսկական տառապանքներ չկան, այլ կան սոսկ անմիջական կամ ուշացած արձագանգներ, խօսքեր այդ մասին, եւ հառաչանքները կրծքի խորքից չեն բխում, այլ գլխից ու լեզուից։ Այսինքն՝ ամէն ինչ արդէն «վաճառուած» արուեստ է դարձել, վերացարկուել, մտային կամ հոգեկան իրողութեան վերածուել։ Յամենայնդէպս, հեղինակը իր հաշուին մնում է բարձրաճաշակ եւ նրան երբեք չի լքում մարդկային բարեմիտ վերաբերմունքը ամէն ինչի, ամէն մի կենդանի էակի հանդէպ։ Նա ակնյայտօրէն մռայլ ու դաժան, չոր տառական նկարագրութիւնների սէր չունի, ցոյց տրուած ողբերգութիւնները անգամ աչքից հեռու են կատարւում եւ այդ մասին յիշեցւում է կամ խորհրդածութիւններ արւում։ Նրա համար կարեւորը հոգիներն են՝ ծանօթ թէ անծանօթ, իրենց առաւելապէս հոգեկան ոլորտով ու հոգեւորով։

Եթէ նայենք ժողովածուի մէջ զետեղուած երկերի գրուելու թուականներին, կը տեսնենք, որ դրանք ընդգրկում են 15 տարուայ ժամանակաշրջան՝ 1952ից մինչեւ 1966 թուականը։ Կը տեսնենք նաեւ, որ Կարապենցը միշտ նոյնը չի մնացել, այլ աճել ու հասունացել է։ Գրքի վերջում ցոյց են տրւում այն պատրաստի երկերի ժողովածուները, որոնք սպասում են հրատարակման։ Նշանակում է, Կարապենցը միայն այն չէ, ինչպէս որ երեւում է «Անծանօթ հոգիներ» անդրանիկ գրքում։ Մաղթենք, որ միւս բոլորն էլ յաջորդաբար տպուեն, որովհետեւ նրանք եւս չեն կարող անշուք ու անհետաքրքրական լինել, եթէ այժմեան գրքի հեղինակի ձեռքը դիպել է նրանց։ Անպայման կազմակերպուած ու հասունացած հեղինակ է Կարապենցը։ Եւ ինչպէս ուշադրաւ գիրք է նրա «Անծանօթ հոգիները», — ինքնուրոյն, բովանդակալից ու ժամանակակից։

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

digitised by A.R.A.R.@

# «ԿՈՐՍՏԱԿԱՆ ԹՈՅՆԵՐ»



ՀԵՂԻՆԱԿ
ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

Տասնեակ տարիներ առաջ տպուած վերջին գրքում («Ես այդ շունն եմ») արդէն լիուլի արտայայտութիւն էին գտել գեղարուեստական մտածողութեան այն տարրերը, որոնք յատկանշական են նաեւ «Կորստական թոյներ»ի գրքում։ Միայն թէ՝ այն ժամանակ հեղինակի կամքով մի յարկի տակ էին մտել բաւական տարաբնոյթ իրողութիւններ ու արտայայտութիւններ եւ դժուար էր միանգամից ամբողջական բնորոշում գտնել ընդհանուր կառոյցի համար։ Այժմ զգալիօրէն տարբեր է կացութիւնը։ Գրքում զետեղուած 17 կտոր ընդհանրապէս կուռ ու ամփոփ երկերը թէ՛ ամբողջութեան մաս են կազմում, բաղնեկից լինելով նրա ընդհանուր հեղինակային առաջադրանքների կատարման գործին, եւ թէ միանգամայն ինքնուրոյն կառոյցներ են, ինքնավար ընթացքով, իւրայատուկ դիմագծով ու գեղարուեստական բնոյթով։

Մի խօսքով՝ տեղի է ունեցել ստեղծագործական ակնյայտ բիւրեղացում եւ այդ իմաստով այսօրուայ գիրքը անկարելի է շփոթել Սնապեանի նախորդ գրքերից որեւէ մէկի հետ։ Սա ակներեւ ուղենիշ հանգրուան է։ Երկար տարիների զանազան ազդակից զբաղումների ընթացքում իրենց տեւաբար զգացնել տուած գեղարուեստական ներքին անանուն որոնումները վերլուծելով որոշակի արդիւնքի են յանգում եւ հեղինակին մտերմօրէն վճռական պահանջներ ներկայացնում։ Հեղինակը ենթարկւում է այդ պահանջներին եւ այն էլ սիրով, քանի որ ինքը ներքուստ վաղուց

digitised by A.R.A.R.@

ի վեր ընկնելու նախապատրաստվածությամբ է այժմյան հայրենասեր պահին, ինքնաբերաբար կենսական ստուգությունները կուտակելով, զանազան լույսեր փայփայել ու կորցրել, որպեսզի վերջապես ճամփորդած գծի վրա կանգնելուց հետո նոր լույսի տակ տեսնի անցյալի մեծ ու փոքր իրադարձությունները։

«Կորստական քայլերը» գիրքը գեղարվեստական երկերի և այն էլ որոշակիորեն չեղյալ արժեք բանաստեղծությունների ժողովածու է։

Ի հարկե, առհասարակ գեղարվեստական երկերը, ինչպես հայտնի է, իրենց տեսակներն ու տարբերություններն ունեն և բոլոր դեպքերում նույնը չեն ու չպետք է նույնը լինեն։ Այս պարագայում էլ Սևակյանի արժեք բանաստեղծությունները թերևս բառացիորեն ամեն ինչով չհամընկնեն ընհանրապես արժեք բանաստեղծությունների կառուցվածքի ու բնույթի վերաբերյալ գոյություն ունեցող բոլոր ընթացիկ պատկերացումներին, բայց և այնպես նրանց գեղարվեստական խորքը ակնհայտ է ու անվիճելի և հենց գրական ստեղծագործության այդ ոլորտի համար ընդունված չափանիշներով է, որ պետք է մոտենալ դրանց։ Ուրեմն, մենք գործ ունենք ստույգ գեղարվեստական ստեղծագործությունների հետ, բայց ինչպիսի՞ գեղարվեստական՝ ահա՛ անմիջապես հաջորդող հարցը։

Երբ խոսվում է արժեք բանաստեղծությունների մասին, դրանով իսկ ենթադրվում է նրանց քնարական բնույթը։ Եվ իսկապես, «Կորստական քայլերը» ծայրէ ի ծայր քնարաշունչ երկերի հաջորդական շարք մըն է։ Քնարական տաղերու դեպքում էլ ենթադրվում է հեղինակի անմիջական ու մտավոր ներկայությունը իր երկերի պատումի ընթացքում, յուզական ու զգացական տարրի միահյուսված գերակշռությունը։ Այդ է՛լ ենք տեսնում ու զգում Սևակյանի գրքում։ Բայց ամեն դեպքում, այդ բոլորի կողքին, ավելի է ընկնում աչքին բնորոշ եւս մի ընդհանուր առանձնահատկություն. հեղինակի խոսքը սկզբից մինչեւ վերջ հիմնված է բացառապես ինքնակենսագրական իրողությունների հիման վրա։ (Դա ապացուցված է ո՛չ միայն նրանով, որ անդրադարձն առաջին դեմքով է պատմվում)։ Հեղինակը գործ չունի ընդհանրապես ստուգ ինչ-ինչ իրի ու երեւույթի հետ, այլ իր քնարական մտորումների առանցքն է դարձնում միայն անմիջապես ծանոթ ու իր կենսքում կամ լինելության մեջ որոշակի հետք թողած իրերն ու երեւույթները, առանց այդ ուղղությունից չշեղվելու որեւէ նկատելի տրամադրությամբ։

Սևակյանի գրքի արժեք բանաստեղծությունների դիպուկ նշանառությամբ ընտրված պարզ վերնագրերը այնպես տեսած օրանայր են և ամփոփ, իմաստալից և թանձրացեալ։ Դա, բառ իս, նրա առանձնություններից է և, պետք է ասել, մտորումների գեղագիտական արդյունավետ հունավորման նախադրյալ։ Ուսանի՝ արտահայտված է յուրաքանչյուր կառույցի ամբողջականությունը ու նաեւ հնարավոր ներգործության ճանապարհը։ Փորձ տալ, հեղինակը ամեն անգամ կանգնում է մի որոշակի, թերեւս էլ ուրիշ առումներով վերցրած բառ առօրեական ու առօրեական կյանքից, պատմությունից, հատուկ մեկից ու ապա միայն ծավալում դեպի յուրահատուկ ու ընդհանուրը, այլ ոչ թե ընդհանրականից՝ մշուշապատ մտորումների դրվում առանձնապահ արտով՝ հանգիստ ու առանձնության պարզեւող բազմալի նպատակակետի ծածկում։ Այստեղ վճռականը կանխադրված որոշումը չէ, բնազդային անկայուն քաղաքեռծելու ձգտումը չէ, ասում եւ իրականում չի ներկայացվում արտակարգորեն լարված ու ողբերգական չէլու։ Տիրականը կենսական առումով ըմբռնելն է, տեղը, ծավալումը, մանրամասնից անխառնափելիորեն տիեզերականի ուղղությամբ շարժումը, նորանոր հագեկան հորիզոնների հետ շփումը, յայտնի եւ հուսատու իրողությունների միահյուսումը եւ, վերջապես, բանաստեղծական համակարգի մէջ դրանց նոր լույսով իմաստավորումը։

Ըստ երեւույթին պատահական չէ, որ Սևակյանը գերազանցապես դիմում է անցյալի եւ արդեն վերջնականապես յուր դարձած իրողությունների ոգեկոչմանը։ Այդ վերաարծարծումները, ու կարելի է յայտարարել անվերապահորեն, ոչ մի ընդհանրություն չունի առօրեական ինքնանպատակ անցողակաության հետ, քանի որ հեղինակը անցյալը վերլիշում է ոչ թե նրա մէջ ինքնամոռաց թափով սուզվելու եւ ընկղմվելու կամ նորից վերապրելու, այլ երբեմնի պահերը այսօրուայ հետ տրամաբանորեն կապելու, այսօրվա մտահոգություններից դիտելու եւ իմաստավորելու միահամայն գիտակցական նպատակով։

Մինչեւ հիմա այդ բանը չէր կարող արվել առանձնակի երկու պատճառով։ Նախ՝ Սևակյանը մշտապես կլանված է եղել բուն բանաստեղծա-

digitised by A.R.A.R.@

կան կալուածից դուրս գտնուող զբաղումներով ու գործել բացառապէս արտաքին աշխարհի օրէնքների թելադրած պայմանների համաձայն, փոխարէնաբար սոսկ՝ մէկ ձեռքով, եւ անցեալի մասին իր ժամանակ չէր կարող արտայայտուել այսօրուայ գեղարուեստական լեզուով ու ոգով։ Բացի այդ, սեփական կեանքի միմեանցից անջատ առանձին դէպքերը չէին կարող նոյն ուժգնութեամբ ցոյցել հեղինակի ներքին էութիւնը եւ անմիջական շարժման մէջ դնել այսօրուայ նման, քանի որ նրանք առաւելագոյն իմաստ են ձեռք բերում ամփոփաբար մարդու կեանքի բոլոր փուլերի ներքին կապը հաստատելուց ու գիտակցելուց յետոյ միայն։

Երրորդ, առանձին դէպքերը ինքնին համարուա՝ թէ բովանդակին նման են իրար եւ սովորական, առարկայական իրականութեան անխուսափելի արտայայտութիւններ, ուստի եւ չեն կարող ամէն դէպքում յատուկ իմաստ պարունակել ու իմաստալից համարուել։ Նրանց իմաստը աւելի կամ պակաս պայծառութեամբ բացայայտւում է ժամանակի ընթացքում, մինչեւ յաջորդող կենսական իրադարձութիւնների շղթայի մէջ, եւ այն էլ միայն իսկապէս բանաստեղծական համակարգ ունեցող էութիւնների ներքին աշխարհներում։

Ուրեմն, բանաստեղծական իմաստաւորումը հանդիսանում է որոշակի՝ արագ կամ դանդաղ հոգեկան խմորումների արդիւնք։ Կենսական փորձի առանձին օղակները, որպէս կանոն, ինքնին նախնական վիճակում ոչինչ չեն յուշում եւ ոչինչ չեն կռահւում։ Բազմաթիւ ու տարատեսակ օղակների շղթան է, որ յայտնաբերում է նրանց ներքոյ նմանութիւններն ու տարբերութիւնները, արժէքաչափն ու պատահականը, ինքնաբուխն ու առօրեականը։ Իւ եթէ ապրող մարդու ներաշխարհում վաղ կամ նորագոյն անցեալի արօղ առանձին իրողութիւններ յատուկ արութեամբ խոր հետք են թողնում, մնում անմոռաց եւ յամառօրէն իրենց ներկայութիւնը զգացնել տալիս, դրանով իսկ ապացուցում են ո՛չ միայն իրենց վաւերականութիւնը, իմաստալից համարուելու իրաւունքը, այլեւ վկայում ընկալող ու պահող բանաստեղծական անհատի հոգեւոր խմորի տեսակի ու խառնուածքի մասին։

Այս հարեւանցի, ընդհանուր կարգի հաստատումներից պարզ էլ կարելի է բացատրել Սեւակխանի կապուած մնալը իր ճանապարհի կենսագրական բնոյթի տուեալներին, նրանցով չափունակ տարբերին ու այժմ ստեղծագործական փորձութեան նիւթ դարձնելը։

Այդ տեսակի նիւթերը ամբողջի այս կամ այն տեսակը չեն կազմում, այլ հենց լրիւ ամբողջն են, համատարած ներկայութիւն ու պարունակութիւն։ Դա, մէկ կողմից՝ ընթերցողի մօտ լաբաղրանքի հաւատարմութեան համոզում է գոյացնում, իսկ միւս կողմից էլ՝ անորոշութեան զգացում, թէ արդեօք իւրաքանչիւր վերյուշւում իսկապէս անցեա՞լ է դրական խառաշութեան շակման բոլոր փուլերից եւ թէ արդեօք հում վիճակում չե՞ն մնացել ինչ-ինչ առօրէական ու երկրորդական մանրամասնութիւններ։

Նոյնպիսի դէպքերում, երբ որեւէ հեղինակ իր ուշադրութիւնը կենտրոնացնում է միայն ու միմիայն կարգուկ երեւոյթների վրայ, անխուսափելիօրէն առկախւում է ընդհանուրի ու ինչ-որ կրկնման վտանգ, վերջին հաշուով լճացում։

Սեւակեանի մօտ այդպիսի վիճակ ստեղծու նչանները չկան, որովհետեւ նրա շարժիչ ուժերն ի սկզբանէ այլ դասաւորութիւն ունեն։

Ստեղծականի սահմանում մնալու պարագայում, նա էլ թերեւս առաւելագոյն դէպքում հասնէր սոսկ այսպէս ասած քնարական մանրանկարչութեան կամ անեկդոտային (կամերային) արուեստի միջնակ յաջողութեան։ Բայց իրականնում ուրիշ պատկեր է ստացւել. բոլոր անձնական նոյն աւելը չի ցանուել, այլ ցանողը նոյնն է, իսկ ցանածները բազմատեսակ եւ բազմարոյը։ Գիրքը առաջին հայեացքից ոչ մեծ, բայց անհեթեթօրէն խնամուած ու բերքառատ պարտէզի տպաւորութիւն է թողնում, եւ դա՛ ոչ առանց հիմքի։ Իմ պատկերացմամբ՝ հեղինակը կարողացել է դրան հասնել հետեւեալ երկու սահմանուած նախադրեալներից չհրաժարուելու շնորհիւ։

Առաջին՝ Սեւակեանը մնացել է մարդկօրնօրէն մասշտաբի կեանքի ոլորտում, իր բանաստեղծական չինանիւթը ընտրել կենսական իրադութիւնների ատաղձից, առանց մտքի մէջ ուրիշ անդրանցելի աշխարհներ որոնելու։ Նրա գրածը անպայման ստեղծագործութիւն է, բայց ինքնահնար յօրինուածք չէ, հետեւաբար չի պարմանաւորուած անհատ հեղինակի սեփական օրապահիկ կենսահիւթի պաշարները սպառուելուց յետոյ

digitised by A.R.A.R.@

մէջ ամայութեան լուրէը պատմելու հարկադրանքով։ Անանձնական կեանքին կապող ճանապարհը սկզբունքով բաց է եւ ազատ, կեանքի հազեւոր ծովից ուղանք վերցնելու կարողութիւնն էլ հեղինակի հետ։

Երկրորդ՝ Սեւակեանը երբեք չի մնացել ներքին ելակէտային սահմանում, սորելու եւ սորելու գիտումով։ Ձերմանդայքին ինքնարաւութիւնը, զատելով գրքի պարունակութիւններից, անյայտ է նրա մտածողութեանը։ Մտածելի գէպքերն ու իրերը արտամարմնորէն կապել է ընդհանրական հասարակութեան ներկայացնող հարցերի եւ վերլինները զարմրել խոհերի բան տառնցքը, այն տարիներ, որ մտածակին չկարել եւ միակ դէպքին ընդհանրականն էր։ Կարելի է ասել, ի հարկէ, թէ այդ սկզբունքը բոլոր երկերում նոյն յաջողութեամբ չի պահպանել, բայց բան սկզբունքը անխախտ ամէնուրեք կատարվելու միջամ է հանդիպացել։

Թէ ինչու եւ ինչպէս Սեւակեանը արուեց ներքին ըմբռնած կատարել եւ հանդիսաւորապէս «Կորստեան քոյնիրը» ճանապարհը բանել, այնինչ իր գրական գործունէութեան նախընթաց ուղիներին եւս մի ուղի աւելացնել՝ գուտ գեղարուեստական ստեղծագործութեան ուղղութեամբ, — պատասխանը բացատրուած է «Սպիտակ թուղթ» ըստ էութեան ներածական երկի մէջ։ Այդ միակողմանի երկխօսութեան մէջ բացայայտուած ինքնաքննադատական արտածութիւնները, խոստովանութիւնները ու խոստումները վերլին հաշուով իրենցից դուրս եւ բարձր նշանակութիւն են ձեռք բերում։ Նրա անբողջական ներքնում են տուեալ ստեղծագործութեան կարեւոր ճանապարհի ընթացքը՝ յայտնելով մինչեւ ասպար, երեւան հանում ստեղծագործող անձին այլատեսակի մշտ հանգամանքները։ Բացի այդ, ծողովածուի ստարանքան «Սեւ թուղթ» երկի հետ միասին, դրանք օգնում են ամբողջ գիրքը, ինքնարտայայտ ընդունողներով հեղինակի գործունէութեան այսօրուայ գաղափարաբանը։

«Սպիտակ թուղթ» բնգում անհանգստութեանը յաճորդում է «Սեւ թուղթ» պատմածած յոգնութեան ու տխրութեանը։ Բայց գա նոյն՝ վաղեմական ժամանակներից չառ-չառանքի ծանօթ անձայր չղթայի հերթական օղակն է պարզապէս եւ վտանգը ընդ մէջ անցած պարզանելու մէջ չէ։ Քանզի իրականում լաւ են եւ անհայտ «Սպիտակ թղթերը» անտանելու պատրաստական, անընդհատ կուտակուող «Կորստեան քոյնիրը» քամելու, նրան ու լուրէը սփոփանք բաշխելու, ընդհանուր ծորակները անխախան պահելու եւ հոգիների փոխայցելութիւնները ապահովելու դարձին է ազատ։ Եթէ առարկայական աշխարհի վերարերեալ գիտութեան յայտնաբերած անպայման հաւասար ճշմարտութիւնները միշտ էլ հերքուած կամ հաստատուած, բայց բոլոր դէպքերում էլ գերազանցուած են ուրիշ «ավելի բախտաւոր» ճշմարտութիւնների կողմից, ապա ուրեմն նոյն ճանապարհով կատարուող յայտնաբերումները վերջնական ու վերջնական չեն եւ անտարակոյս հաստատուելու հարց չի կարող ծագել։ Քանզի հենց մանաւանդ արուեստը առաջարկում կարեւորը ոչ թէ ինչ-որ սահմանագծային ճշմարտութիւնների հասնելն ու դրանք փախուստ բարձ եւ անկողին գործնել է պահելու համար, այլ ասելի վրայ իր բաժին կեանքը, իր հերթին, առաջադրել՝ ուղղի ապրելը՝ ստեղծագործական շարժման ու գործունէութեան մշտարկողն անզուսպուն։

Սեւակեանի գիրքը արդէն հրապարակի վրայ է։ Իրա անում գրքի վերաբերեալ հրապարակումին խօսքը, ի հարկէ, վերացական եւ անկշիռ կը լինի, եթէ միամտաբար գանէ չլսուի, թէ նրա բովանդակութիւն մասերից իւրաքանչիւրը մտադրաց ինչ մտածումներ ու վերաբերմունք է յարուցել։ Ներկայացնող գրքում զետեղուած երկերից ինձ համար գեղարուեստական առումով ամէնից ազատուրէը, անկասկած, «Պորտ» է։ Ամբողջական կերտուածքներ են, անշուշտ, նաեւ «Վերջին վճիռը», «Տունը», «Արեւը», «Բաղաքը», «Ծաղկեցները», «Հայկական տխրութիւնը» եւ ուրիշները։ Այս «ուրիշները» ասում է ոչ թէ որեւէ նկատառումով բոլորը նշելուց խուսափելու համար, քանի որ գիրքն ամբողջութիւն է եւ նրա ստորակարգումն ինձ համար անվիճելի իրողութիւն, այլ որովհետեւ գանազան երկեր ունեն եւ նկատման առանձնայատկութիւններ ու պարտադիր չէ անպայման համապատասխան ցուցակով մէկ գծի վրայ շարելը, իսկ բոլոր առանձնայատկութիւնների վրայ կանգ առնելն էլ այստեղ գործնականում անկարելի է։

Օրինակ, առնենք, միւսներից որակապէս տարբերուող յատուկ երանգ ունեն «Մահից առաջ» ու «Քու Նոր Տարին, մեր Նոր տարին» երկերը,

digitised by A.R.A.R.@

որոնք անտարակոյս հմայիչ եւ բովանդակալից են, բայց կարծես չկայ մեքենայօրէն ամէն ինչով համեմատել միւս բոլորին հետ։ Նոյն առանձնայատուկ ձեւով են ներկայացուած նաեւ գրքի մնացեալը, բայց վերեւում անուն առ անուն յիշուած կտորները։

Քանի որ «Կապուտակի քոյները» հոգեւոր ազնուութեան արդիւնք է եւ քանի որ գործ ունենք գեղարուեստական ստեղծագործութիւններէ, այն էլ արձակ բանաստեղծութիւններէ հետ, երբ իւրաքանչիւր բառի, գծի ու կէտի այս թէ այն ձեւով դրուելը երբեմն ուղղակի վճռական նշանակութիւն է ձեռք բերում եւ գեղագիտական կարգի հարց առաջ քաշում, աւելորդ չէ նաեւ գրքի աչքի ընկնող անկատար կողմերի մասին խօսելը։ Արդէն իր տեղում նշուեց, որ բոլոր երկերը հեղինակային առաջին դէմքով պատումներ են եւ բացայայտօրէն հիմնուած կենսագրական իրողութիւնների վրայ։ Այդ է հեղինակի սկզբունքը եւ ընտրած եղանակը։ Ու դրանում որեւէ անպատեհութիւն չկայ, դա էլ է'ր հմայիչ կողմերն ունի։ Բայց պատումների ընթացքում նկատւում է, որ երբեմն հեղինակը ինքնաբերաբար ուղղակի տարւում է լրացուցիչ ու միջանկեալ «արձանագրային» յիշեցումներով, որոնք պարզապէս խախտում են շարադրանքի այնքան չեշտուած ներդաշնակութիւնն ու կշռոյթը։ Արդ, կուռ եւ ամբողջական գեղարուեստական երկի շրջանակում յիշեալ կարգի միջանկեալ, կողմնակի, առօրէական մանրամասնութիւնները չփոթեցուցիչ արձակունակ տարր են մտցնում քնարական մթնոլորտի մէջ եւ ընթերցողի ուշադրութիւնը ակամայից ցրում։ Այդպիսի ոճական թուլութիւններից խուսափելը ըստ ամէնայնի կը բարձրացնի ստեղծագործութեան կշիռն ու որակը։

Ասելիք կայ եւ «Ճամբաներ» ու «Մառը» կտորների մասին։ Դրանք եւս կառուցուած են միւսների սկզբունքով, այսինքն մի որեւէ թանձրացեալ կէտ ընտրելու եւ ապա այդ կապակցութեամբ խորհրդածութիւնները ծաւալելու ուղիով, բայց իրենց արդիւնքով, ըստ իս, շատ են զիջում մնացեալ երկերին։ Ինչո՞ւ։ Թերեւս նրա համար, որ փորձ է արուել կողք-կողքի դնել բոլորովին տարբեր իրականութիւններ, պարզապէս համեմատել անհամեմատելին, յենուելով փոխաբերական միջի հատուածների վրայ։ Արդէն իսկ «Ճակատագրի» կողմից դատապարտուած անչափ «Ճամբան» եւ բուսական «Ծառը» չէին ինչու մի անգամ եւս դատապարտուած են հեղինակի կողմից, որովհետեւ նրան յիշեցնում են կեանքի ու մարդկային հասարակութեան նոյնանման անհեռանկար ու կաշկանդիչ երեւոյթներ։ Մի անտառ դարձնում են «ազատութեան նախաներ» շնչաւոր ու կամքով զրկուած էակների պայմանական միջերի համար։ Այստեղ անհականալի կերպով իր դերին մէջ չէ հեղինակային մեծահոգութիւնը եւ գեղարուեստական զգաստութիւնը։ Խօսքը բուն շարադրանքի մասին չէ, ոչ էլ վերջնական եզրակացութեան։ Թող դրանք, որպէս նախնական յղացում, այդպէս էլ լինեն։ Բայց ընդհանրապէս տուժել է գեղարուեստական արտայայտութիւնը։ Հանգոյցը չի լուծւում ըստ կենսական նախադրեալների, այլ կամայական, որոշ կանխակալ միտումի պարզ թելադրանքով։

Եւս մի պարագայ։ Մանաւանդ արձակ բանաստեղծութիւնների համար շատ կարեւոր են աւարտական շեշտերը։ Բուն յղացումը փաստօրէն այդ շեշտերի մէջ է արտայայտւում, որոնք կարող են զանազան ձեւեր ընդունել եւ նոյնիսկ ամփոփուել պատշաճօրէն ընտրուած հարցականի ու կախման կէտերի մէջ։ «Կապուտակի քոյներ»ի մէջ, ի հարկէ, այդ ամէնը նկատի է առնուած։ Ու եթէ, ասենք, «Վերջին վճիռը», «Մարիկներ», «Մանա հանա» կտորների աւարտական տողերը պարզապէս երգման պէս են հնչում կամ խոստովանութեան՝ դա նոյնպէս հասկանալի է եւ նրաթին համապատասխան։ Բացի այդ, բնական է, որ երբ քնարական բանաստեղծութիւն է դրւում՝ անխուսափելի են եւ աւարտական այս կամ այն տարածքի մշուշապատ տողերն ու արտայայտութիւնները, քանի որ դրանք եւս մթնոլորտ ստեղծող բանաստեղծական խօսքի բաղադրիչներ են, երբեմն էլ շատ էական։ Բայց պէտք է նշել, որ «Կապուտակի քոյներ»ում լիովին չի յաղթահարուած աւարտական շեշտերի որոշ միօրինակութեան վտանգը, սահմանազատել տարբերակումները միշտ չէ որ յաջող են։ Թերեւս դա այդպէս է ստացուել նրա համար, որ գրքի առանձին երկերը ներքին իմաստով միմեանց շարունակութիւնն են կազմում եւ հեղինակը հարկ չի համարել անպայման ընդգծել իւրաքանչիւր երկի սահմանաբաժան կէտը։ Այդուհանդերձ, քանի որ իրար յաջորդող երկերը նաեւ բոլորովին ինք-

digitised by A.R.A.R.@

նուրբ յղացումներ են, նախընտրելի կը լինէր տպաւորական շեշտերն աւելի շեշտել։

Փօղոս Սնապեանի «Կորսուած բոյներ» գիրքը հանելի գեղարուեստական իրականութիւն է եւ միամտաբար խօսում։ «Սպիտակ բուրդ»ի մէջ կան այսպիսի տողեր. «Պիտի երթամ հիմա ու վերափոխուած հոգիով յայտագրեմ մեր նոր ատորնած։ Ես պիտի ներզում արիւնը պատռած ակօսներուդ ու զուն պիտի խոստանաս կրկին»։ Եթէ ճիշդ է այն տպաւորութիւնը, թէ այդ տողերը չեն վերաբերում միայն լոյս տեսած գըրքին, այլ հիմնական խօսում են նաեւ գալիք բոլոր տարիների համար, եւ եթէ հեղինակն էլ նոյն նշանակութիւնն է տալիս յիշեալ տողերին, — ապա միայն ողջունել կարելի է այդ ըղձակարծային վճիռը։

Սնապեանը գրել է բուն արձակ բանաստեղծութիւնները, իսկ գրքի հրատարակութեանը մասնակցել է նաեւ Գառնիկ Գարզանեանը՝ իր նկարչական ձեւաւորումով։ Հարկաւոր է ողջոյնի խօսք ասել նաեւ նրա հասցէին։ Սրա համար թերեւս շատերը զարմանան, թէ ազատն ի՞նչ է՝ գրքի մի կողք եւ 17 խորագրերի գծագրութիւն, նկարչի համար դա մեծ գործ չէ, այլ ընդամէնը «պարապ վախտի խաղալիք»։ Բայց, այնուամենայնիւ, ողջունել արժէ։ Նախ՝ գրքի այդպիսի խնամուած ու մտածուած նկարչական ձեւաւորումներ յաճախ չեն պատահում, մինչդեռ ցանկալի է, որ գրանային գէթ լիարժեքանհայ անխափան հրատարակութիւնների մշտական ուղեկիցները, վերածուէին ինքնուրոյն մշակոյթի։ Գարզանեանը ըստ էութեան, բառացիօրէն ըմբռնած, չի նկարազարդել Սնապեանի գիրքը, այլ նրա բովանդակութիւնը ուղղակի համադրել ու թարգմանել է նկարչական լեզուի, պահելով քնարական մթնոլորտը, կենսահաստատ մղումները։ Բացի այդ, Գարզանեանը առաջնորդուել է մի ոճական սկզբունքով, որը չի կարող համակրանք չյարուցել շատերի մօտ։

Ահաւասիկ այն ամէնը, ինչ որ հարկ եղաւ նշել նոր լոյս տեսած մի գրքի առթիւ։ Լաւ է, որ այդպիսի գրքեր են տպւում եւ աւելի լաւ կը լինի, եթէ դրանց թիւը շատանայ, ոչ թէ սոսկ անհատական, այլ նաեւ համայնական որակ ու ներկայութիւն դառնալով։ Նաեւ քնարական աշխարհ ներկայացնող գրքերով է, որ մարդկանց ու պատմութեան փորձը փոխանցւում է գալիք սերունդներին։

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

digitised by A.R.A.R.@

## Նշմարներ

# «ԿՈԼԵԿՏԻՒ ՈՒԺԵՐՈՎ»

Հայաստանի թերթերը, եւ մանաւանդ մեր հետաքրքրութեան ծիրին մէջ գտնուող «Գարուն» ամսագիրը երբեք կանոնաւոր ձեւով մը չեն հասնիր Պէյրութ։ Հակառակ մեր բուռն փափաքին, բնաւ առիթ չունեցանք աչքէ անցընելու այս հանդէսին լոյս հատորները։ Վերջերս, այդ մասին բացուած խօսակցութենէ մը ետք, մեր քաղաքը նոր ժամանած երիտասարդ բարեկամ մը յանձնեց մեզի քանի մը հին թիւեր, ի շարս որոնց նաեւ Փետրուար 1969ի համարը, ուր շահեկան բազում գրութիւններու կարգին կար նաեւ «1968ի մեր դափնեկիրները» խորագրեալ խիստ հետաքրքրական գրութիւնը։

Յօդուածը կը սկսի մրցանակներ շնորհող յանձնաժողովի նախագահի տեղակալ Բարգէն Վարդանեանի հետ կատարուած զրոյցով մը, եւ կը շարունակուի ու կ'աւարտի զրուցավար Արամայիս Սահակեանի եւ դափնեկիրներուն միջեւ տեղի ունեցած հարց պատասխաններով։

— Ինչպէս գիտէք, — ասաց ընկեր Վարդանեանը, — Հայաստանի կոմերիտմիութեան կենտկոմը երկրորդ տարին է՝ մրցանակներ է շնորհում գրականութեան եւ արուեստի բնագաւառի երիտասարդ, տաղանդաւոր ներկայացուցիչների, որոնք իրենց ստեղծագործութիւններով որոշակի աւանդ են ներդրել երիտասարդութեան կոմունիստական դաստիարակութեան գործում»։

Կոմունիստական դաստիարակութեան գործում ներդրում կատարած 1968 թուականի դափնեկիրները եղած են՝ արձակագիր Վարդգէս Պետրոսեան, կինոօպերատոր Ալբերտ Եաւուրեան, կոմպոզիտոր Էմին Արիստակէսեան, ջութակահար Ռուբէն Ահարոնեան եւ քանդակագործ Լեւոն Թոքմաջեան։

Բարգէն Վարդանեանի զեկուցումէն կ'իմացուի նաեւ, թէ կոմերիտմիութեան կենտկոմը 1968 թուականի իր յատուկ մրցանակը շնորհած է Եղիշէ Չարենցին, Լենինին եւ Հոկտեմբերեան [illegible] նուիրած անոր գործերուն համար։ «Պէտք է ասել, որ դա [illegible] Չարենցի առաջին մրցանակն է, որի մասին, ցաւօք, նա երբեք չի իմանայ»…։

Թէ՛ կոմունիստական ներդրումները եւ թէ կոմունիստական յարմարած այս ցանկերը առանձին շահեկանութիւն մը չունին անշուշտ, նորութիւնը դափնեկիրներուն հետ ունեցած երիտասարդ բանաստեղծ Արամայիս Սահակեանի ունեցած զրոյցն է, ուսկից ճիշդ՝ «այսպէս կոչուած անձնական բնոյթի» շարք մը հարցերը եւ տրուած կարճ եւ հետաքրքրական պատասխանները։ Ապրող դափնեկիրներուն կարգին, երիտասարդ բանաստեղծը հարցումներ ուղղած է նաեւ նահատակ դափնեկիրին, Չարենցին, որուն «պատասխանները գտան իրենք՝ դափնեկիրները, այսպէս կոչուած՝ «կոլեկտիւ ուժերով», ելնելով չարենցեան բանաստեղծութիւններից։ Չարենցի պատասխանները տպագրում ենք առանձին»։

«Բագին»ի ընթերցողը անմասն չձգելու համար խնդրոյ առարկայ զրոյցէն, հետագայ երկու էջերուն վրայ կու տանք Չարենցին վերաբերող բաժինը։ Եւ որովհետեւ երիտասարդ բանաստեղծին ուղղուած հարցումները եւ տրուած պատասխանները թերի մնացած զրոյցի մը տպաւորութիւնը կը ձգեն, որոշեցինք Չարենցին ուղղել նո՛ր հարցումներ, որոնց պատասխանները գտանք այս անգամ մեր «կոլեկտիւով», մեկնելով դարձեալ չարենցեան բանաստեղծութիւններէն։

digitised by A.R.A.R.@

# Իսկ Այժմ՝

## Եղիշէ Չարենցի Պատասխանները

1.— *Ի՞նչ էք երազել դառնալ եւ ի՞նչ էք դարձել։*

— Իմ հոգին ո՞նց իմանար.
Որ հոսանքը մեր հին գրերի
Իմ հոգու անյաղթ թեւերին
Պիտի բիւր երկինքներ բանայ...

2.— *Մեր երիտասարդութեան ո՞ր գծերն էք հաւանում, ո՞րը ոչ։*

Եթէ ուզեն վար կը բերեն երկինքներից արեգակներ...

3.— *Հիմա ո՞վ է ձեր սիրած գրողը, կոմպոզիտորը, նկարիչը, արտիստը։*

Կայ Մեծարենց, կայ Տէրեան. եւ բազում ուրիշ պոետներ կան,
Բայց Թումանեանն է անհաս Արարատը մեր նոր քերթութեան։
... Սիրում եմ Կոմիտաս, Յասմիկ, Արուս. Թամանեան, Սարեան...

4.— *Ի՞նչ նախադասութեամբ կը բնութագրէք հայ աղջիկներին։*

Եւ Նայիրեան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում։

5.— *Սիրո՞ւմ էք, երբ ձեզ սիրում են։*

Ինչքան որ հուր կայ իմ սրտում բոլորը քեզ.
Ինչքան կրակ ու վառ խնդում — բոլորը քեզ.
Բոլորը տամ ու նուիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնայ,
Դու չմրսես ձմրան ցրտում, — բոլորը քեզ։

6.— *Ո՞րն է ձեր սիրած գոյնը եւ տարուայ եղանակը։*

Սիրում եմ մեր երկինքը մուգ. ջրերը ջինջ, լիճը լուսէ,
Արեւն ամրան ու ձմեռուայ վիշապաձայն բուքը վսեմ...

7.— *Ի՞նչ էք ուզում տեսնել, որ չէք տեսել, ո՞ւմ էք ուզում հանդիպել։*

Փակում եմ յոգնած աչքերս մի պահ
Եւ տեսնում եմ ես, այնքան, այնքան պարզ
Գալիք մի գարուն, վառ մի օր ահա,
Ուզում եմ հանդիպել իմ երազած «Գանգրահեր տղայ»ին,
որը մօտենայ իմ շիրմաքարին.
Նայում է ապա նա փոշոտ քարին
Աղեղանման յօնքերի տակով,
Գրուած է վրան. «Եղիշէ Չարենց,
Բանաստեղծ, ծնուած Մակու քաղաքում»։

digitised by A.R.A.R.@

8.— *Ո՞րն է ձեր սիրած երգը։*

Ամէն տեսակ երգ երգեցի, ամէնից լաւ տաղն է էլի,
Սայաթ-Նովի դրախտային, անմահական խաղն է էլի։

9.— *Ունե՞ք հակառակորդներ։*

Օ՛, դուք, ապետներ չնչին դաւերի,
Ի՞նչ էք ճչփչում ծանկերդ սրած. —
Ես եռզիով հիմա պինդ եմ աւելի,
Աւելի տոկուն, քան էի առաջ։

10.— *Ի՞նչ կենդանի էք սիրում։*

Թռչում են, թռչում են անվերջ, սրընթաց,
Կարմիր նժոյգները, բաշերը փրփուր…

11.— *Ի՞նչն է ձեզ ամէնից շատ հետաքրքրում կեանքում. բնութեան մէջ։*

Օ, գրքերի աշխարհը — տիեզերք է անեզր…
Ես սիրում եմ գրքերի աշխարհը,
Ես սիրում եմ նրանց լաբիւրինթոսը լուռ…

12.— *Առաջիկայ տասնամեակում ինչպիսի՞ն կ'ուզէք տեսնել աշխարհը եւ ձեզ։*

Ես ասում եմ՝ աշխարհը կը դառնայ
Մի եռանուր խնդութեան փողոց
Իսկ ինձ՝
Ես եմ հիմա մի պոետ եւ իմ անունն է Չարենց,
Պիտի վառուի դարերում, պիտի լինի բարձր ու մեծ։

13.— *Բացի հիմնական մասնագիտութիւնից ինչո՞վ էք հրապուրւում կեանքում։*

Լսո՞ւմ ես, մարտիկ լինելուց բացի
Ես էլ քեզ նման մի մարդ եմ եղել…

14.— *Ի՞նչ էք ատում բոլորից շատ։*

Ատում եմ այն,
Որ չի վերացել դեռ կեանքից ներկայ,
Եղկութիւնը՝ մեր խոհերին նստող,
Եւ փոքրութիւնը մարդկային դեռ կայ,
Եւ ոգու, ոգու՝ ճորտութիւնն ստոր…

15.— *Որո՞նք են ձեր երեք ցանկութիւնները եւ ո՞րը կ'ուզէիք շուտ կատարուէր։*

… Առաջին բուռը մեր անեզրական սերմի
Մեր դաշտերի վրայ իբրեւ ցնորք թափէք։
… Դէպի հիւսիս յղէք ձեր շնորհը երկրորդ,
Դէպի տափաստաններն ընդարձակ։
… Իսկ երրորդ բուռը ձեր անհատնելի սերմի
Դէպի լեռան Մասիս սերմանեցէք…

*Հարցագրոյցը վարեց Ա. ՍԱՀԱԿԵԱՆԸ*

digitised by A.R.A.R.@

# Զարենց կը պատասխանէ

## «ԲԱԳԻՆ»ի հարցումներուն

1·— *Երեխայական խանդաղատանքներ ունեցա՞ծ էք բնաւ։*

Երեխայական մի խանդաղատանքով
Ես Ի՛րն ընտրեցի իբրեւ հարսնացու,
Եւ երգս դարձաւ անուշ եւ անբով,
Եւ մոլորուեցի իրերի բանտում,
Եւ գլխիս իջաւ մառախուղը ցուրտ։

2·— *Ի՞նչ կը մտածէք իրենց դասակարգային խանդը բարձրաձայն գոռալով պոեզիա յօրինող պոետների մասին։*

Մի ժամանակ, դժբախտաբար,
Ե՛ս էլ էի այդպէս կարծում.

3·— *Ուրեմն դո՞ւք եւս զուր ժամեր վատնած էք։*

Ինչքա՜ն եմ վատնել ես անգին ժամեր,
Եւ ինչքա՜ն հունտեր ցրել եմ ձրի.—

4·— *Ի՞նչ խորհուրդ կու տաք գրելու արուեստին մասին։*

Սովորի՛ր գրել դու պարզ ու պայծառ,
Ինչպէս այն չքնաղ պոետը զանգուր,
Որի երգերում թէ՛ քողէյ, թէ՛ համր,
Դիւթում են իրենց տոկուն պարզութեամբ,
Թովում են թափով, առնութեա՛մբ արի,—
Սրանո՛վ է նա ահա վիթխարի։

5·— *Ուրի՞շ ի՞նչ արժանիքներ կ'ենթադրէ ճշմարիտ երգը։*

Ի սկզբանէ էր բանը, եւ բանն էր ծիգ ու ջանք,
Եւ ջանքին տարերքն էր երգը։

6·— *Ո՞ւր պէտք է թրծել խոհերը։*

Ոգու, տանջանքի անշէջ հնոցում։

7·— *Մեր ոգին ինչպէ՞ս կ'ըմբռնէք դուք։*

Չի կարող լինել մեր ոգին գերի,
Սերտած խօսքերի, կոտած մտքերի։

8·— *Լենինն քեզի՞ն էր, մուժի՞կը, իր կօշի՞կը, արխատաշ Ալի՞ն, կապկա՞ղը, թէ այս ամէնուն հետ կապ չունեցող ուրիշ ուժ մը, որ իմաստութեան այս աստիճանին հասցուց ձեզ։*

Գտուեց ինձ սիրով մի ձեռք հայրենի,
Ու ես մի գիշեր իմաստուն դարձայ։

digitised by A.R.A.R.@

9.— *Այդ բացարձակ բարձունքին վրայ ձեզի նետուած քարերը վիշտ պատճառեցի՞ն բնաւ ձեր սրտին։*

Չնչին, ինչպէս Արարատին նետուած քար՝
Դաւերը սեւ մարդուկների այս անկար —
Օ, չհասած քղանցքներին անգամ քո՝
Վայր են թափւում համայնացած քո կամքով —
Եւ առյաւէտ կորչում անզօր ու անկար,
Ինչպէս անհաս Արարատին նետուած քար...

10.– *Այսուհանդերձ, այդ անկար մարդուկները իրենց սեւ դաւերով յաջողեցան միաձայնութեամբ վտարել ձեզ Գրողներու Միութենէն։ Այս առիթով եւս սրտի հանգստութեամբ մտածեցի՞ք անոնց մասին։*

Ձեզ համար էք շղթաներ հիւսում
Ամէնից առաջ վտարելով ինձ...

................................

Եւ երբ վտարուած, դուք մի օր նստէք
Ամբաստանութեան աթոռի առջեւ, —
Որպիսի՛ ցաւով պիտի հառաչէք,
Որ բարքերն այդ սեւ, դո՛ւք էք պատուաստել...

11.– *Կը կարծէ՞ք որ այդ սեւ բարքերը պատուաստողը, հին մարդը, քննադատը, մարքսիզմի չատերը, կարմրազգեստ Փիլիստերը, ձեր մշտարթուն դահիճը, չքացած է այսօր։*

Դեռ նա կայ այսօր, դեռ նա կայ,
Եւ յօգնած կամ ռեցենզ գրելիս
Նա սիրում է բառը «հակա»
Չափի՛ց աւելի...

12.– *Ի՞նչ կը մտածէք մեր երկրի բարձրագոյն ու լաւագոյն դիրքերուն կառուցուած մեծ-մեծ ու մեծապատուանդան մոնումենտներուն մասին։*

Քո դատարկ գլո՛ւխն է այդ մարդկանց պատուանդանը,
Յիմարութի՛ւնդ է միայն դարձնում նրանց մոնումենտ:

13.– *Ի՞նչ կը մտածէք «սովետական դար»ուն մասին։*

Ո՛վ կամենում է, որ իր ծնունդից սկսուի այս կեանքը —
Թող իմանա՛, որ իր հետ — այն կը մեռնի յաւիտեան: —

Վերջին հարցումը ուղղեցինք Հայաստանի դափնեկիրներուն ու Չարենցին հետ կրուած բանաստեղծ Ա. Սահակեանին.-

14.– *Ե՞րբ երջանիկ էք դուք եւ ո՞ր պարագաներուն անհնարին է ապրիլ։*

Երջանիկ ենք մենք,
Որ ընկերական հաւաքոյթներում
Աւելի շատ ենք
Հի՛ն, հայրենակա՛ն երգերը երգում:
Ձուլուած գոյների վերաթարմացման
Նո՛ր դար է եկել:
Անհնարի՛ն է մի գոյնով ապրել...

digitised by A.R.A.R.@

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

- ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ (Խոհեր), Կ. Մեհեան, Պէյրութ, 1970:
- ԲԱՆՏԱՐԿԵԱԼԻ ՄԸ ՅՈՒՇԵՐԸ (Յուշեր), Արմէն Սեւան, Պուէնոս Այրէս, 1970:
- ԼՈՒՍԱՇԻԿ ԱՐԵՒԻՆ ՄԷՋ (Բանաստեղծութիւն), Կարիկ Պասմաճեան, Պէյրութ, 1971:

## ՅԱՋՈՐԴ ԹԻՒՈՎ

Կ. ՓՕԼԱՏԵԱՆ

Բ. ԵՂԻԱՅԵԱՆ

Մ. ԷՍԼԻՆ


باكين

مجلة شهرية ادبية وفنية علمية

مدير المسؤول

السيد كركيس قراجيان

BAKINE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

**ԲԱԳԻՆ**

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ՎԱՐԻՉ ԽՄԲԱԳԻՐ
Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՄԲԱԳԻՐ
Գ. ՍՆԱՊԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ
Յ. ԳԵՂԱՐԴ
Տ. ՈՍԿՈՒՆԻ
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ
Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ
† ԵՐ. ՊՕՅԱՃԵԱՆ

Խմբագրութեան հասցէ

**G. SASSOUNI**

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

Հեռաձայնի թիւ 296898

Տպ. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ


digitised by A.R.A.R.@